Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

491.99-8
2-95
3935

716.

716.

22010

291.99-8
2-95
716

Հրատարակութիւն կովկասեան գրավաճառանոցի Զ. Գրիգորեանցի

428
131-ՊՈ

Հ. ՂՈՒԿԱՍԵԱՆՑ

ԴԻԱՍՊՈՐԱ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գ. և Դ. ՏԱՐԻ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Столичная Библиотека
7/XI-1922
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Երրորդ տպագրութիւն

ԹԻՖԼԻՍ
Ի տպարանի Յովհաննիսի Մարտիրոսեանցի
1878

11782

ԳՈՂԻՔՅԱՅՐ

ՄԱՆԿԱՀԱՍԱԿ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ

Дозволено цензурою. Тифлисъ, 17 Іюля 1878 года.

Типографія И. Мартиросіанца, на Орбеліановъ улицѣ, д. № 51

ՑԱՆԿ

Հատուած առաջին. Երես

1. Բանդ արա՛, յետոյ խաղա . . . . . 1.
2. Երկու խոփ . . . . . 2.
3. Առաւօտեան ճառագայթները . . . . . 2.
4. Երկու այծ . . . . . 3.
5. Մարդուս ճանապարհը ցամաքի վերայ . . . . 4.
6. Երեխան դաշտումը . . . . . 4.
7. Լաւ ընկերը . . . . . 5.
8. Երկու ճանապարհորդ . . . . . 6.
9. Հարստութիւն . . . . . 6.
10. Զուր . . . . . 7.
11. Մարդս ինչքան հմուտ է . . . . . 8.
12. Խոնարհամիտ իշխանը . . . . . 9.
13. Քամին ու արեգակը . . . . . 9.
14. Մէկ խնձորենու պատմութիւն . . . . . 10.
15. Ուշկալ ծառան . . . . . 12.
16. Դեղձանիկ ու սոխակը . . . . . 12.
17. Գողի փոքրիկ որդին . . . . . 13.
18. Տապանագիր մանկան . . . . . 13.
19. Անցորդներն ու շունը . . . . . 14.
20. Ինչոր ասես, այն կըլսես . . . . . 15.
21. Առ մայրենի լեզու . . . . . 15.
22. Եկեղեցի . . . . . 16.
23. Ջրի ճանապարհորդութիւնը . . . . . 17.
24. Արաքսի արտասուքը . . . . . 19.
25. Ինչպէս են ճանապարհ գնում զանազան երկիրներում 20.
26. Երգ պանդուխտ պատանեկին . . . . . 23.
27. Ագահութեան պտուղը . . . . . 24.

28. Իջևան . . . . . 24.
29. Դաշտ ու ուսումնարան . . . . . 26.
30. Բարեխիղճ խափշիկը . . . . . 26.
31. Սարից վազող վտակը . . . . . 27.
32. Եղբայր ենք մեք . . . . . 28.
33. Ինչի վերայ են գրում . . . . . 29.
34. Ուսումնարանի աղջիկը . . . . . 31.
35. Ջուր ու ցամաք . . . . . 32.
36. Հովիւ . . . . . 33.
37. Պարտաճանաչութիւն . . . . . 34.
38. Զարմանալի մարդիկ . . . . . 35.
39 Աղբիւր . . . . . 36.
40. Ցերեկ ու գիշեր . . . . . 37.
41. Ծնողասիրութիւն . . . . . 39.
42. Արութիւնի առանձնութիւնը . . . . . 40.
43. Փողն ի՞նչ են անում . . . . . 41.
44. Աղուես ու կատու . . . . . 43.
45. Մարգարիտներ . . . . . 45.
46. Ոչինչ չէ կորչում . . . . . 45.
47. Ինչպէս է մարդս գազանները որսում . . . . . 47.
48. Երկու բարեկամներն ու արջը . . . . . 49.
49. Առանձնութիւն . . . . . 50.
50. Պարսիկ մանուկը և աւազակները . . . . . 51.
51. Ժանտ վուշը . . . . . 52.
52. Ջոկ-ջոկ ու միասին . . . . . 53.
53. Հովիւի արինդը . . . . . 55.
54. Թռչունների խելքն ու սովորութիւնը . . . . . 56.
55. Իտալացի աղջկայ երգը . . . . . 59.
56 Բարեգործութիւն . . . . . 61.
57. Քահանայ . . . . . 63.
58. Անտառ . . . . . 65.

59. Ծառերն ու կացինը . . . . . 66.
60. Սերկեւիլի ծառը . . . . . 67.
61. Ոստիկ . . . . . 68.
62. Արտ և մարգագետին . . . . . 68.
63. Ջուր . . . . . 71.
64. Օդ 74,

Հատուած Երկրորդ

65. Ինչի՞ մեր ազգը Հայ է կոչվում . . . . . 80.
66. Գարնանամուտ 82,
97 Գարուն . . . . . 82.
68. Գարուն . . . . . 85.
69. Ինչով է ստանում խնձորենին . . . . . 86.
70. Արծիւն ու հաւը . . . . . 88.
71. Բոյսերի աճիլը . . . . . 89.
72. Երգ Հայրենի . . . . . 91.
73 Ի՞նչու օտարներն «Արմենս» են կոչում մեզ . . . . . 92.
74. Ամառն . . . . . 93.
75. Առաւօտեան երգ շինականաց . . . . . 99.
76. Թիթեռնակ . . . . . 100.
77. Շուշան . . . . . 102.
78. Էշն ու սոխակը . . . . . 104.
79. Թութակն ու սոխակն . . . . . 106.
80. Աշուն . . . . . 107.
81. Անձրև . . . . . 109.
82. Արտասուող ուռենի . . . . . 112.
83. Աղբիւրակն . . . . . 114.
84. Ձմեռն . . . . . 119.
85. Աղքատ կին . . . . . 122.
86. Ցօղ, եղեամն, ձիւն և կարկուտ . . . . . 123.
87. Անասուններն ու թռչունները ինչ օգուտ են տալիս մարդուն . . . . . 125.

2002

88. Կերակրի աղ . . . . . 128.
89. Տպագրութիւն . . . . . 129.
90. Դրամի քսակը . . . . . 131.
91. Զեֆերսոնի տասը կանոնները . . . . . 132.
92. Բարեկամութիւն . . . . . 133.
93. Բարին ու վատը . . . . . 134.
94. Կրօնաւորը . . . . . 136.
95. Բաժակ փրկութեան . . . . . 137.
96. Մարմիններ . . . . . 139.
97. Կոյրերը . . . . . 141.
98. Քրիստոնէութեան սկիզբը Հայաստանում . . . . . 142.
99. Հայոց գրերի գիւտը . . . . . 145.
100. Մարդու ստեղծումը . . . . . 148.
101. Սարդու մարմինը . . . . . 150.
102. Մարդու սննդառութիւնը . . . . . 157.
103. Հոգու կարողութիւնները . . . . . 163.
104. Մարգարէ . . . . . 166.
105. Ինչով է նման մարդս անասուններին . . . . . 167.
106. Ինչով է գերազանցում մարդս անասուններին . . 168.
107. Հրաշալի պնակ . . . . . 174.
108. Մի բուռն հող . . . . . 175.

005 48

ՀԱՏՈՒԱԾ ԷՈՒԱԶԻՆ

ԲԱՆԴ ԱՐԱ, ՑԵՏՈՒՑ ԽԱՂԱ

Վաղուց նստած էր Մանուկը պատուհանի մոտ՝ իւր դասն էր սերտում, և ոսկի արևը վաղուց էր նորան ասում. «Հերիք չէ՞ կարդաս, մի քիչ էլ խաղա՞ս։ Պատասխան տուաց նորան մեր Մանկիկ. «չէ, դեռ չեմ կարող, սիրուն արևիկ, թող առաջ դասս մի լաւ պատրաստեմ, յետոյ խաղալու նոյնպէս պատրաստ եմ։

Մանուկը գրում ու կարդում էր դասը, իսկ պատուհանի յետևը, ձղնիկի վերայ, վաղուց թռչնակը քաղցր երգում էր. «Հերիք չէ՞ արդեօք գրել սւ կարդալ. չես ուզում մի քիչ էլ զուարճանալ։ Իսկ Մանուկը նորան տուաց պատասխան. «չէ՞, դեռ չեմ կարող, իմ սիրուն թռչնակ, խաղ անելու էլ կը գայ ժամանակ»։

Մանուկը դեռ նստած իւր դասն է սովորում, իսկ պարտիզի միջից կարմիր կեռասը վաղուց է նորան ասում. «Դասդ կարդալուց չ'պրծաՀ միթէ. խաղ անելու միտք չունիս ով գիտէ»։ Մանուկը պատասխան տուաց կեռասին.» Այ, մի երես կայ, մի քիչ էլ սերտեմ, բոլոր այսօրուան դասս կաւարտեմ։

Մանուկը դասերը վերջացրեց, գրակը ծուռ դրեց, գրքերը դարսեց սեղանի վերայ, վազ տուաց պարտեզ ու կանչեց վստահ. «Ոչ էր խաղալու ինձ հրաւիրում, համեցէք, պատրաստ ձեզ եմ սպասում։

Նորա երեսին ժպտաց արեգակը. իւր քաղցրիկ տաղերն սկսեց թռչնակը. կեռասն էլ դէմ տուեց իւր կարմիր թշիկ, որ առնի տղայից համբոյր քնքուշիկ։

ԵՐԿՈՒ ԽՈՓ

Մի և նոյն երկաթի կտորից և մի և նոյն արհեստանոցում շինուած էին երկու հատ խոփ։ Դոցանից մինը գնեց մի երկրագործ և սկսեց գործ ածել նորան. իսկ միւսը երկար ժամանակ ամենևին անօգուտ ընկած էր վաճառականի խանութում։ Պատահեցաւ որ մի քանի ժամանակից յետոյ երկու ընկերները դարձեալ տեսան իրար։ Երկրագործի մօտ եղած խոփը արծաթի պէս պսպղում էր և մինչև անգամ աւելի լաւ էր, քան թէ նոր շինած ժամանակը, իսկ խանութում ընկած անգործ խոփը սևացել ես ու ժանգոտել։ «Ասա խնդրեմ, ինչ դու այդպէս փայլում էր», հարցրեց ժանգոտած խոփը իւր բարեկամից։ «Աշխատելուց, սիրելիս, պատասխանեց միւսը. իսկ եթէ դու ժանգոտել ես և առաջուանից աւելի վատացել, այդ նորանից է, որ այսքան ժամանակ կողքիդ ընկած ոչինչ չես արել։

ԱՌԱՒՕՏԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ

Կարմիր արևը ծագեց և սկսեց ցրուել իւր ոսկեշող ճառագայթները, որ զարթնացնի աշխարհը։

Առաջին ճառագայթը թռաւ ընկաւ ստուտի վերայ։ Ձիները թափահարեց ստուտը, դուրս եկաւ բունից. թռաւ շատ բարձր ու բարձր և սկսեց ծլվլացնել իւր արծաթահնչիւն ձայնով. «օ՜, ինչ լաւ է առաւօտեան զով օդը, ի՜նչ անոյշ է նա, ի՜նչքան հաճելի»։

Երկրորդն ընկաւ նապաստակի գլխին։ Ականջները խլշեց նապաստակը և սկսեց ուրախ-ուրախ վազվզել շաղաթաթախ

կանաչների վերայով, որ հիւթալի խոտ գտնի իւր համար նախաճաշելու։

Երրորդ ճառագայթն ընկաւ հաւաբունը։ Աքլորը ծափ զարկեց թևերով ու գոռաց. ծո՛ւ ղ—ր՛ո՛ւ.—ղ՛ո՛ւ։ Հաւերը ցած իջան թաւերից, կրկչացին և սկսեցին քթուքթ անել աղբահարում ճճիներ ու որդներ գտնելու համար։

Չորրորդն ընկաւ փեթակի մէջ։ Դուրս սողաց մեղուն իւր մոմեղէն տանից, նստեց լուսամտի վերայ, թևերը թափահարեց ու սկսեց բզզալով երգել. յետոյ թռաւ դէպի անուշահոտ ծաղիկները մեղը ժողովելու։

Հինգերորդ ճառագայթն էլ մտաւ մանկանոցը, ընկաւ մի դեռ ևս քնած ծոյլ տղայի անկողնի վերայ, սկսեց ծակծկել նորա աչքերը, իսկ նա շուտ եկաւ միւս կողքի վերայ և կրկին քնեց։

ԵՐԿՈՒ ԱՅԾ

Երկու կամակոր այծ պատահեցան իրար մի նեղ գերանի վերայ, որ կամուրջ էր գցած մի գետակի վերայով։ Երկուսը մի անգամից չէին կարող անցնել նեղ կամուրջով. պէտք էր որ նոցանից մինը յետ կանգնէր ու միւսին ճանապարհ տար։ «Թող ես անց կենամ, ասաց մէկը»։ Ինչ պատուղ է, դու յետ կանգնեա, պատասխանեց միւսը։ «Մի քիչ յետ քաշուիր ասում եմ, առաջ ես եմ բարձրացրել կամուրջի վերայ»։—Ներողութի՛ւն, ես այնքան յիմար չեմ, որ մեծ միրուքով խոնարհուիմ մի ծծկերի, ամենևին»։ Դորանից յետոյ երկուքն էլ ճակատ—ճակատի զարկուեցան պինդ, եղջիւր եղջիւրի դցեցին և բարակ ոտները գերանին դէմ տալով՝ սկսեցին կռուիլ։ Հակառակի պէս գերանը թաց էր, երկու կամակորներն էլ սրլկրհեցան ու թրմփացին ջրի մէջ։

ՄԱՐԴՈՒՍ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՑԱՄԱՔԻ ՎԵՐԱՅ

Ինչքան էլ վազելով լիներ մարդս մանգալես, էլի չէր կարող շատ ճանապարհ կարել. հեռու-հեռու տեղեր գնալ։

Բայց էլ ի՞նչ օրուան համար է խոչք տուել Աստուած մարդուն։ Տեսաւ որ ձին աւելի արագ է վազ տալիս քան թէ ինքը, մտածեց որ հնարք գտնի նորա թիկունքին նստելու. թամքը յարմարեցրեց, սանձը բերանը դրեց ու նստեց վերան, և երբ մի ծանր շալակ ունեցաւ՝ բարձեց ձիուն։ Ցեսայ մտածեց սայլեր շինել անիւներով ու սահնակներ կտներով, և լծեց նոցա մէջ ձիուն։ Էլ վախ չկար մարդուն յօգնելուց, սկսեց նա օրէնը մինչև հարիւր վերստ ճանապարհ կարել։ Այսպէս ծառայեցրեց մարդս ձիուն։

Բայց մենակ ձին հերիք չէր։ Նա հնազանդեցրեց իւր կամքին ուժեղ ու հաստավիզ եզին ու գոմէշին էլ, համբերող ու սակաւապէտ ուղտին էլ, արագավազ եղջերուին էլ։ Բայց այս էլ քիչ էր.—բարձրացաւ մարդը հսկայ փղի մէջքին և ճանճի պէս նստելով այն տեղ, մուրճով թակում էր նորա գլուխը և քշում սիրուն ուզած տեղը։

Մարդս նկատեց, որ հաւասար ճանապարհի վերայով անիւները լաւ ու հեշտ են գլորվում, ուստի և մտածեց շինել քարած հարթ ճանապարհներ։

ԵՐԵԽԱՆ ԴԱՇՏՈՒՄԸ

Մէկ փոքրիկ երեխայ կար, ծնողներն ուղարկեցին նորան ուսումնարան։ Պայծառ ու գեղեցիկ առաւօտ էր, թռչունները երգում էին անուշիկ ձայնով. երեխայի սիրտը փոխուեցաւ և չէր կամենում դասի գնալ, այլ ուզում էր խաղալ։ Զորս կողմը մտիկ արաւ ու տեսաւ, որ մեղրաճանճը թռչկոտում է ծաղկից ծաղիկ։ «Ո՛վ մեղրաճանճ, ասաց նա, եկ մի քիչ խաղանք»։—

«Չեմ ուզում, պատասխանեց մեղրաճանճը, ես ժամանակ չունիմ խաղալու, ես դեռ պէտք է մեղը ժողովեմ։

Մի քանի քայլ որ հեռացաւ երեխան, պատահեց շանը և ասաց նորան. «Ընի՛կ, ընի՛կ, եկ մի քիչ խաղանք»։ Չէ, պատասխանեց շունը, ես ի՞նչպէս խաղամ քեզ հետ, ես պէտք է պահպանեմ իմ տիրոջ տունը՝ որ գող չմտնի»։

Դորանից յետոյ երեխան տեսաւ մի փոքրիկ թռչուն, որ կտուցով խոտ էր կրում իւր բունը։ «Սիրուն թռչնիկ, ասաց նորան երեխան, մի քիչ չխաղա՞նք»։ «Ո՛չ պատասխանեց թռչնակը,— ես ժամանակ չունիմ խաղալու, ես դեռ պէտք է մատուցանեմ, խոտ, բուրդ հաւաքեմ՝ որ բունս շինեմ»։

Երեխան հեռացել սկսում էր ձանձրանալ, նորա հետ խաղացող չկար։ Նա տխրած վազեց առուի մօտ՝ որ քչքչալով հոսում էր մօտիկ անտառից։

«Ինչպէս տեսնում եմ՝ դու գործ չունիս անելու, ասաց երեխան առուակին, եկ մի քիչ խաղանք ես ու դու»։

«Ո՞վ չունի գործ, բարկացած պատասխանեց առուակը,— ծոյլ-ծոյլ տղայ։ Չե՞ս տեսնում, որ ես զիշեր ցերեկ գործում եմ անդադար։ Ո՞վ է ջուր տալիս կենդանիներին, ո՞վ է լուանում կտաւիքը, ո՞վ է պտեցնում ջրաղացի անիւները, ո՞վ է հանգցնում հրդեհները, եթէ ոչ ես։ Տեսնո՞ւմ ես, որ ես մի րոպէ էլ ժամանակ չունիմ, ուրեմն ձեռք վեր առ գնա»։

ԼԱՒ ԸՆԿԵՐԸ

Մի բանաստեղծ ասում է. «Ման էի գալիս և տեսայ ոտքիս տակ ընկած մի կիսաչոր վայրի ծաղիկ. կռացայ առի և հոտոտեցի, նա անուշահոտ էր վարդի նման։

«Միթէ դո՞ւ ես վարդը, հարցրի ես նորան։

—Ո՛չ, ես վարդը չեմ պատասխանեց ծաղիկը, այլ մի քանի ժամանակ ապրել եմ նորա հետ մի փունջի մէջ։

ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Երկու ճանապարհորդ միասին գնալիս իջևանեցին մէկ հիւրանոցում։ Գիշերը նորանց զարթեցրեց մի աղմուկ. տեղեկացան որ գիւղումը հրդեհ է պատահել։ Ճանապարհորդներից մինը սկսեց շտապով հագնուիլ, որ գնայ օգնելու, միւսը յետ էր պահում նորան ասելով. «գնանք մեր ճանապարհը, այստեղ առանց մեզ էլ մարդ շատ կայ»։ Իսկ ընկերը չլսեց նորան և վազեց դէպի այրուող տունը։ Տան առաջ, որ չորս կողմից արդէն կապուած էր բոցերով, կանգնած էր մէկ կին և աղաղակում էր։ «Ո՞հ, երեխա՛յ-քս, երեխա՛յ-քս»։ Այս սրտակուռ ձայնը լսելով՝ օտարականը ներս վազեց կրակի մէջ. չնայելով բորբոքուած բոցերին ու փլուող գերաններին։ «Նա կորա՜, այո՛, նա կորաւ», գոչում էին շատերը. բայց մի րոպէից յետոյ օտարականը դուրս եկաւ կրակի միջից խանձած մազերով ու շորերով. նա ձեռքումն ունէր երկու փոքրիկ երեխաներ, որոնց նա տուեց հեկեկող մօրը. Թշուառ կինը առաջ դեռ գրկեց իւր զաւակներին, կարծես թէ չըհաւատալով, թէ նոքա կենդանի են, իսկ յետոյ ընկաւ օտարականի ոտներն։ Այդ իսկ րոպէին փուլ եկաւ այրուող տունը։

—Ո՞վ էր հրամայում քեզ մի այդպիսի յիմար գործ անել։ Հարցրեց օտարականին նորա ընկերը։

—Արակի Տէրը, պատասխանեց քաջասիրտ մարդը, որ է և տան Տէրը, երեխաների Հայրը և Փրկիչը։ Նա իմ սրտի մէջ ասաց, «գնա՛,» և ես կատարեցի միայն նորա կամքը։

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Մէկ չքաւոր երիտասարդ հանդիպեց իւր նախկին ուսուցչին և սկսեց շատ գանգատել իւր դառն վիճակի ու անյաջողութիւնների վերայ։ Մի ժամանակ նա եղած էր ուսում-

նարանի ամենալաւ աշակերտը և իրանից աւելի վատ ուսանողներն այժմ լաւ անուան ու հարստութեան տէր էին, այնինչ ինքն անց էր կացնում թշուառ կեանք՝ «Մի՞թէ յիրաւի ասածիդ չափ աղքատ ես դու, ասաց նրան ուսուցիչը.» դու, ինչպէս տեսնում եմ, առողջ ես. այդ ձեռքը, շարունակեց ուսուցիչը, բռնելով իւր աշակերտի աջը, ուժեղ է և կարող է գործել։ Թոյլ կայլիր արդեօք, որ կորեն դորան հազար մանէթով։ —Ասուած հեռու տանէ, և ո՛չ տասն հազարով։—«Իսկ ո՞ր քանով կայիր քո սրատես աչքերը, որ տեսնում են լոյս աշխարհը,—քո սուր ականջները, քո արագաշարժ ոտները։ Կարծեմ դու չէիր փոխել դորանց մի ամբողջ թագաւորութեան հետ։»—Ի հարկէ ոչ, պատասխանեց երիտասարդը։— «Ուրեմն ի՞նչպէս ես գանգատում դու քո աղքատութեան վերայ, երբ որ ունիս այդպիսի մեծ հարստութիւն։

ԶՈՒԻ

Արամը գնաց իրանց գիւղի գետակի մօտ, որ հոսում էր անտառի կողքով։ Գալունքին անտառումն ու դաշտում շատ ձիւն կար, ձիւնը հալուել ու ջուրը վտակ-վտակ թափուել էր գետի մէջ, գետն էլ բարձրացել ափերովն էր անցել։ Իսկ այժմ չոր ու ցամաք ամառն էր, գետակը համարեա թէ կարելի էր անց կենալ ոտներն անգամ չթրջելով։ Զրի փոքրիկ քարերն անգամ երևում էին։ Արամը շատ զարմացաւ այս բանի վերայ և ինքն իրան մտածում էր. «ուր կլինի գնացած այնքան ջուրը»։

Նայիր, Արամ, երկնքի վերայ։ Ի՞նչ ես կարծում, որտեղից կլինին հաւաքուած այն ամպերը։ Թէ որ նոքա կարողանային խօսիլ, կպատմէին քեզ, որ նոքա գողրշնալով բարձրացել են լճակներից, հեռու-հեռու գետերից, ծովերից և ու-

բիշ ջուրերից. նորանց քշել բերել է այնտեղ քամին. կարամէին նոյնպէս, թէ ինչքան շատ բաներ են տեսել ճանապարհին։ Ահա կը միանան այն ջուկ-ջուկ ամպերը մի տեղ, ունքերը կը կիտեն, կսկսեն ցած անձրևել, և երկինք պնացած ջուրը նորից-նոր կթափուի լճերի, գետերի ու ծովերի մէջ, կժողովուի ամեն մի ցածր տեղում։

ՄԱՐԴՍ Ի՛ՆՉՔԱՆ ՀԱՄՈՒՏ Է

Պատաղի գազանը որջ է շինում իւր համար անտառի մէջ. թռչունը բուն է շինում, պստիկ պզսձն էլ տեղ է գտնում ծառի որ և է ճեղքի մէջ։ Բայց նորանց ամենքին էլ պաշտպանում է ցրտից մեկին իւր բուրդը, միւսին փետուրները, մեկէլին ամուռ պատեանը։ Մարդը գնում է անտառ փայտ կտրում ու խրճիթ շինում իւր համար։ Հողի մէջ նա երկաթ գտաւ, որից շինում է կացին, բահ, խոփ։ Նա կարողացաւ կաւից աղիւս շինել ու զանազան ամաններ։ Տան պատերը պինդ պնդացրեց, բոլոր ծակ ու ծուկը կալաւ, որ ցուրտ չլինի։ Տաք եղաւ տունը, բայց լոյս էլ էր հարկաւոր։ Նա գտաւ սարերում թափանցիկ քարեր, կամ թէ չէ, հալեց աւազը և դոցանից ապակի թափեց, որ պատուհաններ շինի, տան մէջը մութ չլինի։ Սակայն այս էլ հերիք չէր,—մարդս ի՛նչպէս տանից դուրս գնար վատ եղանակին։ Ահա նա ցանեց վուշ, կանեփ, բամբակ. թել մանեց նոցանից և կտաւ, չիթ գործեց. խուզեց ոչխարի ու այծի բուրդն էլ և մահուդ պատրաստեց նորանից. գազանի մորթին նոյնպէս շորի տեղ բռնեց նորա համար։ Այսպէս, մարդս կարողացաւ և կարող է օգնել իրան ամեն մի փորձանքի մէջ իւր խելքովն ու հմտութեամբը։

ԹՈՆԱՐՀԱՏԻՍ ԻՇԽԱՆԸ

Մի իշխան կանգնած խօսակցում էր մի հարուստ վաճառականի հետ, այս միջոցին նոցա մօտովն անցկացաւ մի հոգազործ մարդ և խոնարհաբար գլուխ տուեց նորանց։ Իշխանը նոյնպէս գլուխ առնելով բարևեց նորան։ Վաճառականը ցածութիւն համարելով այդ, ասաց իւր խօսակցին։

«Մի՞թէ կարելի էր ձեզ այդ աստիճան ստորանալ, որ գլուխ էք տալիս մի ռամիկ հողագործի։

—Պարոն, պատասխանեց իշխանը, շատ կցաւէի, թէ որ այդ հողագործը ինձանից աւելի քաղաքաւարի լինէր, մի՛ թէ դուք կցանկանայիք, որ ես անպատուէի իմ անձը, աւելի անկիրթ լինելով, քան թէ այդ գիւղացին։

ԲԱՄԻՆ ՈՒ ԱՐԵԳԱԿԸ

Մի անգամ Արեգակը ու հիւսիսային թռունդ քամին վէճ բաց արին, թէ նոցանից որն է ուժեղ։ Երկար վիճեցին նոքա վերջապէս վճռեցին, որ իրանց ոյժը փորձեն նոյն ժամին մօտներումը անցնող ճանապարհորդի վերայ։ «Նայիր թէ ինչպէս կընկնիմ նորա վերայ, ասաց քամին, մի աչքաճրագում կրկնեմ նորա վերարկուն։» Այս որ ասաց՝ սկսեց փչել ինչքան ոյժը կարում էր. բայց որքան շատ էր աշխատում քամին, այնքան աւելի պինդ փաթաթվում էր ճանապարհորդը վերարկուի մէջ։ Նա՝ թ հարկէ զգոյշ էր վատ եղանակից, բայց և աւելի շտապում էր յառաջ գնալ։ Քամին բարկացաւ, կատաղեց ու թափեց խեղճ ճանապարհորդի վերայ անձրև ու ձիւն։ Նեղվելով քամուն՝ ճանապարհորդը հագաւ վերարկուի կոնները, երեսից կապեց գօտին էլ։ Հիմա հասկացաւ քամին, որ էլ չի կարող նորա վերարկուն խլել։ Արեգակը տեսնելով իւր հարևանակորդի անզօրութիւնը՝ ժպտաց, գուրս նայեց ամպերի

յեռքից, ջերմացրեց, ցամաքեցրեց երկիրը, դորա հետ միասին և խղճուկ սառած ճանապարհորդին։ Արեգակի ճառագայթներովը աքացած, նա քաջալերուեցաւ, օրհնեց արեգակին, հանեց վերարկուն, ծալեց ու կապեց թամքին։ «Տեսնում ես, ասաց այն ժամանակ հեզիկ Արևը բարկացկոտ Քամուն, քաղցրութեամբ ու բարութեամբ շատ բան կարելի է անել, քան թէ բարկութեամբ։»

ՄԷԿ ԽՆՁՈՐԵՆՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա.

Անտառի մէջ բուսած էր մէկ վայրի խնձորենի. աշունքին վայր ընկաւ նորանից մէկ թթու խնձոր. թռչունները կերան խնձորը, կոցահարեցին և կորիզները։ Մի կորիզ (սերմիկ) միայն թաղ կացաւ հողի մէջ և մնաց։

Ամբողջ ձմեռը սերմիկը ձիւնի տակն էր, իսկ գարունքին, երբ արևը աքացրեց թաց հողը՝ սերմիկն սկսեց ածիլ, դէպի ցած դուրս հանեց իւր բարակիկ արմատները, իսկ դէպի վեր առաջին մի զոյգ քնքոյշ տերևները։ Տերևների արանքից դուրս ծլեց մի փոքրիկ կոկոնաւոր ստեղն, և կոկոնից բուսան կանաչ տերևներ։ Կոկոն կոկոնի, տերև տերևի, ճղնիկ ճղնիկի յետևից ածելով, հինգ տարուց յետոյ մի գեղեցիկ խնձորենի կար նոյն իսկ տեղում, ուր որ վայր էր ընկել կորիզը։

Մի անգամ անտառ եկաւ պարտիզպանը, տեսաւ խնձորենին և ասաց.—«Ինչ լաւ ծառուկ է, նա կարող է պէտք գալ ինձ»։ Գողգողում էր ծառուկը, երբ պարտիզպանը դուրս էր հանում նորան գետնից և մատնում էր,—«կորայ ես բոլորովին»։ Բայց պարտիզպանը զգուշութեամբ դուրս հանեց ծառուկը, չվնասեց ոչ մի արմատիկ, բերաւ նորան պարտէզը և տնկեց բարի երկրի մէջ։

Բ.

Ծառուկը զոռոզացաւ պարտիզի մէջ. «Երևի մի հաղուագիւտ ծառ եմ ես, որ ինձ անտառից պարտէզը բերին», մտածեց նա և բարձրից էր նայում չորս կողմի տգեղ կանեփների վերայ, խեղճը չգիտէր. որ վ ա ր թ ա տ ո ւ ն էր ընկել։

Հետագայ տարին պարտիզպանն եկաւ մեծ ծուռդանակը (յատոցը) ձեռին և սկսեց կտրտել խնձորենին։ Դողում էր խղճուկը և ասում ինքն իրան. «Հիմայ որ՝ բոլորովին վերջս է»։

Պարտիզպանը կտրտեց կանաչազարդ գլխուկը, թողեց միայն մի հատ բնիկը, դորան վերևից ճեղքճեղքեց. ճեղքերի մէջ մտցրեց նա լաւ խնձորենու մատաղաշ ճղնիկներ, պատուաստեց նորան, վերքերը պատեց շաղախով, փաթաթեց ցնցոտիքով, փշով պատեց ծառուկն ու գնաց։

Գ.

Փոքր ինչ թուլացաւ խնձորենին, բայց էլի առոյգ ու զօրեղ էր. շուտով զինքը հաւաքեց և միաւորուեցաւ օտար ճղնիկների հետ։ Ճղնիկը ծծում է խնձորենու հիւթը և աճում է արագապէս. դուրս է հանում կոկոն կոկոնի, տերև տերևի յետևից. բուսցնում է ճղնիկ ճղնիկի, ոստիկ ոստիկի յետևից. և ահա, մի երեք տարուց յետոյ, ծառուկս սկսեց ծաղկիլ վարդագոյնագոյն անուշահոտ ծաղիկներով։ Ցած են թափվում սիրուն թերթերը և նոցա տեղը բանում են կանաչ պ տ ղ տ ն ե ր, իսկ աշունքադէմ այդ պտղտներից գոյանում են խնձորներ. բայց ոչ թէ վայրի թթու կ տ ր տ ո ր ն ե ր, այլ մեծ-մեծ կարմրաթշլիկ ու համեղ խնձորներ։ Եւ այնքան լաւն էր խնձորենին, որ ուրիշ պարտէզներից էլ գալիս էին նորա ճղնիկներից տաւնում պատուաստ շինելու։

ՈՒՇԿԱԼ ԾԱՌԱՆ

Մէկ Եպիսկոպոս մի անփորձ ծառայ ունէր վարձած։ Մի օր քնելիս պատուիրեց նորան զգոյշ կենալ, որ աղմուկ չլինի։

Մի քիչ անցկացած ծառան տեսաւ որ չաղ կ—չո՛ւղկ մի ձայն է գալիս սենեկի մէջ։

«Լաւ ոչ է, Տէր Աստուած, մեռնաց ինքն իրան ու սկսեց պատռել, որ գանի Սրբազանին անհանգիստ անողին։ Տեսաւ որ աղմկարարը սենեկի մէջ պատից կախ արած ժամացոյցն է։

«Ջէնդ», գոչեց ծառան ճնշուած ձայնով, բայց ժամացոյցը չլսեց նորան։

«Ջէնդ կարի՛ր ասում եմ. սպառնացաւ նա նորէն։ Ժամացոյցն էլի իրանն էր անում։

Զայրացաւ ուշկալ սպասաւորը, պատից ցած արաւ ժամացոյցը, մի քար վեր առաւ ու, տուր թէ կոտաս, ջարդ ու բուրդ արեց նորան։ Այս անգամ ժամացոյցը ձայնը կտրեց։

«Էդպէս հոգիդ կը հանեմ ու մունջ կը կացնեմ հա», ասաց սպասաւորը սիրտը հովացած,—դնա հիմի ինձանից էլ ասա, քեզանից էլ»։

ԴԵՂՁԱՆԻԿՆ ՈՒ ՍՈԽԱԿԸ

Մէկ տան մէջ վանդակումը կախած էին Դեղձանիկն ու Սոխակը և երգում էին։ Հենց որ սոխակն սկսում էր երգել՝ փոքրիկ Արշակը հօրն առաջնէր գալիս ու ցոյց տալիս թէ, տես, տես, հայրիկ ինչ լաւ է երգում այն թռչնակը։ Հայրը մի անգամ վեր առաւ վանդակը և թռչնակները ցոյց տալով աղային՝ ասաց։ «Ահա՛, հոգիս, որի՞ն ես այդքան հաւանում դու, ցոյց տուր տեսնեմ։ — Ա՛յ սորան, պատասխանեց փոքրիկ Արշակը, ցոյց տալով դեղձանիկը. տես ինչ սիրուն փետուրներ

ունի նա, ինչքան գեղեցիկէ. դորա համար է ի հարկէ, որ այնքան լաւ ձայն էլ ունի։»

ԳՈՂԻ ՓՈՔՐԻԿ ՈՐԴԻՆ

Մի մարդ գողութիւնն իրան համար արհեստ էր արել, այնպէս որ առանց գորան օր չէր կարող անցկացնել։ Մի գիշեր առաւ նա իւր հետ փոքր որդուն և գնաց հարևանի մոտակայ արտը ցորենի խուրձեր գողանալու։ Որպէս զի մարդ չիմանայ իւր յանցանքը նա սկսեց աչք ածել չորս կողմը, որ իմանայ տեսնող կայ թէ ոչ։ Երբ ոչ ոքի չտեսաւ անդումը, կամենում էր ահա խուրձերը կապել, որ շալակէ։ Բայց փոքրիկ տղան զգուշացրեց հօրը ասելով,—«Հայրի՛կ, մի տեղ մռռացար նայելը։ Հայրը շտապով ցած դրեց ձեռքի կապը և հարցրեց, թէ որտեղ էր մոռիկ արել։ Մանուկը բարձրացրեց ձեռքը դէպի երկինք և ասաց։ «Ահա այնտեղ մռռացար նայելը։ Դորանից յետոյ երեխայի հայրը ոչ միայն գողութիւն չէր անում, այլ և դառնապէս ապաշխարում էր իւր յանցանքի համար։

* * * * *

Երիտասարդի մէկը մի օր նստած էր մի ազնուարարոյ մարդու, թէ նորա ծագումը անարդ տոհմից էր, եւ ասում էր. «Դու կօշկակարի որդի ես»։ Ազնուարարոյ մարդը հանդարտութեամբ ասաց երիտասարդին. «Իմ ազգը ինձանով է սկսվում, բայց քո ազգը քեզանով կվերջանայ»։

ՏԱՊԱՆԱԳԻՐ ՄԱՆԿԱՆ

Հազար երանի քեզ, մանուկ ամբիծ,
Որ շուտ հեռացար դու այս աշխարհից,
Ուր վաղուց ի վեր ունի բնակութիւն

Անմեղութեան հետ մոլի չարութիւն.
Բայց այն ով գիտէ, քեզ ինչ էր սպասում
Փշոտ տատասկոտ այս մեր աշխարհում:

Եթէ յաւիտեան պիտի մնայիր
Հանգիստ գրկի մէջ քո մօր սիրալիր,
Կամ թէ յաւիտեան քեզ պիտի ժպտար
Գարնան վարդի հետ այս օտար աշխարհ:

ԱՆՑՈՐԴՆԵՐՆ ՈՒ ՇՈՒՆԸ

Խրիկնադէմին մէկ լուր փողոցով
Երկու մարդ իրար հետ զրոյց տալով
Անց էին կենում, տեսան որ յանկարծ
Դռան շէմքի տակից մէկ շուն ծղրտաց,
Սկսեց վնգվնգալ,
Ոռնալ, կնձկնձալ,
Մինչ որ փողոցը շներով լցուեցան
Որ անցորդների գլուխը տարան:
Մէկը կռացաւ, որ քար վերցնի,
Միւսը ձեռքիցը բռնեց ընկերի.
«Սիրելի՛, ասաց, տեղդ ծանր կաց,
Շան սովորութիւնն է հաչել հանապազ.
Քարով աւելի՛ նոքա կ'կատղին,
Լաւ է գլուխս առ դնանք մեր բանին:
Իրաւ, մի քիչ հեռացան թէ չէ՝
Մի շուն էլ չկար, որ կանգնի հաչէ:

Ներանը պատռած ոմանք վայրաբան
Փէշակ են արել
Մարդկանց դէմ հաչել.

Բայց դու լուռ, անխօս գնա՛ քո ճանապարհ,
Կը հաչեն շատ՝ էլ յետ
Չայները կ'քաշեն ու կ'փախչեն յետ:

ԻՆՉ ՈՐ ԱՍԵՍ ԱՃՆ ԿԸ ԼՍԵՍ

Գէորգն ամենեին չգիտէր արձագանքն ինչ է: Մի օր պարտիզի մէջ մանգալես նա կանչեց. «Էյ, հէյ», և իսկոյն նոյն ձայնը լսեց մօտակայ ծառերի միջից: Գէորգը զարմացած գոչեց. «Ո՞վ ես դու». Խորհրդաւոր ձայնը պատասխանեց. «Ո՞վ ես դու»:—Տեսնում եմ որ յիմար ես, բարկանալով ասաց Գէորգը: «Յիմար ես», կրկնեց ձայնը անտառի միջից: Տղան շատ նեղանալով այդքան անհիւսութեան վրայ՝ սկսեց նախատական խօսքեր ասել ծառերի միջից եկող ձայնին, բայց ձայնը բոլոր բառերը տեղնուտեղը կրկնում էր նորան: Սրտի ոխը տանելու համար նա սկսեց պառուել անտառի մէջ այն յանդուգն տղային, որ իւր կարծիքով պատասխանում էր իրան, բայց ոչ մի տեղ չգտաւ:. Տուն որ դարձաւ Գէորգը՝ պատմեց թէ ինչպէս մի տղայ անտառի մէջ հայհոյեց իրան: «Որդեակ իմ, ասաց մայրը, դու խաբուել ես, լսածներդ քո ասած խօսքերդ են եղել միայն, որ ծառերին դիպչելով դարձել են դէպի քեզ, ինչպէս որ մարդու պատկերը անդրադառնում է ջրի մէջ: Այդ ձայնը «արձագանգ» է ասվում:

Եթէ դու լաւ բան ասած լինէիր, ի հարկէ լաւ բան կլսէիր:

ԱՌ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Ո՞վ մեծասքանչ դու լեզու,
Ո՞վ հեշտ բարբառ մայրական,
Փափկահնչիւն քո բառերուդ

Նման արդեօք այլ տեղ կան.
Դու, որ նախ ինձ հնչեցիր,
Նախ սիրոյ, ո՜հ, հեշտ խօսքեր,
Այն նախ գքեզ թոթովելս
Դեռ իմ մանքէն չէ ելեր։

Իմ մայրենի քաղցր լեզու,
Կեաց անսասան, կեաց յաւէտ.
Կեաց միշտ, լեզուդ դու հայկական,
Կեաց ծաղկալից, ծաղկաւէտ,

Լեզու համակ սիրաշարժ,
Քանի՜ ձոխ պերճ ու պայծառ—
Միշտ կհնչես դուն. քեզի
Սրտերն ամեն գողացար.
Հնչէ.հնչէ յաւիտեան
Վեհ դիւցազանց պերճ երգ դու.
Թոթուէ փոշեղ խոր մութէն,
Ե՛լ երևան, պերճ երգ դու։

Իմ մայրենի քաղցր լեզու
Կեաց անսասան, կեաց յաւէտ.
Կեաց միշտ լեզուդ դու հայկարժան,
Կեաց ծաղկալից ծաղկաւէտ։

ԵԿԵՂԵՑԻ

Մի քաղաք կամ գիւղ մտնելիս ի՞նչ ենք տեսնում ամենից առաջ։—Եկեղեցի։ Նա բոլոր տներից հեռու և բարձր է շինած. նորա կամ թուղթկէն դեռ երկու-երեք վերստ հեռուից է երևում։ Ոչ մի տուն չկայ, որ տեղ ամեն մարդ արձակ հաղք, ծեր և մանուկ, հարուստ և աղքատ, առողջ և հիւանդ։ Ամեն մարդ էլ հաւասար է Տիրոջ առաջը։

Եկեղեցում աղօթում ենք մեր Երկնաւոր Հօրը, խրնդրում ենք մեզ համար բարիք և շնորհակալ ենք լինում արդէն ստացած բարիքներին համար։

Այն տեղ մկրտել են մեզ, էլի այն տեղ կատեն, երբ հոգիքս կտանք Աստուծուն։

Ուրեմն եկեղեցին միւս հասարակ տների նման չէ։ Այնպէս տուն կլինի, ինչպէս չես դնալ, այնպէսն էլ կլինի, չեն ընդունիլ քեզ։ Իսկ աստուծոյ տունը ամեն մարդ կարող է մտնել, անծանօթ, ազգակից և օտար, բարեկամ և թշնամի։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
7/II. 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

ՋՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Ա) Ջուրն ոմ չէ հարկաւոր։ Խոտն էլ, դաշտն էլ, թռչունն էլ մարդն էլ կարօտ են նորան։ Ինչպէս լցրել է Աստուած մեծ-մեծ ծովերն ու ովկիանոսները։

Բայց ծովերի ջուրը դառն է և աղի։ Մէկ էլ որ՝ ամեն մարդ ծովի ափումը չի բնակում։ Ի՞նչպէս կարելի է տանել նորան հազարաւոր վերստ հեռու տեղը. ի՞նչպէս բարձրացնել բարձր սարերի գլուխը։

Աստուած այս գործը յանձնել է արևուջան արեգակին։ Սա իւր ջերմ ճառագայթներով ջուրը թեթև շոգիներ է դարձնում։ Ջրի շոգիներն ապր թռչում են ծովի մէջ, բարձրանում են վերև, այնտեղ կապոյտ երկնքի վերայ դառնում են արծաթագոծ ամպեր։

Բ) Ջրի շոգիները բարձրանում են վեր ամպի նման, բայց մի տեղ անշարժ նստած չեն կարող կանգնել։ Գործի մէջ խառնվում է քամին էլ և ցիրուցան է անում ահագին ամպերը դէպի աշխարհիս զանազան կողմերը։ Ամեն մի այդպիսի ամպ այնքան ջուր ունի իւր մէջ, որ եթէ մի անգամից բոլորովին թափուէր երկրի վերայ, ամբողջ քաղաքներ, դիւղեր, մարդիկ

ու անասուններ տակովն տրած կլսեցրէր։ Բայց Աստուած ուրիշ կերպ է անօրհնել—ջուրը միջից մանր մաղվում է կաթիլ կաթիլ, և կամ սառչում ու ձիւնի թռչկան հատիկներ է դառնում։

Գ) Ջուրը զովացնում է դաշտերն ու արտերը և ներս է ծծվում հողի մէջ։ Հողի մէջ կաթիլ-կաթիլ ժողովվում է և գոյացնում առուակներ, որոնցից մի քանիսն իրար հետ խառնվում են և մէկ տեղ հողի տակից դուրս բղխելով՝ յառաջացնում են սառն ու պարզ աղբիւրներ։ Բղխում է աղբիւրը և սկսում է ձորակ շինել իւր համար ու հոսիլ հողի երեսով, ճանապարհին նա հանդիպում է իրան պէս մէկին էլ և սկսում են միասին վազել։ Գնում են գնում՝ մի ուրիշն էլ է հանդիպում, երրորդն էլ, չորրորդն էլ, հինգերորդն էլ և այլն. մինչև որ մէկ էլ տեսնում ես կանաչների միջով մի բաւականին լայն գետակ է գնում։ Գետակն արբուցանում է մարդկանց ու անասուններին, զովացնում էմարգագետինները, պաղցնում է աղջրիքի քարերը, քշում տանում է կոճերն ու նաւակները, իսկ նորա պաղ ծոցում ուրախ-ուրախ խայտում են արծաթափայլ թեփուկներով փոքրիկ ձկներ։

Դ) Շատ է գնում գետակը թէ քիչ, հանդիպում է մէկ ուրիշին, խառնվում է նորա հետ և սկսում են հոսիլ միասին։ Ճանապարհին նորանց ընկերանում է երրորդն էլ, չորրորդն էլ և այլն։ Եւ ահա մի մեծ գետ, բազմաթիւ ճիւղերով կտրում անցնում է մի ամբողջ մեծ տարածութեան մի ծայրից մինչև միւս ծայրը։ Լողում են գետի վերայ ծանր բեռնած նաւեր, շաչում են շրջենաւեր, իսկ եզերքում շինուած են շատ արդիւնաբեր գիւղեր ու վաճառաշահ քաղաքներ, մէկը միւսից հարուստ։ Գետը քշում է հարստութիւնները երկրից երկիր, մտնում է հեռու ծովի մէջ և ներս է տանում իւր հետ թէ փոքր նաւակներ և թէ առագաստներով թեւաւորուած մեծամեծ նաւեր։

Շատ ջուր է թափում գետը ծովի մէջ, բայց արեգակն էլ է միշտ գործի.—նա դարձեալ բարձրացնում է ջուրը ամպերի մէջ և դարձեալ ցրիւ է տալիս նորան ամբողջ աշխարհի երեսին։

Անդադար թափվում ու թափվում են գետերը ծովերի մէջ, բայց երբէք չեն ազատվում անդադար խլում ու խլում է արեգակը ծովերի ջուրը, բայց երբէք չի կարողանում դուրս տալ պրծացնել։ այնպէս խմասուն կերպով է կարգաւորել Աստուած այս գործը։

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՐԸ

Մայր—Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Ակեաց մէջը պրտրում եմ.
Բայց նոքա միշտ յեղյեղով
Պղտոր ջրով եղերքին
Դարիւ դարիւ խփելով,
Փախչում էին լալագին։
—«Արաքս, ինու ձկանց հետ
Պար չես բռնում մանկական.
Դու դեռ ծովը չհասած,
Ագաւոր ես ինձ նման։
Ինու արցունք ցայտում են
Քո սէդ, հպարտ աչերից.
Ինչու արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։
Մի պղտորիլ յատակդ,
Հանդարտ հոսէ խայտալով,
Մանկութիւնը քո կարճ է.
Շուտ կը հասնիս դէպի ծով։

Վարդի թփեր թող բուսնին
Քո հիւրընկալ ափի մօտ
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ։
Մշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քո ջրին,
Ճկուն ոստն ու տերև
Թող թաց տնեն տապ օրին։
Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թող դան համարձակ,
Դառն ու ուլը քո վճիտ
Ջուրը մտնին միշտ արձակ.—
Մէջքը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իւր տակից.
Ամպի նման գոռալով
Լապէս խօսեց յատակից.—
—«Խիզախ անմիտ պատանի,
Ներիս ինչու դարեր
Վազվում ես, նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր։

Սիրելիի մահից յետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտքից գլուխ պճնուի
Իր զարդերով թանգագին։
Որի համար զարդարուիմ
Որի աչքը հրապուրեմ,—
Շատերն ինձ են ատելի,
Շատերին ես օտար եմ։
Կար ժամանակ, որ ես էլ,
Շքեղազարդ հարսի պէս,
Հազար սուրբ բիւր պըշրանքով
Փախչում էի ափերէս։
Յատակս պարզ ու վճիտ,
Կոհակներս ոլորուն.
Լուսաբերը մինչև այգ
Զրիս միջին էր լողում։
Ի՞նչս մնաց այն օրից,
Ո՞ր ջրամօտ գեղերս.
Ո՞րը իմ չէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերս։
Տուրքը ջրի ամեն օր
Իր սուրբ ծոցէն Այրարատ
Մայրախնամ ինձ անունդ
Պարգեւում է լիառատ։

Բայց ես այն սուրբ ջրերով,
Սուրբ—Ակոբի ապրիւրին,
Պիտի ցօղեմ արտօրայք
Իմ ռուելի օտարին։
Մինչ իմ որդիք ով գիտէ,
Ծարաւ, նօթի անաէրունչ,
Օտար աշխարհ յածում են
Թոյլ ոտքերով կիսաշունչ . . .
Հեռու հեռու քշեցին
Ընիկ ազգը իմ Հայկեան,
Նորա տեղը ինձ տուին
Ազգ անկրօն մոլեկան։
Դոցա համար զարդարեմ
Իմ հիւրընկալ ափերը.
Եւ կամ դոցա հրապուրեմ
Ճպռտա, պըլչած աչերը։
Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կմնան պանդուխտ
Ինձ միշտ ոգեւոր կը տենչէք
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ։
Էլ չիսօսեց Արաքսը,
Յորձանք տուեց սոնալին,
Օղակ- օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին։

ԻՆՉՊԷՍ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՀ ԳՆՈՒՄ ԶԱՆԱԶԱՆ ԷՐԿԻՐՆԵՐՈՒՄ

Ամենքն էլ գիտեն, որ մարդիկ մեծ մասով ձիու վերայ են ճանապարհ գնում։ Ձին բոլոր միւս անասուններից յարմարաւորն է հեծնելու համար. նա զօրեղ է, վայելչակազմ և արագընթաց։ Հին ժամանակներում հիմիկուանից շատ էին ձիով ճանապարհորդում, որովհետև դեռ ես չկային սայլի ու կառքի ճանապարհներ. այժմ էլ սարերի նեղ-նեղ անցքերով, ամայի

դաշտերում ու անտառների մէջ չի կարելի ճանապարհ գնալ, թէ որ ձին չլինի։ Մեր երկրում եղներին ու գոմէշներին էլ են լծում կամ բեռնում, բայց կայ երկիր ցուրտ և անտանելի, հիւսիսի կողմում, որտեղ ոչ ձի, ոչ էշ, ոչ եզն, ոչ գոմէշ չեն կարող ապրիլ. այնտեղ մարդիկ լծում են հիւսիսային եղջերու։ Նստում են սահնակի մէջ, սկսում են քշել եղջերուներին, ճիպոտով խփել, կապերը ծռմռել, և նոքա ձիւնոտ եղջիւրները վեր ու վայր անելով շատ են ընկնում աչքը կտրած. տեղով ձիւնաստան դաշտի երեսին. ուր ոչ մի ճանապարհ կամ ոտնահետք չի լինում

Մի և նոյն ցուրտ երկիրներում, օրինակ Սիբիրիայում, շներ էլ են լծում։ Ամեն մի տանուտէր պահում է այդպիսի շներ, մի կերպ կերակրելով նորանց ձկան ոսկրանքով։ Ոչխոտ է բուսնում այնտեղ, ոչ գարի, որ կարողանար ձին ուտել. բայց որ բուսնէր էլ ձին չէր կարող այն տեղ մի օր ապրիլ և մարդկանց կրելու տեղակ ինքը ձին կխրվէր ձիւնի մէջ։ Իսկ շները վազում են հեշտութեամբ, քաշ տալով իրանց յետևից թեթև սահնակները. նոքա առանց դժուարութեան կարողանում են վազել և՛ փափուկ ձիւնի, և՛ բարակ սառուցի վերայով։ Մի սահնակում հնգից մինչև տասը շուն են լծում։ Երբեմն ճանապարհին բռնում է նորանց քանի մի օրով սաստիկ բուք. այն ժամանակ ճանապարհորդները ժողովվում են միասին, սահնակներից պատսպարան են շինում և տաքանում ձիւնի տակ։ Շները իրանց մօտ առած։ Այդ շները կամակոր են լինում ու կատաղի. շատ անգամ ճանապարհ գնալիս իրար բռնելու են կրծում, մ՚ձրձում են կապերը և պուկ գալիս փախչում։

Դորա հակառակ, մեզանից առաւել դէպի հարաւ անջրդի և աւազուտ անապատներում մարդիկ ճանապարհորդում են ուղտերի վերայ։ Ուղտը որոճող կենդանի է, նորա պարա-

նոցը երկայն է, գլուխը փոքր, թիկունքի վերայ ունի մէկ կամ երկու մազի կուզ. նա գեղեցիկ անասուն չէ, բայց համբերող է, երկար ժամանակ կարող է դիմանալ քաղցի ու ծարաւի, կուտէ ամէն տեսակ կոպիս ու փշոտ բոյսեր: Ուրեմն առանց նորան անհնար է անապատն անցնիլ, ուր որ շատ անգամ մի քանի օրերով չես կարող գտնել ոչ մի խոտ, ոչ մի կաթիլ ջուր: Ուղտը հնազանդուելով տիրոջը՝ շարքում է շրջ ոտքի վերայ և մէջքը դէմ է անում հանգարտութեամբ, որ հեշտ բեռնեն կամ հեծնեն. յետոյ վեր է կենում ու ճանապարհ ընկնում հանգիստ ու հաստատ քայլերով միւս ուղտերի յետեւից. սոքա բոլորը կազմում են մի երկայն շարք, մէկ ծայրն այս տեղ՝ միւսը շատ հեռու. այդպիսի շարքը կոչում է քարվան:

Բայց այս բոլորը չկարողացաւ մարդուն բաւականացնել. նա կամեցաւ աւելի հեշտ միջոցներ գտնել ապրելու համար: Առաջ հարուստներն էլ ձիով էին մեծ գալիս և ուրախ էին լինում, եթէ կարողանում էին ճանապարհ գնալ մի երկանիւ սայլի մէջ, իսկ յետոյ նոքա սկսեցին շինել սաղ առաւել լայնարձակ, յարմար ու հանգիստ կառքեր, շրջ անիւներով ու ծածկոցով: Առաջ շինում էին ագեղ ու անհաւասար սայլակներ, իսկ այժմ հանգիստ ու փառաւոր կառքեր, բայց այս եղաւ փոքր աս փոքր, հետզհետէ: Ինչքան աւելի մարդիկ լուսաւորուին, այնքան աւելի հասարակաց կ'դառնայ այն ամէնը, որ առաջուց միմիայն հարուստներին էին մատչելի: Երկաթուղու վերայ այժմ էժան գնով կարելի է շատ հարիւրաւոր վերստեր անցնիլ հանգիստ, ապահով ու կարճ ժամանակում: Ա. ին ճանապարհը որի համար առաջ ամբողջ օր էր հարկաւոր, այժմ կարող ես թռչել—անցնիլ մի երկու ժամում:

ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆԵԿԻ

Ծիծեռնակ ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա,
Թռչում ես այդպէս՞ արագ:
Ա՛խ, թռիր ծիծեռնակ,
Ծնած տեղս՝ Աշտարակ.
Անդ շինիր քո բունը
Հայրենի կոտրի տակ:
Անդ հեռու աշխարհ
Հայր ունիմ սրգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ օր:
Երբ տեսնես դու նորան՝
Ինձանից շատ բարև տար,
Ասա թող նստի լոյ
Իւր անբաղդ որդու վրայ:
Դու պատմէ, թէ ինչպէս
Ամէն անտէր ու խեղճ եմ ես.
Միշտ լալով, ողբալով,
Կեանքս մաշուել, եղել է կէս:
Ինձ համար ցերեկը
Մութ է շրջում արեգը.
Գիշերը թաց աչքիս
Քունը մնա չի գալիս:
Ասիր որ չքացուած,
Թառամեցայ միացած,
Նս ծոցիկ գեղեցիկ
Հայրենի հողից զրկած:

Դէհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թռիր արագ
Դէպի Հայոց երկիրը,
Ծնած տեղը—Աշտարակ։

ԱԳԱՀՈՒԹԵՒՆ ՊՏՈՒՂԸ

Երեք մարդ միասին ճանապարհորդելիս գանձ գտան ու բաժանեցին իրանց մէջ։ Նոքա պէտք է շարունակէին ճանապարհը, բայց որովհետև ուտելու պաշարը վերջացել էր, վճռեցին, որ իրանցից մինը գնայ քաղաք կերակուր բերելու և յանձնեցին այս բանը աւելի փոքրահասակ ընկերին։ Սա գնաց և ճանապարհին այսպէս էր մտածում ինքն իրան.—Ես այժմ հարուստ եմ, բայց աւելի հարուստ կլինիմ, եթէ կարողանամ ընկերներիս բաժինն էլ ինձ առնուլ, և այս շատ դժուար չէ,—կրթունաւորեմ այն ուտելիքը, որ պիտի գնեմ։ Իսկ իմ մասին կասեմ, թէ ճաշել եմ արդէն, ընկերներս առանց կասկածելու կուտեն ու կմեռնին. այն ժամանակ ես կունենամ ամբողջ գանձը։ Բայց միւս ընկերներն այսպէս էին խօսում։ Ինչու պէտք է մենք անպատճառ բաժին տանք այս պատանի մարդուն, միթէ չենք կարող դործ դնել մեր սուր դանակները նորա գլխի վերայ, որ մեր հարստութիւնը աւելի կատարեալ լինի։ Ուրեմն դայ նա թէ չէ՝ սպանենք իսկոյն։

Պատանին բերաւ թունաւորած կերակուրը. ընկերները սպանեցին նորան շտապով, իսկ իրանք մեռան թոյնի ներգործութենից. գանձը մնաց անտէր։ Ահա թէ ինչպէս է ագահութեան պտուղը։

ԻՋԵՒԱՆ

Անուանի մեծատան մէկը տրմկալի քաղաքից հեռու, մի զուարճալի հովտի վերայ մէկ շատ փառաւոր տուն ունէր։

Ոսկի, արծաթ, կայք՝ ոչինչ պակաս չէր նորան։ Նա ապրում էր ուրախ ու երջանիկ և երբեք չէր մտածում այն թշուառների մասին, որոնք հազիւ հաց կարողանում են քաշ տալ իրանց կեանքը աշխարհիս ձախորդութիւնների մէջ ծնրուած։

Մի օր, ինչպէս էր պատահել, մի ալէոր ճանապարհորդ, ուժը հատած և գիշերի ընկած, եկաւ այդ տունը և աղաչելով խնդրում էր, որ նոյն գիշերը տեղ տան իրան սենեակներից մէկի անկիւնում։ Մեծատուն մարդու սրտում արդէն վաղուց մեռած էր ամէն մի մարդասիրական զգացումն, նա ոչ միայն չընդունեց ճանապարհորդին, այլև շատ բարկացաւ նորա յանդգնութեան վերայ, որ համարձակվել էր վրդովել իւր հանգստութիւնը։

«Իմ տունը իջևան է ինչ է, ասաց նա գոռալով վատակարեկ ծերունու վերայ. միթէ նորա համար է շարչարանքով կառուցած այս չէնքը, որ նորան ոտնակոխ անէ ամէն մի անցու դարձ անող թափառական։ Գնա՛խ դուրս քաշուի՛ր ուրեմն։

—Գոնէ ներիր ինձ, իշխան, մի խօսք հարցնել քեզ, անց ճանապարհորդը։

Շարուսալը համաձայնեցաւ և ծերունին հարցրեց.

—Ո՞վ էր կենում այս տունը քեզանից առաջ։

«Ի՞նչ հարկ իմ հայրը։

—Իսկ հօրիցդ առաջ։

«Իմ պապը։

—Չէ՞ կանից յետոյ ոչ կրբնակուի այս տեղ։

«Պասկած չըկայ որ իմ որդիքը։

—Մտածի՛ր ուրեմն, ի՞նչ է այժմ քո տունը, եթէ ոչ իջևան ու տիւրանոց, երբ այդպէս զանազան անձինք մտում են այդ տունը մի կարճ ժամանակով ու գնում, երբ ոչ ոք մնացական չէ այդ տեղ և դա ուրեմն պէտք է մնայ արդեօք իրրև մշանջենական սեպհականութիւն։ Այսպէս ուրեմն, իջևան է

քո տունը և հիւրանոց, և ոչ միայն քո տունը, այլև ամբողջ աշխարհը մարդուս համար, բայց եթէ ես անարժան եմ այդ շքեղ իջևանին՝ մնաս բարեաւ:

Մեծատունը սաստիկ ամօթահարուած՝ երկար ժամանակ մնացել էր ապշած: Նա պատրաստ էր այն թոպէին ծերունու ոտքերն ընկնել և դառնապէս զղջալ, բայց ծերունին արդէն հեռացել էր:

ԴԱՇՏ ԵՒ ՈՍՏՈՒՄՆԱՐԱՆ

Դաշտը վարում են, որ սերմ ցանեն վերան: ուսումնարան են բաց անում, որ Աստուծոյ խօսքը սերմեն: Սերմիկն ընկնում է փոփոխ հողի մէջ. իսկ բարի ուսումը՝ մաքուր հողոց մէջ: Անձրև է գալիս հողը փոփկացնում և արև առնում, նորան ջերմացնում: իսկ խելացի խօսքն ու քաղցր զգուանքը՝ մարդկանց հոգիներն են մեղմացնում: Զի փչանում սերմիկը հողի մութ խորքում: իսկ բարի ուսումն՝ քնքոյշ սրտերում: Կանաչ թաւշի պէս ծլում են արտերը. ուսմունքներիցն էլ՝ լաւ խելօք մոքեր: Ծածկվում է դաշտը ոսկեշող հունձով. ծաղկում է ուսումն էլ բարի գործերով:

Ուրեմն, ով ծէր, արա անպակաս, բարեաց ձիրքերդ առատ լիանաս, տալով արտերին կենսատու անձրև, իսկ հոգիներիս՝ սուրբ ուսման արև:

ԲԱՐԵԽԻՂՃ ԽԱՓՇԻԿԸ

Մի Հնդկացի խափշիկ ծխախոտ խնդրեց Հարևանից: Հարևանը ժլատ մարդ չէր, ձեռքը գրպանը տարաւ և դուրս հանեց մի ամբողջ բուռ ծխախոտ: Միւս տուտուտը հնդկացին դարձեալ եկաւ հարևանի մօտ և տուեց նորան մի հատ արծաթի դրամ, որ գտել էր ծխախոտի մէջ: «Ինչպէս չզգացիր այդ դրամը քո մօտ, ասաց այն տեղ պատահող սպիտակագէմ մարդը, քեզ ծխախոտ տուող մարդը դրամն էլ է տուել»: — Խափշիկը ձեռքը դնելով սրտի վերայ ասաց. — այս տեղումս երկու մարդ կայ, մինը բարի, միւսը չար: Բարի մարդն ինձ ասաց. Այդ փողը քոնը չէ, ուրեմն տար ափրոջը տուր: Իսկ չար մարդն ասաց. Երբ տուել են քեզ այդ փողը, ուրեմն նա քոնն է: Բարին վրայ բերեց. չէ, միմիայն ծխախոտն է քոնը, և ոչ փողը: Չարը նորէն ասաց. ի զուր ես նեղութիւն քաշում. գնա՝ գործանով արաղ առ խմիր: Ես չգիտէի թէ ինչ անեմ և պարկեցայ քնելու: Բայց բարի և չար մարդին ամբողջ գիշերը դադար չէին տալիս ինձ և կռուում էին. առաւօտեան ես զարթեցայ և յետ բերի փողը:

ՍԱՐԻՑ ՎԱԶՈՂ ՎՏԱԿԸ

Մէկ բարձր սարից վազում էր մէկ զօրեղ վտակ աղմկելով ու փրփրալով, մէկ տեղ քարից քար լոք տալով, միւս տեղ ժայռերի կուրծքը տաշելով, մէկում արմատահան անելով հորիւրամեայ կաղնիներ, միւսում փչացնելով մշակած դաշտեր ու քշելով իւր ալիքների մէջ հովուի խրճիթն ու ոչխարները: Արդարև ճանապարհորդ մարդիկը սիրում էին տեսնել նորան ու զուարճանալ, բայց մատակայ հովիւները նզովում էին. մանաւանդ երբ սարի վերայ հալվում էր ձիւնը և նա աւելի ուժեղանում ու կատաղում էր:

Մի օր եկաւ այդ վտակ տեսնելու մի բան — հասկացող ու ջանասէր մարդ. նա սկսեց մտածել, թէ ինչպէս կարելի կը լինի այդ կատաղի զօրութեան առաջն առնուլ և գործածել նորան աւելի օգտակար բանի համար: «Հերիք եղան քո ձեռանները, ասաց նա վերջապէս վտակին, սկսիր այժմ օգուտ տալ մարդկանց»: Վերատաս ինքը թին ու բահը, մշակներ կանչեց, ինչ տեղ հարկաւոր էր առուներ քանդեց. փոս տեղերը

լքրեց քարով, բարձրումը շինեց մի ջրաղաց, դորանից յետ մի ուրիշը, դորանից ներքև էլ ուրիշ գործարան: Անիմները սկսեցին պատյա գալ ջրի ուժով և սանձահարած վտակը հարստացրեց ոչ միայն յիշեալ խելոք մարդուն, այլև բոլոր շրջակայքում գտնուողներին:

ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ
Թէ երգք թռչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն փափուկ քնար,
Զուներն ձայն մի այնքան սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

Տուր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մեք,
Որ մրրկաւ էինք զատուած.
Բաղդին ամեն օխ չարանենք
Ի մի հայրայր ցրուին ի բաց.
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

Երբ ալեւոր Մայր Հայաստան
Տեսնէ զորդիս իւր քով ի քով,
Սրտին խորունկ վէրքն դաժան
Բաղցր պատասուց բուժին ցօղով.
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

Մէկ տեղ լացինք մենք ի հնումն . . .
Եկէք դարձեալ յար անբաժան
Խառնենք դարտօսր և զինդումն,
Որ բազմաձնունդ ըլլայ մեր ջան.
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

Մէկ տեղ յոգնինք, մէկ տեղ ցանենք,
Մէկ տեղ թափին մեր քրտինքներ,
Զհունձ բարեաց յերկինս հանենք
Որ կեանք տանուն Հայոց գաշտեր.
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն:

---

* * * 2. * * *

Մի Ծատուոր մեռնելու վերայ, որամսնեց որ բերեն մի պրակ գաւազաններ եւ տուել իր եօթն որդիներին, որ կոտրեն նորանց: Որդիներից ամեն մինը ասաց թէ չեմ կարող. այն ժամանակ Ծատաւորը բաց տարաւ պրակը եւ ինքը մին մին կոտրեց գաւազանները՝ այսպիսի խրատ տալով որդիներին.— Նա՛, տեսէ՛ր իմ որդիք, եթէ միասան կլինիք, անյաղթելի կըմնաք, իսկ եթէ կրաժանուիք միմիանցից՝ ոչնչ կլինիք.

ԻՆՉԻ՞ ՎԵՐԱՑ ԵՆ ԳՐԱՒՔ

Երբ որ ուզում ենք մեր մտքերը հաղորդել մի բան պատմել կամ մի բան սովորցնել հեռաւոր մարդկանց, մտքերս գրում ենք թղթի վերայ: Եթէ մեր հաղորդած բանս քիչ է և հարկաւոր է միայն մէկ մարդու, նա կարող է ձեռագիր նամակ էլ լինել, իսկ եթէ ցանկանում ենք մեր միտքը հաղորդել մարդկանց բազմութեան, այն ժամանակ ամենից յարմարն է տպել տալ:

Ազատան մտքեր վերան գրելու կամ տպելու և մարդկանց մէջ տարածելու համար ամենալաւ նիւթը թուղթն է: Թուղթը պատրաստում են վշեայ, կանեփեայ և բամբակեայ շորերի հին կտորտանքից (ցնցոտիքից): Նոր ժամանակներում սկսել են թուղթ պատրաստել յարդից և մինչև անգամ փայտից էլ: Դեռ 1000 տարի առաջ մարդի սովորության բամ-

բակից թուղթ շինել, բայց այդ թուղթը այնքան յարմար չէր գրելու համար. այժմ ամենալաւ տեսակ թուղթ պատրաստում են վշեայ և կանեփեայ նիւթերից: Նոյնի հին և հագնելու համար անպիտան կտորտանքը ժողովում են առանձին մեքենաների մէջ, թողը թափ են տալիս, ջոկջկում ու դարսում են, լուանում ու եփելով խիւս են շինում. յետոյ խիւսը մահուդների արանքում շերտելով՝ մամուլների միջով անց են կացնում և յետոյ այդ շերտերը չորացնում են, որպիսով և ստանում են պատրաստի թուղթ: Թուղթը մարդկային ազգի մեծ բարիքներից մինն է.—առանց թղթի տպագրութիւն չէր կարող լինել, իսկ առանց տպագրութեան մարդիկ չէին կարող լուսաւորուիլ:

Հին դարերում, երբ դեռ ևս թուղթ շինել չգիտէին, մարդի գլուխ էին մագաղաթի վերայ: Մագաղաթը շինում էին էշի կամ ոչխարի կաշուից. բայց դորա շինելը դժուար էր և թանգ էր նստում. նորան գործ էին ածում միայն սրբունի դիւանների մէջ, այն էլ նշանաւոր բաները գրելու համար. էլի գործ էին ածում երևելի շարադրութիւնները գրելու համար: Մեր վանքերում, գլխաւորապէս Էջմիածնում, և ուրիշ մանաւոր մարդկանց ձեռքին այժմ շատ կարելի է տեսնել մագաղաթի վերայ գրած Սուրբ—գրքեր, նշանաւոր պատմութիւններ և հոգևոր երգեր, որոնցից շատերը 1000 և աւելի տարուան գրած են:

Մագաղաթից էլ առաջ գրում էին Եգիպտոսում բուսանող Պապիրուս կոչված բոյսի տերևների վերայ: Պապիրուսը, յայտնի բան է, չէր կարող թղթի տեղը բռնել: Պապիրուսից առաւել վաղ գրում էին մոմով օծած փայտի կամ քարերի վերայ: Նստ դժուար էր նշաններ կամ գրեր ձևակերպելը քարերի վերայ, այլև չէր կարելի տեղից տեղ տանել նորանց, մանաւանդ որ շատ անգամ արձանագրում էին ժայռերի կուրծքի

վերայ. ուրեմն այդպիսի արձանագրութիւնները կարող էին լինել այն ժամանակ միայն, երբ հարկաւոր էր անմահացնել մի որ և իցէ նշանաւոր պատմական անցք:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՂՕԹՔ.

Երկնքի երկրի Արարիչ Աստուած,
Խմբիր մեր աղօթք ջերմ սրտից բղխած.
Գոհ ենք քո շնորհից, որ պարգևեցիր
Տկար մանկանցս քո գութ սիրալիր.
Առատ սրտիր մեզ ձիրքդ հայրական,
Ցուցիր ոգի, խելք ու միտք բանական,
Որ մենք չմնանք անկիրթ ու ագէտ,
Այլ որ ուսանինք գտնանք բանագէտ:
Ո՜հ, ինչպէս ապա, Հայր մեր երկնաւոր,
Թողունք մոռանանք մենք քո սուրբ շնորհ,
Եւ գիշեր ցերեկ ջանքով եռանդոտ
Զաշխատենք լինել մեր ուսման կարօտ,
Որ հոգիներիս ջրիրէ խաւար,
Այլ որ նա փայլի լուսով կենարար:
Չա՛, աղաչում ենք, Հայր մեր գթառատ,
Պարգևիր մեզ ոյժ ու սէր անդադար՝
Եւ մենք պատրաստ ենք տալ ջանքեր անթիւ
Սուրբ ուսման համար. իսկ քեզ փա՛ռք, պատիւ
Վայել է այժմ և միշտ յաւիտեան.
Թող օրհնէ անուանդ աշխարհ ամենայն:

ՋՈՒՐ ԵՒ ՅԱՄԱՔ

Վահանը մի օր գնաց զբօսնելու և ուշի ուշով զննեց, որ յետոյ պատմի ուսուցչին, թէ ինչ ջուր ու ինչ յամաք էր տեսել ինքը: Մի տրոյի միջով գնաց նա ու հոսաւ գետակի մօտ: Գետակը վազում էր մի քարուտ տեղով նորա ափերը բլրոտ էին. տեղ-տեղ նորա վերայ կռացած շուաք էին արձակում ուռենու կամ վայրի խաղողենու թուփեր, տեղ-տեղ սպիտակին էր տալիս մաքուր աւազ: Գետը, մոտածեց Վահանը, հոսուող ջուր է, որ վազում է փոս տեղերով, գետաձորի (հունի) միջով. այդ գետաձորը երևի նա ինքն է փորել շատ վաղ ժամանակներից ի վեր, երբ որ սարերից ու թումբերից ջուրը հաւաքուել ընթացել է ցածր տեղերով: Ինչպէս տեսնում եմ՝ նա քարերի կուրծքին տալով քշել թոփ է արել և այն աւազի բլրակները, որ ահա այն տեղ երևում են: Վահանը գնաց ներքև գետի հոսանքի ուղղութեամբ: «Թող տեսնեմ շատ հեռու է գնում այս գետը», մոտածեց նա, և ինչքան շատ ներքև, այնքան աւելի ցած գնաց նա, էլ թումբեր չեկան առաջը, և Վահանի ճանապարհը այժմ թաւ կանաչների ու դեղեցիկ ծաղկապատ մարգագետնի վերայով էր: Ուրեմն գետը հոսում էր բարձրից դէպի ցած. եթէ Վահանը դէպի վերևներ՝ անկասկած մի տեղ կգտնէր գետի աղբիւրը կամ ակը. այդ ակը մի բարձր տեղ ժողովված կլինէր, իբրև լճակ և կամ քարերի արանքից կլինէր բղխելու: Մի քիչ որ գնաց Վահանը՝ գետն առաջը կտրեց. այդ տեղ գետի վերայ կամուրջ էր շինած: Վահանի հետաքրքրութիւնը շարժեց, նա ցանկացաւ իմանալ թէ գետն ո՞ր է գնում. սկսեց շարունակել ճանապարհը

և առաջը գտնվող անտառի միջից ճշները յետ-յետ անելով անցկացաւ: Անտառը վերջացաւ և Վահանի առաջև բացուեցաւ մի ընդարձակ հարթավայր, այդ տեղ գտնվում էր մէկ լեռ թուփերով շրջապատած. նորա մակերևոյթը շողշողում էր արևի տակ: «Լիճը ժողովված անշարժ ջուր է, չորս կողմից ցամաքով պատած»: Այդ լճի մէջն էր թափվում գետակը: Գետակի բերանը լիճը թափվելիս բաժանվում էր երկու ճշների: Աջ կողմից ներս էր մտած դէպի լիճը մի հրուանդան, այսինքն «այնպիսի մի ցամաք, որ շատ թէ քիչ դուրս պրծած է լինում ջրի մէջ»: Լճի մէջ տեղում մի փոքրիկ կանաչազարդ կղզի էր երևում, մի ցամաք, որ չորս կողմից էլ ջրով պատած էր: Լճի միւս կողմից գեղեցիկ տեսարանով երկար ու ձիգ ներս ընկած էր «մի թերակղզի,—«ցամաքի մի մասը, որ միայն երեք կողմից էր պատած ջրով»: Թերակղզին ձգվում էր անտառի կողմից և նա ցամաքի հետ միաւորվում էր մի նեղ շերտ հողով, պարանոցով: Նորան զարդարում էին գանգուր կանաչներ, որոնք շուաքաւորելով եզերքի փոքրիկ ծոցերը՝ դողդոջուն պատկերներով անդրադառնում էին ջրի մէջ: Այդ թերակղզին քիչ էր մնացել որ հասնէր մինչև նոյն իսկ կղզին. նորանց բաժանում էր իրարից միայն մի նեղուց, «ջրի մի նեղ շերտ»:

Վահանը բաւականին ժամանակ անցկացրեց շողշողուն լճի մօտ, բայց էլի շրջակայքի վայելուչ տեսարանից չէր կշտացել, երբ որ տուն դարձաւ:

ՀՈՎԻՒ

Ծառի հովանին, տերևի շշունն,
Ցխուր ողբերգակ աղբիւրի շաչիւն,
Հաճելի դիրքը զմրուխտ կանաչով,
Մի սքանչելի գեղեցկութիւնով,

Մեր աշխատասիրությունը ու արդար հիւսն լաւ փող էր վաստակում և շատ պարզ էր ապրում։ Թէ ինքը և թէ նորա տանեցիքը, ամենքն էլ պարկեշտ կերպով էին հագնում և ամեն տեսակ աւելորդ ծախքերից հեռու էին մնում։ Մի օր դրացի Յակոբը հարցրեց նորան։

«Պետրոս աղբէր, ասա խնդրեմ, ի՞նչ ես անում այս քան դիպած փողերդ, որ շուայլաբար ոչ ուտում, ոչ հագնում ես։

—Փողերիս մի մասը պարտքս եմ տալիս, պատասխանեց հիւսը, միւս մասն էլ շահով եմ տալիս։

«Ի՞նչ ես ասում, կրկնեց դրացին, մի՞թէ ես չգիտես, որ դու ոչ պարտք ունիս, ոչ շահով տուած փող։

—Այդպէս է, բայց ես էլ սուտ չեմ ասում։ Ահա լսիր. դու լաւ գիտես, թէ իմ ծերունի ծնողներս ինչքան ծախքեր արած կլինին ինձ համար ծնած օրից ի վեր. այժմ էլ ես սրբազան պարտք եմ համարում ինձ համար ծախք անել նոցա վերայ իմ փողերիս մի մասը։ Փողերիս միւս՝ շահով տուած մասն էլ այն է, որ գործ եմ դնում իմ զաւակներիս դաստիա-

յակութեան վերայ, որ նոքա մի օրապահանցու մարդիկ դառնան և կարողանան օգտակար լինելը ինձ էլ իրանց էլ ուրիշներին էլ։ Եւ ինչպէս որ հա այսօր օրիսական պարտք եմ համարում հատուցանել ծնողներիս նոցա բարիքի փոխարէնը, այնպէս էլ յոյս ունիմ, որ իմ որդիքը ծերութեան ժամանակ կաշխատեն ճշտութեամբ հատուցանել իրանց պարտքը։

ՉԱՐՄԱՆԱԼԻ ՄԱՐԴԻԿ

Շատ տեղ մեն եկած, շատ երկիր տեսած
Մէկ մարդ կրկին չիտա իր աշխարհն եկաւ.
Ծանօթ, բարեկամ գլխին հաւաքված,
Հարց ու փորձ արին, թէ նա ինչ տեսաւ։
Ալեզուս չիբռնում, կցնց նա խօսել,
Որ ձեզ չիտա պատմեմ թէ ինչ եմ լսել,

Աչքովս տեսել։

Դուք լաւ էք գիտում, թէ ինչքան է մեծ
Այս մեր աշխարհը, անսահման անվերջ.
Եւ ինչքան ծովեր, ազգեր, քաղաքներ
Լիքն են աշխարհիս ամեն անկիւններ.
Շատ տեղ կայ՝ մարդիկ իրար միս կուտեն.
Շատ տեղ մի տեղ խոտ կճաշակեն.
Ոակին ու արծաթն, այնպէս երկիր կայ,
Խոտն հետ կգայ, ջրի հետ կերթայ.
Բայց այս ամենն ինձ չի զարմացնում,
Երբ միտս եմ գցում սա լաւ մտածում,
Թէ ինչ էին անում քանի մի տեղեր
Մի տեսակ մարդիկ ցերեկ ու գիշեր.
Առաւօտուանից մինչ միւս առաւօտ
Նստած են նոքա անձայն իրար մօտ,

Բան ու կերակուր խպառ մոռացած,
Դժոխք ու դրախտ աչքից վաղ ընկած.
Միմեանց երևն էլ
Չեն ուզում տեսնել:
Ամեն էլ որ գոռայ, կայծակն էլ խփի,
Սուրը շողշողայ, կարկուտը թափի,
Թէկուզ երկինքն էլ գլուխներին փուլ գայ,
Մէկն էլ չէ ուզիլ, որ տեղից շարժ գայ,
«Իսկ ի՞նչ է նոցա միտքն ու կամքը
Այդպէս անելով, հարցրին բարեկամքը,
Գուցէ թէ երկրի հոգան են միշտ քաշում:
—«Ախ ի՞նչ էք ասում:
«Չլինի՞ հին մեղքերն են ապաշխարում:
—«Ո՛չ, ո՛չ, սիրելիք, այդպէս բան չկայ»:
«Ուրեմն ի՞նչ է, ասա՛»:
—«Թուղթ, թուղթ են խաղում»:

ԱՂԲԻՒՐ

Մէկ տաք օր երեք ճանապարհորդ իջան մեծ ճանապարհի մօտ եղած մի պայծառ ու պաղ աղբիւրի վերայ: Խիտ ու հիւթալի բոյսեր կախուած էին աղբիւրի շուրջը և իրանց ստուերովը զով էին պահում նորան: Ջուրը հաւաքուած էր այն տեղ մէկ քարից փորած ակի մէջ, որից դուրս վազելով՝ մաքուր ու պայծառ առուակներով գնում— ոռոգում էր ծաղկազարդ դաշտի ամենակողմերը: Աղբիւրի քարի վերայ գրուած էր. «Եղի՛ր այս աղբիւրի նման»: Ճանապարհորդները ջուր խմեցին կշտացան, վերնագիրը կարդացին և սկսեցին մտածել, թէ ի՞նչ կնշանակէ այդ: «Այս լաւ խրատ է, ասաց նոցանից մինը, որի կերպարանքից ու հագուստից երևում էր, որ վաճառական

է. աղբիւրն անդադար հոսում է, գնում է շատ հեռուները, զանազան ջրեր է ընդունում իւր մէջ և աճում դառնում է մեծ գետ, սա իւր օրինակովը կարծես թէ կամենում է ասել. «Գործունեայ եղիր, երբէք մի յուսահատուիր՝ և անշուշտ քո նպատակիդ կհասնիս»:

Երկրորդ ճանապարհորդը, որ մի ծերունի էր և ձեռին մի գիրք ունէր, գլուխը շարժեց և ասաց. «Սորա մէջ մի աւելի վեհ խրատ կայ. այս աղբիւրս ամենի համար պատրաստ է, ամեն անց ու դարձ անողի ծարաւը յագեցնում է, վարձ չի պահանջում, և սորանով յայտնապէս կամի ասել մարդկանց. «Բարի արա միայն բարի սիրելով և փոխարէնը հատուցում մի՛ պահանջիր»:

Երրորդ ճանապարհորդը, որ մի գեղեցիկ ու վայելչակազմ երիտասարդ էր, ոչինչ չասաց, բայց երբ ընկերները հարցրին և նորա կարծիքը, նա փոքր ինչ մտածեց և ասաց. «Այս աղբիւրի վերնագիրը ես ամենևին ուրիշ կերպ եմ հասկանում: Ինչի՞ էր պէտք այն անընդհատ հոսումը այն պատրաստականութիւնը ամենքի ծարաւը կոտրելու, եթէ որ ջուրը պղտոր լինէր: Նորա գլխաւոր արժանաւորութիւնն այն է, որ նա մաքուր է և պարզ: Ուրեմն, վերնագիրը ոչ մեր ջանասիրութեան, ոչ էլ առատաձեռնութեան վերայ է. «այս աղբիւրի նման եղիր» կնշանակէ—պահիր քո հոգիդ միշտ այնպէս մաքուր, որ նորա մէջը լաւ ցոլանան, ինչպէս այս աղբիւրիս մէջ, երկրիս ծաղիկներն ու երկնքի աստղերը»:

ՑԵՐԵԿ ԵՒ ԳԻՇԵՐ

Ցերեկն ամեն բան պարզ շօշափելի և զգալի է լինում բնութեան մէջ: Առաւօտեան արշալոյսը զարթեցնում է ամեն տեղ բազմաշխատ գործունէութիւն, ամբողջ օրը լսվում են կենդանիների տեսակ-տեսակ ձայները, երգերը, աղաղակները.

բայց հենց ծովում է արևը մայր մտնելու թէ չէ ձայները լռում են հեռվից, սպասվելով արևմտեան սակեվառ շողքի հետ։ Լռում է երգողների դասը, թառ է լինում զանազան ձրդ-ների վերայ, թաղնվում է անտառի տերևախիտ խորքում և քնում է սեղաւորելով յողնած գլուխը թևի տակ։ Միայն քանի մի ճչիւններ ու երգեր, որ կորած էին ցերեկուան խառնաշփոթ ձայների մէջ, այժմ սկսում են դուրս յայտնվիլ ընդհանուր լռութեան մէջ։ Բարձր-բարձր լսվում է այժմ լորերի պլպ—պլպլպատը, որ այս ու այն կողմ վազելով պտռում են լրան։ Աւելի բարձր կանչում է գիշերահաւը և նորա ձայնի արձագանգը հեռու տարածվում է ընդարձակ անտառի մէջ։

Մի խուլ ձորի մէջ ահա զարթեցաւ խաւարասէր բուն էլ, թափահարեց իրան և սուր հայեացքով մռիկ տուեց դեռ և մռայլապատ դաշտերին, որ թռչի քնած ոլոռներ գտնէ իւր համար։ Բունից դուրս եկաւ և խլուրդը, փռնչաց քթով և հոտոտեց գիշերեան քամին, որ իմանայ չի՞ գալիս արդեօք տաք արիւնի հոտ։ Իսկ մի ուրիշ տեղ ընդարձակ կանաչ դաշտի վերայ եկել ժողովուել են գիշերեան թիթեռնիկներ և թռչում են ծաղկից ծաղիկ, որ ծծեն նոցա շաքարահիւթը։ Լայն առուի ափերով էլ՝ կախկախված թուփերի ստուերի տակ՝ շարուել են կանաչ կայծեր, այսինքն տեսակ-տեսակ պղծներ։ Էին խնձորենու փուչակի մէջ մեկը ծրվծրվում է,—դա զարթնած շրջիկն է. և ահա դուրս երևեցաւ նա, սլացաւ զարմանալի թռիչքով, նորան հետևեց երկրորդը, յետոյ երրորդը . . .նոքա կորում—անցնում են օդը, փռվում են նորա մէջ, պտրտում են ջրի երեսով, ինչպէս ուրախ ծիծեռնակներ։ Խիտ թուփերի արանքից հնչուեցաւ վերջապէս սոխակների գայլայլեկը, որ ընդհատ-ընդհատ տատանվելով ողջունում է զարթնող գիշերին։ Ահա գիշերը սկսում է զարթիլ, զարթնում է նորա հետ և նոր կեանք։

ԾԵՐԱԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Մի օր Պրուսիոյ թագաւոր Փրիդերիկոս Բ. իւր սենեկի մէջ սատոիկ զբաղված՝ կրկին ու կրկին զանգակը խփեց, բայց մարդ չերևեցաւ։ Անհամբերութիւնից դուռը բաց արեց և տեսաւ որ սպասաւորը տախտի վերայ ընկած քնած է։ Մոտ գնաց որ զարթեցնի՝ սչբռվեց ընկաւ սպասաւորի գրպանից կիսով չափ դուրս ընկած մի նամակ։ Հետաքրքրութիւնը շարժած հանդարտ կերպով դուրս հանեց թուղթը, որ իմանայ թէ մէջն ինչ կայ գրած։ «Իմ անգին որդի, ասուած էր նամակում, անչափ ուրախ ու շնորհակալ եմ, որ այս անգամ էլ շուշացրիր ուղարկել ինձ քո ամենականիզ կէսը. դու քո ծնողասիրութեամբ քաղցրացնում ես մեզ տխուր օրերը, հանում յոյս ունեցիր, որ Աստուած պորա փոխանակ պիտի օրհնէ քո կեանքը։

Թագաւորը նամակը կարդալուց յետոյ մի քսակ ոսկով լցրեց և նամակի հետ միասին գրեց տակուն քնած երիտասարդի գրպանում, ապա փարձաւ իւր սենեակը և այնպէս սատոիկ հնչեցրեց զանկատը, որ սպասաւորը զարթնելով ներս վազեց։

«Լաւ քնեցիր», ասաց նորան թագաւորը։ Սպասաւորն աշխատում էր անձն արդարացնել. շփոթման մէջ ձեռքը տարաւ գրպանը և զարմացած դուրս հանեց քսակը։ Ոսկիները տեսնելուն պէս գոչեց թռաւ.—«Տէր արքայ, ասաց սպասաւորը արտասուագին՝ թագաւորի ոտքերն ընկնելով, երևի մահս են կամենում. չգիտեմ ով է գրել գրպանումս ոսկով լիքը մի քսակ։

«Բարեկամ, պատասխանեց թագաւորը, Աստուած շատ անգամ իւր բարիքը քնած ժամանակներս է հասցնում մեզ։ Առ այդ քսակն, ուղարկիր մորդ, ողջունիր իմ կողմից և ասա,

որ անհոգ լինի, այսուհետև ես պէտք է խնամք տանեմ նորա վերայ։ Իսկ դու, սիրելի, վատահ եղիր, որ իմ մօտ բաղդաւոր պիտի լինիս»

ԱՐՈՒԹԻՒՆԻ ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆԸ

Ա.

Արցունքն աչքերին կարկառած ձեռքով մօրըս եմ տեսնում
Թէ երաղիս մէջ, թէ լոյս ցերեկով մտածմանց միջում...
Ո՜հ մայր իմ, մայր իմ, մի՞թէ արժեմ ես այդ կրկնածանքին,
Այդ անչափ սիրոյն և երանական պատրաստ զգուանքին.
Ես չեմ ուրեմն մի թշուառ էակ ձգուած մի անգամ,
Ես ունիմ սիրող անսահման սիրով և սերտ բարեկամ.
Թող ողջ աշխարհը ինձ արհամարհէ հոգըս չէ բնաւ,
Ինձ բաւական է քո միակ սէրը և գութը ամբաւ . . . .
Ո՜հ թէ ինչ սիրով և ինչ յոյսերով ինձ սնուցել ես,
Քանի՛ օրերով ծոմապահութեամբ կեանքդ մաշել ես,
Քանի՛ շաբաթներ պասով, աղօթքով Աստուած ես կանչել,
Քանի՛ սուրբի մօտ մոմով մատաղով ուխտ ես գնացել,
Քանի՛ որբերի և աղքատների դու կերակրել ես,
Քանի՛ աղօթքներ և թալիսմաններ վերաս կարել ես,
Քանի՛ցս անգամ դու իմ փոխանակ հարուած ես ստացել
Անգութի ձեռքից և քանի՛ցս անգամ դառն արցունք թափել,
Որ ես բաղդաւոր մարդ դառնամ մի օր և շնորհալի,
Որ լինիմ պարծանք բարեկամներիս և քեզ սիրելի . . . .

Բ.

Ո՛վ Աստուած իմ, Աստուած, Դու բարի ես, Դու միշտ ողորմած.
Շատ ժամանակ է, որ Քո զթութիւնդ երբէք չեմ յիշած.
Ներիր ինձ, ներիր, Արարիչ երկնի, ես մեղաւոր եմ,
Դու ինձ շնորհել ես ուժ ու զօրութիւն՝ ես մոռացել եմ.

Դու հրամայել ես լինիլ գործունեայ՝ նոր եմ ես յիշում.
Այժմից կսիրեմ գործունէութիւն իմ բոլոր կեանքում.
Գործունէութեամբ իմ մէջ կգտնեմ ես ինձ բարերար.
Գործունէութեան դէմ չկայ ոչինչ անհաս և դժուար . . .
Թող այս բաղուկներս, որ այժմ զօրաւոր՝ պարապեն գործով,
Թող այս ճակատը, որ այժմ լայնացած՝ զբաղի խելքով,
Թող այս ոտները, որ այժմ ամրացած՝ ուղղապէս քայլեն,
Թող այս աչքերը, որ այժմ փայլուն՝ շրջանկատ լինեն.
Ցօժար եմ, յօժար, հոգւով և մտօք գործող լինելու.
Հաստատուն յուսով անվհեր սրտով յառաջ դիմելու
Դէպի նպատակ, դէպի կատարեալն և դէպի բարին,
Որ տնհրաժեշտ լրացնելու պարտք է մարդկային . . . .
Դու մի ամրապինդ, ով իմ Ստեղծող, կամք տուր ինձ միայն՝
Իսկ Քեզ վայելէ փառս և պատիւ այժմ և յաւիտեան։

ՓՈՂՆ ԻՆՁ ԵՆ ԱՆՈՒՄ

Քեզ հայ է հարկաւոր, իսկ դու շատ իւղ ունիս ոչխարներիցդ թոփ արած։ Ի՞նչ պէտք էր անել։ Գնա նորա մօտ, ով որ շատ հայ ունի, քիչ իւղ. նա կառնի քո իւղը և հայ կտայ քեզ։ Այսպէս փոփոխում էին հին ժամանակներում մարդիկ իրանց ապրանքները, այսպէս են անում այժմ էլ գռեհիկ անկիրթ ազգերը։ Եւ յիրաւի, եթէ որ դու կարողանայիր միայն որ և իցէ մի գաղանի մորթով ծածկուիլ, կամ որ և իցէ վայրի անասնի մսով կերակրուիլ, կամ թէ անտառում քանդած արմատներ ուտել, էլ չէիր կարօտիլ զանազան ապրանքների։ Բայց դու սովորել ես բարեվայել շոր հագնիլ, գդակ ծածկել, կօշիկներ ունենալ, մագերդ լաւ սանրել հայելու առաջ. դու ուտում ես հայ և խոհանոցում պատրաստած զանազան ուտելիքներ, քնում ես ոչ թէ հասա-

բակ կաշուի կամ թաղելի վերայ, այլ անկարնական վերայ, փափուկ վերմակի տակ, բնակվում ես փայտաշէն կամ քարաշէն տան մէջ, և ոչ թէ մի պատռուած վրանի կամ տաղաւարի տակ։ Բայց ի՞նչ համրել բոլոր այն նիւթերը, ինչ որ այժմ պէտքական են քեզ. սկսած պատին խփած մեխից, լուսամտի ապակուց, մինչև այն գիրքը, որ կարդում ես դու։ Ի՞նչպես կարծում, կարող էիր այդ բոլոր բաները ինքդ շինել։ Ի՞նչպէս կարող ես դու դրակ էլ կարել, սանր էլ շինել, կուժ էլ, կաթսայ էլ, սեղան էլ, կացին էլ, գիրք էլ և այլն։ Աւենք թէ շատ էլ փայտ ունիս, սայլդ կծես ու կերթաս հարցնել թէ «Ով գիրք ունի, ով դրակ, եկէք փայտով փոխենք»։ Այդ ինչքան չարչարանք կլինէր, բայց և կարելի է ոչ ոքի էլ հարկաւոր չէ քո փայտը։ ուրեմն դու կմնայիր առանց դրակի, առանց գրքի, առանց ամանի։ Ահա հնարել են մարդիկ այնպիսի ապրանք, որի հետ ամէն մարդ կփոխի իւր ապրանք, և որը շատ հեշտ է մեն ածել։ Այդ ապրանքը թանկագին մետաղներն են ոսկին ու արծաթը։ Նորանց ձեռք բերելը հեշտ չէ, և նոքա միշտ թանգագին են լինում։ Ոսկուց ու արծաթից դրամ են կորում. մի ոսկի դրամով, որի մեծութիւնը լինում է աբասանոցի չափ և որի գինը սակայն հինգ արծաթ մանէթ է, հարիւր տեսակ բան կարող ես գնել. եթէ քեզ քիչ բան է հարկաւոր, աբասանոցներ տուր, տասը կոպեկանոցներ, կամ աւելի մանր պղնձի դրամներ, (հինգ, երեք, մէկ և կէս կոպէկանոցներ)։ Այդ բոլոր տեսակ դրամները նոյնպէս ապրանք են, բայց այնպիսի ապրանք, որ ամէն մարդ կառնի և՛ ապրանքի տեղ, և՛ աշխատանքի տեղ։ Մի քանի ժամանակից յետոյ տեսան, որ դրամներն էլ հեռը քաշ տալ այս ու այն կողմ յարմար չէ, մանաւանդ երբ հարկաւոր է լինում մեծ-մեծ առուտուրներ անել։ Արևարականները սկսեցին այսպէս անել։—օրինակ, Յակոբեանցը մահտպ է գնել Տիգրանեանցից, տալիս է նորան փողերի տեղակ մոսրհակ, թէ իմ պարտ փողերս պիտի տամ այս ինչ կամ այն ինչ ժամանակ։ Տիգրանեանցը հաւատ է ընծայում Յակոբեանցին ու պարտքը թողում է նորա վերան, իմանալով, որ անկասկած պիտի հատուցանէ. իրան էլ չէթէ հարկաւոր է մի այնպիսի ապրանք, որ Յակոբեանցն ունենում է վեր է առնում նոյնպէս մուրհակով։ Ասել է թէ, այս տեսակ մուրհակները միևնոյն են թէ փողը։ Ահա այսպիսի մուրհակներ դուրս տուող թէ որ լինէր մի անուանի հարուստ մարդ, որին ամենքը հաւատ ընծայելիս լինէին, այն ժամանակ բոլոր ժողովուրդը վեր կառնէր նորանց։ Այդպիսի մի հարուստ մեծատուն գանձատունն է. նա է, որ հրատարակում է տպած մուրհակներ, որոնց թուղթ փող են ասում կամ ասսիգնացիա։ Այդ թղթի փողերը, կամ աւելի լաւ ասենք—այդ թղթի կտորներս, ինքն ըստ ինքեան համարեա ոչինչ չարժին, բայց նորանց ընդունում են փողի տեղ, որովհետև գանձատունն էլ է փողի տեղ ընդունում նորանց։ Թուղթ փողը հեռը մեն ածել հեշտ է քան թէ մետաղեղէն դրամները։

ԱՂՈՒԵՍ ԵՒ ԿԱՏՈՒ։

Ժանտամահ ցաւն երբ փարատեցաւ,
Երբ բարօրութիւն յար յաջորդեցաւ,
Կենդանիքն տպա մի խորհուրդ արին,
Թէ պէտք է զենել զոհ Իւպիտերին։
Սակայն Ադիւծուց ստացան պատուէր,
Թէ պէտք է գրել ամէն զոհ նուէր
Մատենի միջում կազմած այդ մասին,
Եւ հանել զոհը ձեռամբ Աղուէսին,
Որովհետև նա քրմապետական
Պաշտօնն էլ ունի Իւպիտերի տան.

Եւ որ լինի գործն պատշաճ ու յարմար՝
Կատուն Աղուէսին կարգուեց հաշուարար.
Յետ որոյ ամեն չորեքոտանի
Բերաւ զոհ վայրի և կամ ընտանի,—
Շունը չաղ հաւեր, Արջը փափուկ տանձ
Կապիկն ոսկիներ, փղերն անթիւ գանձ։
Անզոհ չմնացին Մուկն ու Նապաստակ.
Մի խոսքով ասած, շատ որս ու վաստակ
Բերին լցուցին մեհենի սեղան,
Այնպէս, որ չմնաց տեղ էլ ասեղան։
Երբ այդքան զոհեր—չաղ կաքաւ ու հաւ
Աղուէսը տեսաւ՝ աչքը չորս եղաւ.
Հաշուարար Կատուին էլ մի՝ հարցաներ,
Բերանի ջուրը թուղթը թաց կանէր։
Մի օր Աղուէսը մտաւ Կռատուն,
Տեսաւ որ թագուն հաշուարար Կատուն
Մի հաւի գլուխ թաթերում ծամէր.
Աղուէսը ժպտաց, բայց Կատուն ցանէր . . . .
«Մի վախիր, ասաց Աղուէսը Կատուին,
Ես այդպէս գործով հասայ այս պատուին,
Առակ է կասեն. «Եւ մեղրահատը
Մեղը կտրելիս լեզում է մատը»։
Խօսքը չաւարտած մատեանը ձգեց
Ու հասաւ զոհից չաղերը ճանկեց
Կատուն, որ սրտումն էլ կասկած չմնաց,
Իսկոյն հեռուից Աղուէսի կամաց։
Իսկ զոհարերքը ցարդ համոզված են,
Թէ իրանց տուրքը արդէն զոհված են.
Սակայն մեհենում հետքերն ու փուշին
Զիք զոհի, չիք եւ մորթ ին ու կաշին։

Գիտեմ, առակաւս ինչ իմաց տուի՝
Ախորժ չէ քմացն Աղուէսի, Կատուի,
Բայց փոյթ չէ, գոնէ խեղճ զոհաբերքը
Կիմանան ով է ուտում նուէրքը։

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ

Մի Արքաքացու ուղտ սատակեց անբնակ աւազուտ անապատում։ Խրոնուկը ծանապարհ ընկաւ գնալ ոտքով վառվռուն աւազի վերայով. բայց կարճ ժամանակից յետոյ սկսեց թուլանալ բաղցած ու ծարաւ։ Յանկարծ տեսաւ նա իւր առաջեն մի բսակ, կանգ առաւ նա եւ վրա վազելով առաւ բսակն ու բաց արեց նորան դողդոջուն ձեռներով։ «Անպիտա՛ն բան», հառաչելով ասաց նա եւ բաց գցեց բսակը։ Նորա մէջ միայն մորկարիտներ էին։

ՈՉԻՆՉ ՉԻ ԿՈՐՉՈՒՄ

Ճշմարիտ է որ ոչինչ չի կորչում։ Բայց ահա, օրինակ, մի ձի սատակեց, դէն գցեցին նորան պրծան— և վերջ։ Ոչ, այս տեղ դեռ ամենը չէ կորած, ձիու դին կընեխի, մի մասը կչորանայ, մի մասն էլ հող կդառնայ, հողից խոտ կբուսնի և այդ խոտով կկերակրուի մի ուրիշ փոքրիկ ձի։ Փչրուեցաւ, ասենք մէկ քար՝ աւազ դարձաւ, իսկ աւազից գոյացաւ այն բլուրը, որի կատարին բուսած են մի թուփ ծառեր։ Ցամաքեցաւ առուն, ջուրը օդի մէջ գնաց, իսկ յետոյ, մի ուրիշ տեղ, կտեսնես որ նոյն իսկ ջուրը թափվեցաւ ու վազում է գետի մէջ։ Այսպէս է լինում բնութեան մէջ, այսպէս է աշխատում անել մարդն էլ իւր կողմից, որ ոչինչ չկորչի, չփչանայ։ Ի՞նչքան աղբ ու ինչքան անմաքրութիւններ են դուրս ածում տներից ու բակերից. Եթէ նոքա մնային տանը և բակումը թափված, օդը կվարակէին, իսկ ամեն մարդ էլ գիտէ, որ ժանտախտը աւելի կոտորածներ է անում այն երկրում, ուր որ մարդիկ առաւել կեղտոտ ու անմաքուր են ապրում։ Բայց խելօք մարդը ինչ-

սակար բաներից էլ է կարողանում օգուտ քաղել։ Փտած ու կեղտոտ բաների փտերի մեջ կիր ու փշրած ածուխ են ածում։ այդպիսով նոքա բացի օդը չապականելուց՝ ծառայում են մարդուն հողը պարարտացնելու համար։ Մարդիկ ընկնում են քաղաքի փողոցներն ու հուսքում ամեն մի բան, որ տեսիլքան համարուած ու դուրս ածած են լինում։ օրինակ, կրծոտած ոսկորներ, երկաթի կտորանք, կաշուի պատառներ և ուրիշ շատ տեսակ ցնցոտիք։ Այս բոլորը գործարաններում բանի է գնում։ Ոսկորից ու կաշուից սոսինձ են եփում։ ոսկրից նոյնպէս շինում են սպիտակ վառուն լուսակիրը (Փոսֆորը), որ ծծմրի հետ խառն կարելի է տեսնել մեր սովորական լուցափայտերի ծայրերում։ Լուսակիրը այնքան դիւրավառ է, որ մինչև լուցափայտի կոչիրը նա վառվում պրծնում է։ այդ է պատճառը, որ լուցափայտի ծայրը ծծմրով էլ են շաղախում։ Լուսակիրից կրակում է (վառվում է) ծծումրը, իսկ ծծումրից լուցափայտը։ Լուսակիրը դոյնը սպիտակ է, իսկ ծծումրինը դեղին։ բայց լուցափայտերի ծայրերը գոյն-գոյն են լինում — կարմիր, կանաչ կամ ուրիշ գոյներով, նայելով թէ ինչպիսի ներկի մէջ են լինում թաթախած այդ ծայրերը։ Փայտածուխի մոխրից պատրաստ (բուսամոխիր) են սանում։ Պատրաստ խառնում են աւազի հետ, երբ ուզում են ապակի շինել, և ծիրգուի հետ, երբ ուզում են սապոն եփել։ Ամեն մի ժանգոտած մեխ, ամեն մի երկաթի կտոր արհեստանոցում կարելի է կրկին եռացնել, զտել և նորանից նորէն պատրաստել սպսպուն կացին, դանակ և այլն։ Բրդեղէն ցնցոտիքը նոյնպէս կարող են գործի անցնել բրդի գործարաններում։ Նորանց կրկին լուանում գզում են և դարձեալ բուրդ սանում, որից էլի շորեր են պատրաստում։ Իսկ պատառների ցնցոտիքը գործ են ածում թուղթ շինելու համար, այնպիսի թուղթ, որի վրայ մենք գրում ենք։ Ի՞նչ կմտածէիր, որ քո շապիկը մի ժամանակ կարող էր թուղթ դառնալ։ Կամաց

որ արհեստանոցը ծաղկած են, այն տեղ գործի է դնում և այն ամենը, ինչ որ արիշ տեղերում անպիտան է համարվում ու դէն է ածվում։

Մի քանի հոգի զբաղամամբ ծիրը ընկան մի ծերունու տան։ Հացկատեստ հիւրերից մէկը հարցրեց տան տիրոջը թէ՝ Ամառածաղունչ ունի՞։ «Ամ։ ինչ էր ասում զբաղասխանեց ծերունին ծանր կերպարանքով առած, ես քրիս տանեցս չե՞մ մոռանում, օր չի անցնիլ, որ կարդալիս չլինիմ Սուրբ—գիրքը». այս ասելուց յետոյ հրամայեց սեղրիկ գրքերը որ Ամառածաղունչը բերին։ Մի փարաւոր ու տակեղոծ կազմով գիրք էր բերուածը։ բաց արեց թէ չէ՝ փոր ավնոցն ընկաւ մէջից։ «Ա՛յ անիծած, գրեց յանկարծ ծերունին ակնոցը վերցնելով, մի տարուց ասելի է, որ կորցրել եմ, հապա հոգ գտայ այսօր։»

ԻՆՉՊԷՍ Է ՄԱՐԴՍ ԳԱԶԱՆՆԵՐԻՆ ՈՐՍՈՒՄ

Բացի խըբդից, գրեթէ բոլոր վայրի կապազի գազանները ճնաս են տալիս մարդուն որ և իցէ կերպով։ այս պատճառով մարդս հալածում է նորանց ինչպէս իւր անհաշտելի թշնամիների։ Գազաններ որսալիս ամենից աւելի մարդուն ոգնում է նորա մտերիմ շունը։ Շունը գազանների մշանջենական ոսոխն է։ մանաւանդ այն գազանների, որ ցեղակից են նորան, ինչպէս գայլը, աղուէսը, շնագայլը։ Մարդս յայթում է գազաններին ոչ այնքան ուժով, որքան հմտութեամբ։ Հենց այդ տեղ էլ երևում է մարդու խելքը, որ նա կարողանում է տիրել բնութեանը։ Անկիրթ ազգերը գանում են թունաւոր խոտեր, նոցանից դուրս են քաշում մի տեսակ զօրեղ թոյն ու քսում նետերի ծայրին բառական կլինի այդպիսի թունաւորած նետով մի փոքրիկ վէրք տալ կենդանուն, ամենամեծ գազանն էլ կը սասկի, պատռուռ, թոյնը մտնում է արեան մէջ, կենդանին սկսում է փախչել բայց յանկարծ տեսնում ես դողդողալ, վայր ընկաւ և մեռաւ սարսափելի տանջանքով։

Երբեմն մարդիկ խորամանկութիւն են գործածում, հագնում են այծեամի մորթի, եղջիւրներն էլ դուրս ցցում գլխի վերայ, որ այսպիսով կարողանան շատ մօտ գնալ արագավազ այծեամներին, որոնք իրանց մօտ չեն թոյլ տալիս որսորդին։ Մարդս ուշի ուշով նկատում է թէ որտեղ է կենում անասունը, երբ է հեշտ մօտ գնալ նորան, կարճ ասել—լաւ ճանաչում է անասնի վարքն ու սովորութիւնները, որ աւելի հեշտ ու անսխալ կերպով կարողանայ որսալ նորան։ Վայրենի ազգերը որսի մէջ գործ են ածում նետ, նիզակ, դաշոյն, սկանատ և այլն։ Աւելի լուսաւորեալ ազգերը գործ են ածում հրացան։ Գազանները որսի են դուրս գալիս գրեթէ միշտ գիշերով։ Ամենից շատ հալածում են Գիշակերներից մի առաւել վնասակարին, որ գայլն է. ոմանք թունաւորած միս են դնում նորա անցնելու տեղերը, կամ թէ խոր-խոր փոսեր են քանդում ու երեսը ծածկում ծառի ճղներով, տերևներով կամ մամուռով և վերան դնում են մի կտոր գէշ՝ խաբելու համար։ Այդպիսի փոսերի մէջ երբեմն աղուէս էլ է ընկնում, հնադայլ էլ, ուրիշ գազան էլ։ Դոքա ամենքը ահ ու դողի մէջ նստած են լինում տեղները հանդարտ, Այդ տեսակ փոսերի չորս կողմից թեթև ցանկապատ էլ են քաշում, որ գազանը կարծէ թէ մարդն այդ տեղ մի բան է թաղցրել իրանից, հետաքրքրութեամբ ներս մտնէ և ընկնի փոսի, կամ թակարդի մէջ։ Զանազան լուսաւորեալ երկիրներում, օրինակ Անգլիայում, Գերմանիայում, գրեթէ ոչ մի գայլ չես գտնիլ, ամենքն էլ կոտորել են։ Որ աւելի շատ փչացնեն նորանց՝ իշխանութիւնը վճարում էր ամեն մի սպանած գայլի մորթուն որոշեալ քանակութեամբ փող։ Այդ կերպով վերջացրած են արջերն էլ։ Արջի մորթին, եթէ փչացած չէ, լաւ գին ունի։ Արջի քոթոթների միսը անհամ չէ, և Ռուսիոյ մի քանի կողմերում ուտում են նորան։ Աղուէսի մորթին առաւել թանգ է լինում

քան թէ արջինը կամ գայլինը։ Մի աղուէսի մորթին երկու գայլի մորթի արժէ։ Աղուէսները շատ խորամանկ են և նորանց որսալը հեշտ չէ։ Ներով էլ դժուար է աղուէսին բռնել. նա շատ արագ է վազում, զանազան կերպով խաբս է տալիս, հետքը դորցնում է և ամեն մի կերպ աշխատում է խաբել որսկանին։ Ուրիշ գազանների միջից սամոյրն ու ազնիւ կուզը նոյնպէս թանկագին մորթի են տալիս մարդուն։ Կրծող կենդանիների ցեղից կուղն է հասուցանում մարդուն իւր մորթին, որի գինը գնալով-գնալով թանգանում է, որովհետև կուղերին էլ կոտորում են մարդիկ։

ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՆ ՈՒ ԱՐՋԸ

Երկու բարեկամ իրիկնապահին
Հրացան առած անտառ գնացին,
Որ մէկ բան որսան
Շուտով յետ դառնան։
Յանկարծ անտառից մի արջ դուրս պրծաւ
Ու կատաղութեամբ նորանց վրայ վազեց.
Մէկը շտապով ծառը բարձրացաւ,
Միւսն էլ ճարակտուր գետնի վրայ պառկեց,
Շունչն իրան քաշեց ու անշարժ մնաց,
Որ արջը կարծէ,
Թէ նա մեռած է։
Արջը մրթմրթալով նորան մօտ գնաց,
Ականջը կամացուկ դէմ արեց բերանին,
Դէս-դէն հոտ քաշեց, ականջ դրեց կրկին.
Վերջապէս նորան մեռած կարծելով՝
Արջ պապն հեռացաւ բերանը լիզելով։
Անհաւատարիմն ծառից եկաւ ցած

Ընկերին հարցրեց, թէ արջն ի՞նչ ասաց։
—«Արջն ինձ պատուիրեց որ ես միւս անգամ
Քեզ պէս մարդու հետն էլ տեղ դուրս չգամ,
Որ վտանգ, փորձանք մի պատահելիս
Չթողուս ինձ մենակ ու ինքդ փախչիս։

ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆ

Այլ էր սփոփում պայծառ առաւօտ
Վրդոված հոգուս ցաւեր կրակոտ.
Աւերանի մօտ, կանաչ ծառի տակ
Մաքի մէջ կորած էի բովանդակ։
Զէին պակասում վշտերս յոլով,
Հոգիս ու սիրտս միշտ խռով էր խռով,
Սգաւորի պէս անխօս լուռ ու մունջ՝
Զգում էի շատ ներքուստ դառն մրմունջ։
Բարձր սարի տակ փայլուն ու կապոյտ
Մի գետ փրփրագեղ վազում էր շուտ շուտ.
Լողում էր նորա վերայ մի նաւակ,
Զկնորսն երգում էր իւր քաղցր նուագ։
Գետի մի՛ւս կողմում՝ այգիներ, արօտ
Փողփողում էին թփերով ցօղոտ,
Բնութեան նուրբ գեղով ծածանում մունջ մունջ,
Կոյս ծաղիկներով յասմիկի փունջ փունջ։
Թխաչք աղջիկներ լուացք շալակին
Վազում գնում էին ափերով գետին.
Այն տեղ մի ջրաղաց պատում էր արագ,
Ցօղեր մարգարտեայ շաղ տալով բարակ։
Կար այնտեղ հնուց աւեր աշտարակ,
Իսկ նորա մօտիկ խուց մի փոքրաբակ.

Դաս. Ընթերց.

Կաղմ ու զինաւոր մի զինուոր բրդոտ
Երթում գալիս էր, կանգնում խցի մօտ։
Խաղ զինուորական առնում էր փոյթ փոյթ,
Ուսից ուս դնում հրացանը շուտ շուտ.
Երբեմն պարզում էր, երբեմն ուղղում,
Մերթ արձակում էր, մերթ նուրբ նկատում։—
Այս բնական ու պարզ համեստ տեսարան
Զկարաց տանել վէրքերիս դարման.
Ցաւիս բժիշկը այն տեղ չպատահեց,
Սիրտս ու հոգիս այրեց, խորովեց։

ՊԱՐՍԻԿ ՄԱՆՈՒԿԸ ԵՒ ԱՒԱԶԱԿՆԵՐԸ

Մի պարսիկ՝ մանուկ հասակում խիստ ցանկացաւ ճանապարհորդելու Բաղդատ։ Մայրը տեսնելով, որ ոչինչ բանով չկարողացաւ յետ կանգնեցնել որդուն իւր ցանկութիւնից, համաձայնեցաւ թոյլ տալ նորան։ Ճանապարհի ծախքի համար տուեց նորան ութսուն դենար, և մի և նոյն ժամանակը պահանջեց որ մանուկը երդումն ուտի և ուխտ դնէ, թէ երբէք սուտ չպէտք է խօսի։ Դորանից յետոյ նա գրկախառնեց որդուն ու յանձնելով նորան Աստուծոյ հովանաւորութեանը՝ արձակեց։

Մանուկն ուրախ սրտով ճանապարհ ընկաւ մի կարաւանի հետ։ Համարան քաղաքին մօտեցած՝ վաթսուն աւազակ վրայ տուին կողոպտեցին կարաւանը։ Աւազակներից մինը հարցրեց մանկանը. «ի՞նչ ունիս մօտդ։»—Քառասուն դենար կարած են շորերիս մէջ, պատասխանեց նա։ Աւազակը ծիծաղեց և հանաք էր կարծում։ Երբ որ աւազակները բաժանում էին իրանց կողոպտած բաները՝ կանչեցին տղային իրանց առաջնորդի մօտ։ Աւազակապետը նոյնպէս սկսեց հարցնել նորան, թէ ի՞նչ ունի

մնար։ Տղան պատասխանեց. ես արդէն ասացի քո մարդկանցը, որ քառասուն դենար կարած են շորերիս մէջ։ Աւազակապետը իսկոյն քանդել տուեց նորա շորերի կարը և գտնուեցաւ ասուած փողը։ «Բայց ի՞նչ պատճառով, հարցրեց նա հետաքրքրաբար, բացայայտ ասացիր դու այն բանը, որ կարող էիր թաքցնել։—Որովհետև ես կամենում եմ պահել մնրս խօսքը, պատասխանեց մանուկը, ես նորան խոստացել եմ ամենևին սուտ չասել։ «Սիրելի՛ մանուկ, խօսեց աւազակը, դու ահա փոքր հասակիդ մէջ այդքան լաւ ճանաչում ես քո պարտականութիւնը դէպի մայրդ, բայց ես այսքան սարսեկան մարդ եմ դեռ չեմ զգացել թէ ինչ պարտականութիւն ունիմ դէպի իմ Աստուածը. տուր ինձ ձեռքդ, անմե՛ղ մանուկ, թող վկայ լինի սա, որ ես խոստանում եմ այսուհետև հաւատարիմ լինել։

Աւազակապետի ընկերները երկար միջոց մնացին զարմացած և անխօս. վերջապէս ասացին նորան. «դու մինչև հիմի եղել ես մեր առաջնորդը յանցանքի ճանապարհում, այսուհետև դարձիր մեզ առաջնորդ առաքինութեան ճանապարհում։ Ամենքն էլ մանկան ձեռքով երդում կերան, որ հաստատ մնան իրանց խօսքին. դորանից յետոյ աւազակները շտապեցին յետ տալ իրանց կողոպտած դանձերը։

ԺԱՆՏ ՓՈՒՇԸ

Փշին հրցրին. ի՞նչ օգուտ ունիս.
Որ քարվանի բեռն մնտո

չէ՝ եկէք ամենքս միասին մի կտոր դաշտ մաքրենք, մէկս բահով, միւսս ուրիշ բանով փորենք, մարգեր (ածուներ) շինենք. այսքան հողի ինչ կամենանք, որ չանենք։ Յետոյ միասին մտածենք, վճռենք, թէ ինչ բան լաւ կլինի ցանել կամ տնկել։ Դորանից յետոյ թող ով ինչ ունի բերի, ես մորի, դու խաշխաշ, մէկէլը վարունգ, և այլն։ Ամենքս էլ իրար հետ պարտաւոր լինինք լաւ պահպանել մեր դաշտն ու խնամք տանել նորա վերայ։ Առաջինը և գլխաւորն այն է, որ ամենքս միասին լաւ կարող ենք տեսնել ու իմանալ, թէ որն է ինչպէս բուսնում ու աճում։ Երկրորդ, մեր խնամատարութիւնը աւելի կարգին կլինի, ինչ որ մէկս չէ իմանալ միւսը կսովորեցնի, այլև հայրս կօգնի մեզ։ Ժամանակ էլ քիչ գործ կածենք մեր աշխատանքի վերայ, երբ ամենքս իրար հետ կգործենք։ Երրորդ, լաւ որ խնամք տանենք բոլոր ցանած ու տնկածներիս՝ շատ պտղաբեր կլինին, և մենք ինչքան հարկաւոր է եկող տարուան համար՝ վեր կառնենք կը պահենք, իսկ աւելի մնացածը հաւասար կբաժանենք. ամեն մարդ այն էլ կունենայ, ինչ որ առաջուց ունէր, այն էլ, որ ցանկանում էր ունենալ, բանջար, կամ ծաղիկ, կամ պտուղ, և ոչ ոք նեղացած չի լինիլ։ «Այդ ի՞նչպէս է, ասաց Գարեգինը, ես խաշխաշի ծաղիկն եմ ուզում, իսկ ինձ կտան մենակ սերմը»։ —Դորան հնարք գտնելը կարծում ես շատ դժուար է, պատասխանեց Արսէնը, մէկ մարդ կարող ենք միայն ծաղկի համար ցանել, միւսը սերմի համար։ Այնպէս էլ որ չլինի, թուփերը կբաժանենք, ով ինչպէս կուզէ՝ թող այնպէս վարուի իրանի հետ։— Լաւ ես հրամայում, վրայ բերեց Գրիգորը, ինչի՞ է պէտք, եթէ ինձ վարունգ տան, երբ ես մորի եմ սիրում։—«Ուրեմն կը փոխես մէկի հետ, որ վարունգ կլինի, սիրելիս պատասխանեց Արսէնը։ Էլ պէտք չէ, եղբարք, վիճել. ում որ ինչ կընկնի, շատ լաւ է։ Գլխաւոր օգուտն այն է, որ գործն արագ կընթանայ, որ

մենք ամենքս միասին մի բան կսովորենք. բանը մենակ ուտելը չէ։ Իսկ եթէ դու քո բաժնից մի բան չես կամենալ ուտել, կարող ես քեզ համար մի առանձին մարդ էլ շինել սրտիդ ուզածը ցանելու համար. ո՞վ է քեզ արգելում»։

Մանուկները համաձայնեցան Արսէնի հետ։ Յետոյ իմացան, թէ ինչքան խելօք գործ էր իրանց արածը։

ՀՈՎԻՒԻ ՍՐԻՆԳԸ

Մի անգամ մէկ թագաւորի յայտնեցին, թէ նորա գանձապահը յափշտակում է պետական գանձարանը և թագցնում իւր տան մէջ մի գաղտնարանում, որ փակած է երկաթի դռնով։ Թագաւորը անձամբ գնաց գանձապահի տունը, հրամայեց բաց անել երկաթի դուռն ու ցոյց տալ գաղտնի սենեակը։ Բայց ինչքան մեծ էր նորա զարմանքը, երբ նա յափշտակած գանձի տեղակ տեսաւ միայն չորս տկլոր պատեր, մի փոխաթի կտոր, մի քանի կթիչ, այլ և գետնի վերայ անկիւնումը գցած մի հովուական պարկ և մի սրինգ։ Սենեակի պատուհանից երևում էին դեղեցիկ կանաչազարդ դաշտերն ու անտառախիտ սարերը։ Գանձապահն ասաց թագաւորին։ «Զահիլ ժամանակս ես ոչխար էի արածեցնում. դու առար ինձ, թագաւոր, քո պալատը. նոյն ժամանակուանից ես ամեն օր մի քանի լոպէ անց եմ կացնում այս սենեակումս և այս տեղից զուարճութեամբ մտիկ եմ տալիս դաշտերին ու սարերին։ Ո՜հ, այն ժամանակ իմ աղքատիկ խրճթից մէջ ես աւելի երջանիկ էի, քան թէ հիմայ ճոխ պալատի մէջ։ Լաւ է ապրել անյայտութեան մէջ. բայց խաղաղ, քան թէ ունենալ հռչակաւոր անուն՝ և ենթարկուիլ միշտ հալածանքների ու զրպարտութիւնների։»

* * 4. * *

Մի որկրամոլ մարդ պարծենում էր ընկերների մեջ, թէ շատ տեսակ կերակուրներ է կերել: Ընկերներից մէկը հարցրեց նորան. «Այլ էլ կերե՞լ ես»: —Ի՛նչպէս չէ, Զորաշէն գիւղում ինձ ամեն օր զորանից էին տալիս»: —«Ա՛յ տնաքանդ, չէ՞ որ սայլը փայտ է, ինչպէս էիր ուտում, ասաց ընկերը ծիծաղը բռնելով: «Տօ՛ էնդո՛ւր էր փայտի հոտ գալիս», վրայ բերեց պարծենկոտ ստասիսօսը:

ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԽԵԼՔՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ

Նախանձում են թռչուններին թէ նոքա անհոգ, անցաւ թռչոտում են իրանց համար դաշտերում. բայց նոքա էլ այնպէս հեշտութեամբ չեն գտնում իրանց տունն ու ապրուստը, ինչպէս կարծում են: Արագաթռիչ թեւերը ամեն ժամանակ չեն փրկում նորանց վատ եղանակի, կատաղի գազանի կամ խորամանկ որսկանի ձեռքից: Լաւ է որ նոքա խելք ունին և կարող են իրանց գլուխը մի կերպ պահել: Այնպէս թռչուն կայ, որ իւր բունը փրկելու մտքով վերաւորուած է ցոյց տալիս իրան, թռչում է շատ ցածից, համարեա գետնին է դիպչում, ցաւալի ձայնով ճչում է և այսպիսով որսորդին քաշում է բունից հեռու, բայց մէկ էլ տեսնում ես վեր բարձրացաւ յանկարծ և արագութեամբ յետ թռաւ, արի իմացիր թէ ո՛ւր: Անմարդաբնակ երկիրներում, ուր որ թռչունները մարդ տեսած չեն լինում, եթէ պատահում էլ է մարդ՝ ամենևին չեն փախչում նորանից և անվախ պտըտում են նորա չորս կողմը, բայց հենց որ մարդը սկսի բռնել նորանց կամ հրացանով զարկել՝ իսկոյն կճանաչեն, որ նա իրանց թշնամի է և ամենքը հեռու կփախչեն: Ագռաւները, կաչաղակները, վայրի սարեակները երկրագործի գրեթէ ոտքի տակից հաւաքում են սերմերը. բայց հրացանը կառնու նա թէ չէ՝ իսկոյն ամենքը հեռու կըթռչեն: Զանազան տեղերում որսորդները պէսպէս հնարք են

գործ դնում, որ թռչունը չկարողանայ իրանց ճանաչել. օրինակ, մեր կողմերում կաքաւ որսալիս վեր են առնում վարտգուրի պէս մի բան, որի վերայ աչքի և հրացանի տեղը են լինում շինած. որսորդն այդ ծածկոցն առաջևը պահած է մանգալիս, որ ինքը ջերեայ և կաքաւները չփախչեն: Լոր բռնողները արտի մէջ (գլխաւորաբար կորեկի արտի) ականատ են սալքում կամ ցանց. իրանք գլխների վերայ չուխայ են հագնում, որի թեւերն էլ ցցում են եղջիւրների նման, ձեռքին նոքա ունենում են մի տեսակ պատիկ գործիք, այծի ծնօտի պէս, որին ասում են պըպ-պըպըտ. դա ածելիս լորի պէս ձայն է հանում: Որսորդը իւր պըպ-պըպըտի ձայնով դրաւում քաշու է լորին դէպի ցանցը. լորը խաբվում է, որովհետև մի կողմից մարդու երես չի տեսնում և գուցէ անասուն է կարծում որսկանին. միւս կողմից էլ՝ իբրև թէ իւր ընկերի ձայնն է լսում:

Ծտերն ու ակռաւները, ընդելով որ միշտ մարդու շուրջն են ապրում, շատ զգոյշ են ու վախկոտ: Գիւղերում նոքա երբէք չեն մօտենում մարդկանց, իսկ քաղաքների փողոցներումն անգամ աղատ ու անհոգ թռչկոտում են այս ու այն կողմ, և համարեա մարդու ոտքի տակն են ընկնում, իմանալով որ այդ տեղ չեն դիպչել իրանց: Նատ ուրիշ ամենազգոյշ թռչուններ էլ վստահ կերպով բուներ են շինում հասարակաց պարտէզներում և աներկիւղ ճախրում են զբօսնող մարդկանց գլխի վերայով, հասկանալով որ այդ տեղ ոչ ոք հրացան չի դարդկիլ իրանց վերայ: Վայրի սագերն ու կռունկները տեղափոխուելու ժամանակ գիշերով ցած են իջնում դեռնիվերայ, իսկ ցերեկով թռչում են այնքան բարձր, որ հրացանի դնտակն էլ չի հասնիլ նորանց. որտեղ պէտք է ցած իջնեն նոքա, առաջուց համբաւաբերներ են ուղարկում, որ իմանան թէ ոչ մի վտանգ չկայ արդեօք այն տեղ: Մի առանձին բնական նուրբ զգածութիւն պէտք է համարել թռչունների մէջ այն որ

նոքա յառաջագոյն կորոշանում են գուշակել եղանակի փոփոխութիւնը, ցուրտը և այլն։ Եթէ ծիծեռնակները շուտով դառնան մեզ մօտ, այդ համարեա՞ սայդ նշան է, որ գարունը տաք պիտի լինի, ջրային թռչունները վաղուց արդէն թողած են լինում այն լճերը, որ ամառը պիտի ցամաքին։ Բայց երբեմն էլ պատահում է ընդ հակառակն. ծիծեռնակները, օրինակ, սխալուելով՝ ժամանակից առաջ հայրենիք են վերադառնում, գարունը ուշանում է, և ցուրտը հարիւրներով կոտորում է նորանց։

Թռչունների յիշողութիւնը ևս զարմանալի է, ծիծեռնակը երկար ու հեռաւոր պանդխտութիւնից յետոյ, դարձեալ ճանաչում է իւր բնակած տեղը և իւր բունը։ Աքլորը շատ ժամանակեայ անջատմունքից յետոյ էլ կարողանում է ճանաչել իւր վաղեմի բարեկամուհիներին, ծանօթ հաւերին։ Շատ անգամ աքլորը հաւաբունի համարեա թէ անխոնջ տնտեսն է դառնում, մի ուտելիք է գտնում թէ չէ՝ կանչում է բոլոր հաւերին, որ մասնակից անէ նորանց էլ իւր սեղանին։ Նա չի թոյլ տալիս, որ հաւերը օտար դռներ գնան կամ կռուին իրար հետ, իսկոյն պատժում է մեղաւորին. նա իւր հասարակութեան մէջ օտար աքլոր կամ հաւ չի ընդունում և առհասարակ ամեն բանի մէջ ճիշտ կարգ է պահում։ Նա երբեմն ձագերին ազատում է ուրուրի ձեռքից, կամ գոնէ վտանգի մասին իմաց է անում թխսականին։

Գիշատիչ թռչունները թունդ կուում են իրար հետ ճանկած որսի վերայ. բայց մի քանիսի մէջ կարեկցութիւն ու սէր էլ է երևում։ Ագռաւները երբեմն խմբովին պաշտպանում են իրանց ընկերին. նոցանից մէկին մի փորձանք է պատահում թէ չէ՝ կռայիւնը կանչում է անտառ ու դաշտ։

Թռչունների ծնողական սէրը նոյնպէս զարմանալի է։ Մարիքը վերաւորուած ժամանակն անգամ իրանց անձը չեն խնա-

յում ձագերին պաշտպանելու համար։ Եթէ մի թխսականի տակ դնեն ուրիշ թռչնի ձու, նա դոցանից դուրս եկած ձագերին նոյնպէս սիրով կկնամէ ու կպահպանէ։ Կուկուն, որ թռչունների միջից ամենավատ մայրն է, ուրիշ թռչունների բունի մէջն է ձու ածում։ Պատահել է որ կուկուն ձու է դրել ծառի փուչակի մէջ, մի որ և իցէ փոքրիկ թռչնի բնում, և երբ ձագ է դուրս եկել ձուից՝ մեծացել ու չէ կարողացել փուչակից դուրս գալ, որովհետև կուկուի ձագը աւելի մեծ է եղել նորա խնամատար թռչնից, օրինակ, ծառակտուտից։ Այդպիսի դիպուածում խեղճ դայեակը երկար ժամանակ չարչարվում է, կերակրում է թշուառ բանտարկեալին. աշունքը վրայ է հասնում, նորա բոլոր ընկերները վաղուց տեղափոխուած են լինում, և նա վերջապէս ծարը կտրած նորան թողնում գնում է, որ բոլորովին ցրտամահ չլինի ինքը։ Պատահել է նոյնպէս, որ թխսական հաւը բադի ձուերից ձագեր է ունեցել և սիրով պահպանել նորանց։ Բայց ահա փոքրիկ բադերը սկսում են մտնել ջրի մէջ և լողալ. . . Երևակայեցէք ձեզ մայր-հաւի երկիւղն ու զարմանքը։ Նա ճչում է, դէս ու դէն է ընկնում, ափերը ճպռտում է, ինքն էլ է ուզում ջուրը մտնել, կարծելով թէ անփորձ ձագերը հիմի որ տեղ որ է պիտի խեղդուին, այն ինչ փոքրիկ բադերը բոլորովին հանգիստ ու անփորձ լողում են ջրի երեսին։

Այդպէս հետաքրքրական յատկութիւններ դեռ էլի շատ ու շատ կան թռչունների մէջ։

ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՑ ԵՐԳ

Մեր հայրենիք թշուառ, անտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
Իւր որդիքը արդ գանչում է
Հանել իւր վրէժ քէն ու ոխ։

Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած։

Ահա, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի.
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի։

Ինչքան կին մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իւր եղբօրը՝
Զանց չարեցի քո սիրուն։

Ահա իմ գործ, ահա դրօշ,
Նուա ձի հեծիր քաջի պէս,
Գնա փրկել մեր հայրենիք,
Պատերազմի վառ հանդէս։

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ միանգամ պիտ, մեռնի,
Բայց երանի՜, որ իւր ազգի
Ազատութեան կզոհուի։

Գնա, եղբայր, Աստուած քեզ յոյս,
Ազգի սէրը քաջալեր,
Գնա, թէև չեմ կարող դալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր։

Գնա մեռիր դու քաջի պէս,
Թող չտեսնէ թշնամին
Քո թիկունքը, թող նա չասէ,
Թէ վատ է Իտալացին։

Ասաց տուեց օրիորդը
Իւր եղբօրը մի դրօշ.

Մետաքսից էր ազնիւ գործած,
Ուր երեք գոյն կան օրոշ։
Եղբայրն առաւ և ողջունեց
Իւր սիրական քնքոյշ քոյր.
Առաւ զէնքը, սուր հրացան,
Հեծաւ իւր ձին սեւաթոյր։
—Քուրի՛կ կանչեց քաջ պատանին,
Մնաս բարեաւ, սիրական,
Այս գրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակ իտալեան։
Նա սուրբ է ինձ, երբ մկրտուած
Արտասուքով ու կնքած՝
Դու յանձնեցիր ինձ յիշատակ՝
Հայրենիքի նուիրուած։
Թէ մեռանիմ՝ դու մի՛ սդար,
Իմացիր որ տարեցի
Դէպի մահու արքայութիւն
Իմ հետ քանի թշնամի։
Ասաց, վազեց դէպի հանդէս
Աւստրիացոց յանդիման,
Իւր արիւնով գնել յաւէժ
Ազատութիւն իտալեան։

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Մէկ գիւղի քահանայ եկեղեցու եկամուտքից հարիւր մանէթ յետ էր գցել նոր սկիհ գնելու համար։ Մի օր այդ փողերն առաւ ու գնաց քաղաք սկիհը գնելու։ Երբ որ նա հարց ու փորձ անելով որոնում էր այնպիսի մի խանութ, որտեղ կարող էր գնել իւր խնդրած առարկան, յանկարծ մի դռան յետևից բարձր ձայներ լսեց։ Հետաքրքրութիւնից շարժ-

ուած՝ քահանան կամեցաւ գիտենալ այդ աղմկի պատճառը. ներս նայեց բակի մէջ և ի՞նչ տեսաւ։—Գետնի վերայ թափած զանազան իրեր, ամաններ, շորեր և ուրիշ տեսակ կահ-կարասիք։ Մօտում կանգնած էր պոլիցիական ասպիճանաւորը, որ ձեռքով ծախում էր մէջ տեղ թափած իրեղէնքը. մի կողմում էր մարդկանց բազմութիւնը, որ ուզում էին օգուտ քաղել յարմար դէպքից էժան ապրանք գնելու, իսկ միւս կողմում հիւանդոտ դէմքով մի մարդ. կողքին կուռ էր եկած նորա կինը, իսկ դռնա մօտ երկու փոքրահասակ մանուկներ։ Դռքա ամենքն էլ լուռ ու մունջ կեցած էին մի կողմ և արտասուքը հանդարտ-հանդարտ գլորվում էր նոցա երեսով։

Այս ցաւալի պատկերը քահանայի աչքովն ընկաւ թէ չէ՝ սիրտը մորմոքեց, մօտ գնաց խեղճ մարդուն և հարցրեց. «Կասկած չունիմ, որ այս իրեղէնները քոնն են. ինչի՞ց արդեօք ստիպուած ծախել ես տալիս տանդ կահ-կարասիքը»։

—Ծախել տուողը, տէր հայր, ոչ թէ ես, այլ իմ տանուտէրն է, որ գանգատել էր ինձ վերայ։ Մի տարուց աւելի է, որ հիւանդ էի գրեթէ անընդհատ և չէի կարողանում փող աշխատել, այդ պատճառով պարտքի տակ ընկայ ես որի համար էլ ահա ծախում են տանս սարք ու կարգը, որ պարտքս վճարեն. ի՞նչ պէտք է անեմ արդեօք յեսոյ—այդ Աստուած միայն դիտէ։

Քահանան այս պատմութիւնը որ լսեց, իսկոյն դադարեցրեց պոլիցիականի գործը և հարցրեց թէ ի՞նչքան էր պարտ այն մարդը։

«Հարիւր ու հինգ մանէթ, պատասխանեց ասպիճանաւորը։

Քահանան գրպանից հանեց սկիհի հարիւր մանէթը, հինգ մանէթն էլ իրանից աւելացրեց և տուեց խեղճ մարդու պարտատիրոջը։

Աճուրդը վերջացաւ։ Քահանայի մարդասիրութիւնը ամէն մարդ գովեց. իսկ խեղճ մարդը արտասուք թափելով շնորհակալ էր լինում իւր ազատողից և օրհնում նորա կեանքը։

Յետ դարձաւ քահանան գիւղը և ժողովրդին պատմեց այս անցքը, աւելացնելով թէ՝ Աստուծոյ առաջև պակասութիւն չէ մեզ համար, երբ մենք առաջուան պէս հին սկիհում պահենք սրբութիւնը։ Այն հեզ Փրկիչը, որ չարհամարհեց ծնանիլ ախոռի մէջ, աւելի ուրախ կլինի մեր այս բարեգործութեան վրայ, քան եթէ նոր ոսկեղէն սկիհ գնէինք նորա արիւնն ու մարմինը պահելու համար։

ՔԱՀԱՆԱՅ

Այն ո՞վ է կանգնած ամբիոնի վրայ,
Դողդոջուն ձեռքերն երկինք ամբարձած,
Գրթաուած աչերն լի արտասուքով,
Բազմութեան ուշքը դէպի նա դարձած.
Որին ամենը հայր են անուանում,
Ծանօթ անծանօթ հաւասար յարգում.
Որի լոկ խօսքը օրէնք է նոցա,
Սրտի գաղանիքը նորան են յայտնում.
Քահանայ է նա քաւող մեղքերու,
Միջնորդ Աստուծոյ մարդկան ազգի հետ.
Հովիւ է անխոնջ Քրիստոսի հօտին,
Երկնաձիր գանձին նա է արթուն դէտ։
Երբ մենք թաթախուած Ադամայ մեղօք
Եկանք այս աշխարհ լցեալ ցաւերով՝
Ո՞վ սրբեց մաքրեց մեր հին մեղքերը,
Ո՞վ մեզ սփոփեց իւր սուրբ խօսքերով.
Կամ երբ ժանտախտած ընկած մահճումը

Մատանջ, անյոյս մահ էինք խնդրում,
Պանդխտի նման ամենից թողած՝
Ոչ մեզ առաջինն հասաւ օգնութիւն.
Կամ երբ մոլորուած գառներու նման
Կոյր վազում էինք դէպի խորխորատ՝
Ոչ արդեօք այն օր փրկեց մեզ մահից,
Դիւական գրբէն հանեց անարատ.
Կամ երբ մեղանչիր աչքներս բնաւ
Ձենք համարձակում երկինք ամբառնալ՝
Որի՞ն կանչում ենք միջնորդ հաշտութեան,
Ումո՞վ յոյս ունինք թողութիւն ստանալ.
Եւ կամ զբաղած ունայն գործերով
Մոռացել ենք Աստուած, կրօն, Սուրբ հաւատ՝
Ոչ է մեր տեղը, մեր մեղաց համար
Արտասուք թափում աչքեն յորդառատ։
Քահանան է այն և միշտ քահանան,
Մեր միջնորդ, հովիւ քաջ և աղօթիչ,
Որբոց հայր, եղբայր աղքատ մուրացկին,
Արտասուաց սրբող, յանցանաց քաւիչ։
Ե՛կ պատուենք, եղբարք, այդ սուրբ քահանան,
Սիրենք միշտ նորան մանկական սիրով,
Որ ամբողջ դիշեր իւր որդոց վերայ
Պատրաստ է հսկել անքուն աչքերով.
Նա բոլոր կեանքը զոհեց մեզ համար,
Զուզեց փառք, պատիւ, զբօսանք աշխարհիս.
Քանց սուրբ քահանան էլ ոչ է կարող
Արդեօք մեզ համար լինել հայր բարի։

ԱՆՏԱՌ

Անտառը մեծ օգուտ է տալիս մարդուն. ծառերը մաքրում են օդը և պահպանում ջուրը։ Գարնան ժամանակ ձիւնները հալուելիս՝ ջուրը անտառի հողի մէջ կանգ է առնում արմատների ու մամուռի արանքում, որ մեծ նշանակութիւն ունի։ Բայց որ տեղերում ձիւնը արագ է հալվում՝ ջուրը հեղեղներով թափվում լցնում է վտակներն ու գետերը և ափերից դուրս հոսելով տակով է անում քանդում կամ աւազով ծածկում փչացնում շատ արտեր, շատ բարիքներ. իսկ անտառն այդպիսի վտանգաւոր հեղեղներից փրկում է, թողլ չտալով, որ ձիւնը արագապէս հալուի. նա հալվում է կամաց-կամաց և ջուրը ներս է ծծում հողի մէջ։ Սարոտ երկիրներում այս բանը աւելի նկատելի է լինում։ Պատահել է, որ երբ կտորել են սարի անտառը, ամբողջ պտղաւէտ տափեր չոր ու ցամաք անապատներ են դարձել, սարի հեղեղների կատաղի յորձանքները քերել քշել են սեահողը դաշտի երեսից և նորա տեղը սփռել աւազ ու քար։ Բայց մենակ այս չէ անտառի ծառայութիւնը. նա գարնան ժամանակ ջուրը յետ գցելով՝ իւր մէջ պաշար է պահում չորային ամարան համար։ Բաց դաշտերի վերայից ջուրը շուտով է անց կենում. քիչ-քիչ թէ որ մնում է՝ այն էլ շուտով գոլորշի է դառնում, որովհետև բաց դաշտերում արեգակի զօրութիւնը աւելի սաստիկ ու քամիների հոսանքն աւելի ազատ է լինում։ (Մենք ամենա գիտենք թէ լուացած շորերը երբ են շուտով ցամաքում)։ Այս պատճառով ջերմ ամառը վտակները ցամաքում, իսկ գետերը ծանծաղանում են. էլ նաւերը չեն կարողանում սողալ նոցա վերայով, երբեմն էլ ապրանքներով լի նաւերը տակ են անում ծանծաղուտքի վերայ և մեծամեծ վնասներ հասցնում վաճառականներին։ Ահա այսպիսի դիպուածքում գետը կա-

բող էր պաշարաւոր անտեսի պէս օգնել գործին, բայց չեղած ժամանակ ի՞նչ պիտի անես։

Սակայն սրանով էլ չի վերջանում անտառները կտրատելուց ստացած վնասը։ Անտառները փչացրած տեղերում օդի եղանակն էլ է փոխվում։ Ձմեռը լինում են դաժան ցրտեր ու բուքեր, իսկ ամառը՝ երաշտութիւն, և դորանից ի հարկէ արտերը մեծ վնաս են ստանում։ Ձմեռ ժամանակ անտառը մասամբ տաքութիւն է պահում։ այս նորանից է երևում, որ ծառը երբէք գլխովին չի սառչում։ Ամառ ժամանակ անտառը հով և թացութիւն է տալիս։ Բացի դորանից նկատուած բան է, որ անտառուտ տեղերում հաղիւ են պատահում փոփոխական ցաւեր, ժանտախտներ, որովհետև այդ տեսակ հիւանդութիւններով մարդիկ վարակվում են օդի միջնորդութեամբ, իսկ ծառերը մաքրում են օդը. գուցէ դուք ինքներդ փորձած լինիք, որ անտառումը մարդ կարծես թեթև ու ազատ է շնչում։

Ահա ինչքան օգուտներ է տալիս անտառը մարդուն. դեռ չեմ յիշում ես այն ծառայութիւնը, որ անում է նա բազմաթիւ թռչուններին ու չորքոտանիներին, կերակրելով նորանց, և ոչ այն որ նա վառելիք է հասուցանում մեզ անպակաս ու ոներ շինելու նիւթեր, նոյնպէս և շատ ուրիշ կարասիք ու գործիքներ։

ԾԱՌԵՐՆ ՈՒ ԿԱՅԻՆԸ

Ծառերն անտառում երբ շատ նեղացան
Կայնի ձեռքիցն, ու էլ չիմացան
Ի՞նչ անեն, որ իրանց գլուխը պահեն՝
Թորհուրդ արին որ մի հնարք անեն։
«Կայինն ճվ է, որ մեզ կարողանայ
Զօռ անել յաղթել, ի՞նչ մեծ բան է նա։

Այսպէս ձայն տուեց ծառերից մէկը։
«Մենք որ կոթ չտանք՝ կացինն ի՞նչ է որ
Ցանդգնի անել մեզ կտոր կտոր»։

Թող իմացողը ինքն իմանայ
Եւ ի զուր տեղը կացնից չնեղանայ,—
Ով որ կոթ կտայ պողվատի կացնին՝
Թող «հոգուցն» ասէ առաջ իւր անձին։

ՍԵՐԿԵՎԻԼԻ ԾԱՌ

Մեր այգում կայ մի հինօրեայ մեծ ու բազմաճիւղ սերկևիլի ծառ։ Նորա արմատները խոր մտած են գետնի տակ, իսկ դէպ ի վեր բարձրացած է նորա բունը որ ծածկուած է դրսի կողմից գորշագոյն ճաքճքած կեղևով։ Բարձրում բունը բաժանվում է քանի մի ճիւղերի, իսկ ճիւղերը բաժանվում են ոստերի. սոցա վերայ կանաչ սիրուն թիթեռնակների նման կախկախուած են տերևները։ Աշնան վերջերին մօտ տերևները դեղնում ու թափվում են, իսկ ոստերի վերայ ամբողջ ձմեռը մնում են փոքրիկ ամուր կինամոնագոյն պտոյտներ (բոխեր, կոկոններ)։

Սերկևիլենին ամբողջ ձմեռը մերկ է լինում, բայց գարունքին, երբ արևի ջերմութիւնը շատանում է և ձիւնը հալվում՝ նորա արմատները սկսում են թաց գետնից ծծել սննդական հիւթեր։ Հիւթերը բարձրանում են վեր ճիւղերի ու ոստերի միջով և սկսում են լցնել փոքրիկ պտոյտները, որ անշարժ կացած էին ամբողջ ձմեռը։ Նոքա ուռչում—փափկում են. նոցա կինամոնագոյն կեղևները (թեփուկները) յետ են բացվում և նոցա տակից սկսում են դուրս երևալ սիրունիկ կանաչ տերևներ և վարդագոյն ծաղիկներ։ Երբ ծաղիկները

թառամում են և նոցա թերթերը թափում, այն ժամանակ նոցա տեղն երևում են պարիկ կանանչուկ սերկևիլներ։ Սերկևիլը երեսից ծածկուած է լինում բրդոտ հագուստով, կարծես սուգ հագած լինէր։ Այս է պատճառը, որ մեր ժողովուրդը տխրած ու մրկած մարդուն ասում է. «ունքերն իրար է տուել սերկևիլի բրդի պէս»։ Երկար ամառը շատ մնալուց յետոյ լցվում է ու գեղնում ինչպէս խունկ, նա սկսում է ծառից թափուիլ (կաթուկ—տալ)։ Սերկևիլը քաղում են ծառից, և ահա պատրաստ է, որ մենք անոյշ անենք այդ համեղ, գեղեցիկ պտուղները։ Աշնան վերջերին դարձեալ սկսում են դեղնիլ տերևները և թափուիլ, և այն շարունակ, ինչպէս ասուեցաւ։ Այսպէս է ահա կեանք անցկացնում ծառը տարէց տարի։

ՈՍՏԻԿ

Ո՞ւր ես առաջ գնում, խեղճ ոստիկ ծառին,
Տես, չձգեն քեզ ալիք յանդունդը ծովին,
Ինչպէս անտէր որբիկ, թշուառ, անպաշտպան,
Որ ընկել է ձեռքը չարանենգ մարդկան։
Չես ունենալ ոստիկ, ազատութեան հնար.
Զոհ կլինիս, խեղճիկ, ալեաց չարաչար։
«Զեմ ղարհուրում ծովից, ոստիկն ասաց,
Կեանքս արդէն կորել է, վաղուց եմ ցամքած։
Հարուստ այն ծառէն ինձ պոկեց հովը,
Հիմի ինչ, թող տանէ ուր ուզէ ծովը։
Հիմկուց դէնն ի՞նչ է էլ ինձ մրխիթար,
Դալար ծառին կրպչելու էլ չունիմ հնար»։

ԱՐՏ ԵԻ ՄԱՐԳԱԳԵՏԻՆ

Ի՞նչքան փառաւոր, ի՞նչքան ընդարձակ է այս ցանքի դաշտը։ Նայեցէք այս տեղ, այս հիանալի արտերին. մէկ կող-

մում կորեկի գլուխը ծռած՝ կանաչ հասկերը ծածանվում են թեթև զեփիւռից, միւս կողմում արդէն հասած գարին սրել է երկայն ընչացքը—քիստերը, այնտեղ լիուլի հասկերով գլուխ է բարձրացել ոսկեշող ցորենը։ Նայիր, կարծես արտի երեսով մի շուաք անցաւ, այդ ահա այն ամպիցն է, որ թեթև քողի պէս արևի առաջը բռնել է։ Ո՞հ, ինչքան է ուրախանում մարդ, մոիկ տալով այս լայնարձակ վարելահողի, այս նազելի արտերի վերայ։ Մարդը վարեց հողը, մշակեց, սերմը ցանեց՝ և ահա հողը յետ դարձրեց իրան յանձնած բանը մէկին ասան, մէկին քսան աւելացնելով, կարծես իմանալով, որ խեղճ երկրագործը նորանով պէտք է և՛ ապրի, և՛ մասը թողնի գալոց աշունքին ցանք անելու համար։ Բայց նորանով միայն մարդն ինքը չէ կերակրվում, այլ և նորա արջառը, որ ինքն էլ իւր կողմից կերակրում է մարդուն, տալով նորան կաթն, միս մորթի, և աշխատակից է լինում նորան։

Ցանքի համար ուելի պարարտ հող է հարկաւոր—սևահող։ Ոչ ցամաք աւազի վերայ հաց կրուանի, ոչ կաւի վերայ։ Այնպէս տեղեր կան, որ շատ հին ժամանակներից՝ իվեր փտած բոյսերից և անասուններից սևահող շատ է հաւաքվել, կան տեղեր էլ, ուր որ հողը թոյլ է կամ, ինչպէս ասում են ուժից ընկած է. այդպիսի տեղերն ահա պէտք է ածել ամեն տեսակ փտած բաներ, որովհետև նոցանից սևահող է դոյանում։ Երբ որ մի անտառ են կրակ տալիս ու նորա տեղը արտ շինում, այնտեղ էլ առաջին անգամը լաւ հաց է բուսնում, պատճառ, մոխրի և ածուխի մէջ էլ կայ շատ այնպիսի նիւթ, որով բոյսը կարող է սնանիլ։ Բայց անտառն այրելը ձեռնտու չէ, անտառը տնտեսական գործի մէջ հոցից պակաս չէ օգտակար, և նորան շատ խնայողութեամբ պէտք է կտրել։

Ի՜նչ գեղեցիկ տեսարան է։ Եղջերաւոր անասունների երամներ առաւօտեան ցօղով կենդանացան փափուկ խոտն արածելով՝ ծանր ու բարակ ճեմում են դաշտի վերան։ Սիրուն գառնուկը ուրախ-ուրախ խայտում վազվզում է, և յանկարծ տեսնելով որ մօրից հեռացել է՝ սկսում է մայել ու կանչել. մայրը միւս կողմից ձայն է տալիս թէ չէ՝ մօտը ճեղքերով հասնում է մօր մօտ և հասածին պէս պարկում ու կաթ ուզում։ Ահա մի խումբ մեղուներ էլ մեր չորս կողմն են թռչկոտում։ Նոքա իրանց հեռաւոր ընակութիւնը թողած՝ եկել են որ ծաղկանց անոյշ հիւթովը կշտանան։ Երբ որ նոքա բաւականին գանձ հաւաքած կլինին. ամեն մէկը իւր թանկագին բեռը շալակած կդառնայ իւր բջիջը, որ նորանից քաղցրահամ մեղր պատրաստէ մարդու համար։

Մենք բաւականին մանեկանք արտերի մէջ. տուպեր, դեղնածաղիկներ, վայրի կակաչներ քաղեցինք (սոքա ցանքի համա վնասակար բոյսեր են, սորանց հարկաւոր է բաղհանել). Գնանք այժմ դէպի ազատ մարգագետինը։

Ի՜նչպէս հիանալի է այս լայնասփիւռ կանաչը. մէջն ընկած մարդու կէսից վերն է երևում միայն։ Բարձրանանք այս թումբի գլուխը, նա բոլորովին ծածկուած է կարմրականաչ առուոյտով (եօնջայով). մանր թիթեռնակները թռչկոտում են ծաղկից-ծաղիկ, ամեն կողմից լսվում է ճպուռների ճռճռոցը. բզզում է թաւուտ մեղուն. ահա՛ վեր թռաւ խրանած արտուտն էլ։ Թումբի գլխից քո առաջև ծաւալվում է լայնարձակ դաշտը հողաբ ու մի ծաղիկներով զարդարուած, մէկ տեղ կարմրաշագիկ տուպը (լալաղաբ), միւս տեղ վայրի կակաչը, մէկ տեղ հովտաշուշանը. միւս տեղ դեղին նարկիսի թումբը՝ գլուխները թեքած երևում են թեթև հովի տակ. ահա և կապուտակ մանուշակն ու մորու դեղին ծաղիկն էլ այս տեղից են դուրս բարձրացրել, որ գարգարեն թումբի կուրծքը շուրջանակի։

ՋՈՒՐ

Ջուրը հեղուկ մարմին է, այսինքն այնպիսի մարմին որի մասնիկներն այնքան թոյլ են կցուած իրար հետ որ անդադար ջոնք են անում իրարից հեռանալու։ Այդ մասնիկները չեն կարող մէկ-մէկի վրայ մնալ մինչև որ նորանց չլահես մի ամանի մէջ։ Սակայն շատ փոքր քանակութեամբ ջրի մէջ մասնիկները կարող են իրար կցուած մնալ կաթիլաձեւ, ինչպէս օրինակ, շատ անգամ մի հատ կաթիլը կախված մնում է ոստերի կամ տերևների ծայրում, մինչև որ քամին վայր է գցում նորան։ Այդպիսի յատկութեան համար ջրին անուանում են կաթիլահեղուկ մարմին։

Ջուրը կարող է լուծել իւր մէջ շատ մարմիններ,—աղ շաքար, կիր, բոյսերի կամ անասունների նշխարներ և այլն։ Ջրի այդ յատկութիւնից է, որ բնութեան մէջ յստակ ջուր չէ կարելի գտնել, որովհետև նա անդադար հոսում է հողի զանազան շերտերով և հաղորդակցում զանազան մարմինների հետ։ Ամենից յստակ ձիւնի կամ անձրևի ջուրն է։ Իւր մէջ կիր պարունակող ջուրը կոչվում է կրային ջուր, նա կոշտ է լինում և չի լուծում սապոնը։ Ծովի ջուրը դառնաղի համ ունի, որովհետև զանազան աղեր է պարունակում իւր մէջ։ Մի քանի գետերի և առհասարակ լճերի մէջ ջուրը պարունակում է իւր մէջ գործարանական մնացորդներ, որոնք փտելով նեխում են և սկսում են ջուրն ապականել. յստակ ջուրը միշտ նոյնն է և ամենևին չի ապականուիլ։ Հանքային ջրերն ունենում են այն հանքերի համը, երբեմն էլ գոյնը, որոնց միջից անցնում են նոքա մինչև գետնից դուրս բղխելը։ Ամեն մի խառնուրդից զտած յստակ ջուրը շատ թափանցիկ է լինում և ոչինչ համ ու հոտ չունի։

Ամենքս էլ գիտենք, որ ջուրը միշտ հեղուկ չի մնում.

սաստիկ ցրտից նա սառոյց է դառնում, իսկ սաստիկ տաքից —գոլորշի։ Եթէ մի ամանի միջի ջուրը երկար ժամանակ եռացնենք՝ բոլորովին կսպառուի։ Ո՞ւր կերթայ նա. կգոլորշիանայ ու կցնդի օդի մէջ։ Ջրի մանրիկները, որ առանց էն էլ թոյլ էին կցուած իրար հետ, ջերմութիւնից առաւել և առաւել անդայտանում են (խառութիւնը կորցնում են), այնպէս որ վերջապէս օդիցը աւելի թեթևանալով բարձրանում են վեր։ Մի պնակ որ պահենք եռացող ջրի վերայ՝ պնակի երեսին կը ժողովուի նա իբրև կաթիլներ. սորանից կարող ենք իմանալ, որ ջուրը չէ անհետանում իսպառ։ Ջրի գոլորշիքը դիպչելով սառն պնակին՝ պաղում են խտանում և ստանում կաթիլների ձև։

Սակայն առանց տաքացնելու էլ ջուրը կարող է գոլորշիանալ. թրջեցէք ձեր թաշկինակը և կախ արէք թէկուզ ցուրտ սենեկի մէջ, մի քանի ժամանակից յետոյ կտեսնէք, որ թաշկինակը ցամաքել է, այսինքն ջուրը գոլորշիացել է նորա միջից, թէև դուք չէիք տեսած գոլորշին։ Չէք տեսել դուք գոլորշին նորա համար, որ պաղ թաշկինակից պաղ էլ սենեկի մէջ ջրի մանրիկները կամաց-կամաց են գոլորշիանում այն ինչ եռացնելիս նոքա շատ արագ ցնդելով ընկնում են իսկոյն պաղ օդի մէջ, և շատ արագութեամբ պաղելով փոքրիկ կաթիլներ են գոյացնում, որոնց միութեանը շոգի կամ գոլորշի ենք ասում մենք։ Ահա ինչու ձմեռը տեսնում ենք ձիուց բարձրացող գոլորշին, իսկ ամառը չենք տեսնում, թէև, յայտնի բան է, ձին ամառը շատ է քրտնում, քան թէ ձմեռը։

Եւ այսպէս, մի և նոյն ջուրը զանազան ջերմ աստիճանների տակ չորս տեսակ փոփոխութիւն է կրում,—իբրև սառուց, հեղանիւթ, գոլորշի կամ մանրիկ կաթիլներ, և իբրև գազ կամ օդակերպ գրութեամբ, Մենք գիտենք, որ մոմը հեղուկ է դառնում տաքութիւնից. երկաթն էլ սաստիկ տաքութիւնից առաջ կակղում, յետոյ հեղուկանում է. ոսկին ոչ

միայն հեղուկանում, այլև կարողանում է շոգիանալ։ Հեղուկ մնդիկը սաստիկ ցրտից այնպէս է սառչում, որ նորան կարելի է կռել ինչպէս արծաթ, բայց երբ եռացնեն՝ նորանից կգոյանայ գոլորշի, որ շատ վնասակար է առողջութեան համար։ Զանազան մարմիններ ջերմութեան ենթարկելով՝ բնագէտ մարդիկը համոզուել են, որ ամեն մի մարմին ջերմութենից ընդարձակվում է, ցրտից—դուռ է գալիս։ Բայց ի՞նչ ասել է մարմին ընդարձակվում է.—ասել է, թէ նա առաջուանից աւելի տեղ է բռնում, չփոխելով իւր կշիռը։ Վերցնենք մի ֆունտ ծանրութեամբ սպունգ և սեղմենք նորան ձեռքներիս մէջ, նորա կշիռը նոյնը կմնայ, բայց նա աւելի քիչ տեղ կբռնի, բայց անենք ձեռքներս նա դայ ձեռ կընդարձակուի առաջուան չափ. ոչինչ կշիռ չի աւելանալ նորան։ Մի գաւաթ հալած արճիճ. քիչ կկշռէ, քան թէ նոյն չափով ձոյլ արճիճը. իւղը երբ սառչում է՝ նորա ծաւալը փոքրանում է ամանի մէջ, և այլն։ Ահա ինչու մի կտոր ձոյլ արճիճը կսուզուի հալած արճճի մէջ, և պինդ մոմը—հալած մոմի մէջ։

Բայց այս ընդհանուր կանոնից բացառութիւն է կազմում ջուրը՝ մի բաժակ-սառուցը մի բաժակ ջրից թեթև է. եթէ մի շիշ ջրով լցնենք և բերանը խցելով ցրտի տակ դնենք, այն ժամանակ շիշը կտրաքի, պատճառ, սառուցը շատ տեղ է բռնում, քան թէ այնքան ջուրը, որքանից նա գոյացած էր։ Ահա ինչու սառուցը թեթև է ջրից, և որովհետև թեթև է, ուստի և լողում է ջրի երեսին ու չի սուզվում։

Եթէ մենք սկսենք ջուր ու իւղ սառցնել երկու ամանների մէջ՝ կնկատենք որ իւղը տակիցն է սառչում, իսկ ջուրը ընդհակառակն, երեսից։ Ջրի այս զարմանալի յատկութեանը պարտական ենք մենք նորանով, որ գետերն ու լճերը ձմեռն երեսից են միայն սառուց կապում, իսկ սառուցի կեղևը պահպանում է տակի ջուրը սառչելուց։ Եթէ որ ջուրն էլ ուրիշ

մարմինների պէս սառչելիս սեղմուէր և ոչ թէ լայնանար, այն ժամանակ մեր գետերն ու լճերը կսկսէին ամանի միջի իւղի պէս տակից սառչել, բոլոր ջուրը կգոյացնէր մի սառցեղէն զանգուած և բոլոր ջրային կենդանիքը ձմեռը կատակէին։

ՕԴ.

Մի փոքրիկ փետուր դնենք սեղանի վերայ և հովհարենք նորան դրքով։ Մենք ձեռք չենք տալիս փետրին, բայց նա ինչքո՞ւ է ընկնում։ Ի հարկէ վախենալուց չէ այդ, որովհետև փետուրն անշունչ առարկայ է։

Դրքի և փետուրի մէջ տեղը կայ երևի մի երրորդ մարմին, որ մենք չենք տեսնում։ Այդպէս էլ է, այնտեղ կայ օդ։ Երբ դողդողալով շարժում են ծառերի տերևները, երբ ծածանվում են ալիքների նման ոսկեները, երբ մեր փէշերն ու թևերը, երբ թող է բարձրանում, կամ յանկարծ մեր գլուխը թռչում է գլխներիցս,—պէտք է գիտենանք, որ այդ միջոցին շարժում է օդը։ Ոչ օդն ենք տեսնում մենք, ոչ նորա հոսանքը—շարժմունքը, բայց մենք կարող ենք նկատել նորա ներգործութեամբ յառաջացած երևոյթները։ Օդի սաստիկ շարժմունքը կամ հոսանքը քամի է անուանվում, իսկ աւելի ուժգինը—մրրիկ, որ երբեմն կարողանում է ծառեր պոկ տալ և տանիքներ փրցնել։

Եւ այսպէս մենք թէև օդը չենք տեսնում, բայց մեր երկու արտաքին զգայարաններով—շօշափողութեամբ և լսողութեամբ, կարողանում ենք գիտենալ, որ նա կայ։ Բայց ինչքո՞ւ օդը չենք տեսնում—Պատուհանների ապակին երբ որ շատ պարզ ու թափանցիկ է լինում, կարծում ես թէ իսկի ապակի չկայ, մինչև որ չես շօշափում նորան։ Ապակին չենք տեսնում, որովհետև նա շատ թափանցիկ է։ Իսկ օդը ևս առաւել թափան-

ցիկ է։ Սակայն երբ շատ հաստ է լինում օդի շերտը կարող ենք տեսնել, նա կապոյտ գոյն կունենայ. այսպէս էլ ջուրը, ապակին, կապոյտ գունով են երևում մեզ, երբ որ շատ են լինում։ Մեր երկրի չորս կողմը պատած է յիսուն վերստաչափ հաստութեամբ օդ, որ մթնոլորտ (ատմոսֆեր) է ասվում։ Դորա միջով է, որ կապոյտ է երևում մեզ լայնածաւալ երկինքը։ Մթնոլորտն էլ շատ թափանցիկ է. նորա միջով մենք տեսնում ենք երկնքի աստղերը։

Որովհետև օդը չենք տեսնում, նորա յատկութիւններն էլ չենք կարող տեսնել, այս պատճառով պէտք է ճանաչենք նորա յատկութիւնը միայն փորձերով։ Զննենք, օրինակ, թէ ինչպէս է ներգործում նա ուրիշ մարմինների, թող ասենք ջրի վերայ։

Վերցնենք մի դատարկ բաժակ և մի ջրով լցրած խոր աման. բաժակը գլխիվայր պահենք և սկսենք փոքր առ փոքր խրել ջրի մէջ։ Մենք կտեսնենք որ ջուրը բաժակի մի մասը կլցնի, նորանից վեր էլ չի բարձրանալ, թէև ամբողջ բաժակը ջրի մէջ խրենք։ Ի՞նչն է ուրեմն արգելք լինում ջրին բարձրանալու։ Բաժակի մէջ ուրիշ ոչինչ չէր կարող լինել բացի օդից. կնշանակէ օդը մարմին է, որ իւր համար բռնում է մի որոշ տեղ և իւր տեղը չի տալիս ուրիշին, օրինակ ջրին։ Բաժակը ջրի մէջ խրելիս զգում ենք որ նա ընդդիմանում է. այս ոչ թէ բաժակը, այլ օդն է ընդդիմանում։ Թող մի քիչ ծռենք բաժակը, տեսէք ինչպէս շուտ կխրվի նա ինքն իրան։ Եւ մենք մինչև անգամ տեսնում ու լսում ենք նորան ջրի միջից դուրս գալիս մեծ պղպջակներով, որոնք մակերևութին հասածին պէս տրաքում են։

Գցենք բաժակը ջրի մէջ կողքի պահած, այնպէս որ նա բոլորովին լցուի ջրով։ Այժմ շուռ տանք բաժակը ջրի մէջ գլխիվայր ուղղաձիգ դիրքով և սկսենք դուրս հանել նորան,

այնպէս անենք սակայն, որ բաժակի շրթունքն իսպառ չդուրս գան ջրից. մենք դուրս կհանենք ոչ միայն բաժակը, այլ և ջուր նորա մէջը լցուած: Ինչո՞ւ հապա ջուրը վայր չի թափվում բաժակի միջից:—Որովհետև օդը իւր ծանրութեամբ ճնշում է ամանի ջրի մակերևոյթը. ջուրն էլ մնում է բաժակի մէջ, որովհետև օդից դատարկ է լինում նա: Դուրս ծծեցէք օդը մի որ և է խողովակի միջից և յետոյ թողլ չտալով, որ նորա մէջ օդ մտնի, խրեցէք մի ծայրը ջրի մէջ, ջուրը արագութեամբ կը բարձրանայ խողովակի մէջ: Ի՞նչն է այն տեղ քշում նորան:

Ուրեմն օդը թափանցիկ և ծանրութիւն ունեցող մարմին է, թէև նորա ծանրութիւնը շատ աննշան է: Մի հեշտ փորձով գոնէ կարող ենք գիտենալ, որ օդը ջրից թեթև է:— Մի շերշ բերան խցենք ու գցենք ջրի մէջ, նա չի խրվիլ. այժմ լցնենք նորան ջրով նա իսկոյն տակ կնստի, կնշանակէ ջրով լի շերշը ծանր է, քան թէ օդով լի շերշը:

Ամենքդ էլ տեսած կլինիք, թէ ինչպէս մանուկները գրչից կամ մհասուրի խողովակից տրաքիչ են շինում: Գրչի մի բերանը անց են կացնում վարունգի կամ սեխի կեղև, և կամ սհասուրի խողովակի մի բերանը անց են կացնում որպիսի և իցէ խցան. միւս բերանից խրում են ճիպոտ մխոցի նման, այնպէս որ կողքերով օդ չկարողանայ անցնիլ. մխոցը դեռ խցանին չհասած՝ նա տրաքելով դուրս է թռչում խողովակից: Ինչի՞ն է այս.. մխոցի ու խցանի արանքում գտնվում է մի երրորդ մարմին, օդ, որ ճնշելով դուրս է թռցնում խցանը: Խողովակի մէջ մխոցը յետ ու յառաջ քշելով, երբ դեռ խտանը դուրս պրծած չի լինում, կարծես թէ մի բան ընդդիմանում է զապանակի պէս մխոցի ուխցանի արանքում, այդ օդն է, որ մխոցը ներս հրելիս սեղմվում է, իսկ դուրս քաշելիս ընդդարձակվում. օդի այդպիսի յատկութիւնը, որ ճնշուելիս դուռ է դալիս, իսկ

ազատ մնալիս դարձեալ ընդարձակվում—ասվում է առաձգականութիւն:

Վերցնենք այժմ մի փամփուշտ, պաղ օդ լցնենք մէջը, բերանը պինդ կապենք և դնենք տաք վառարանի մօտ. փամփուշտը հետզհետէ կուռչի, և եթէ թողնենք նորան այն տեղ՝ կարմրի: Դրսից օդ ի հարկէ չի մտել փամփշտի մէջ, ուրեմն միջի օդն է, որ տաքանում և ջերմութիւնից լայնանում է. ապա ուրեմն օդն էլ բոլոր միւս մարմինների նման ջերմութիւնից ընդարձակվում, իսկ ցրտից սեղմվում է: Ձմեռն օդը պաղ ու թանձր է, իսկ ամառը—տաք ու անօսր: Տաք օդը թեթև է լինում պաղից և վեր է բարձրանում, եթէ մի մեծ ու թեթև գունդ լցնենք շատ տաք օդով, գունդը կարող է թռչել պաղ օդի մէջ:

Բայց առանց տաքանալու էլ օդը միշտ աշխատում է ընդարձակուիլ, նորա անտեսանելի մասնիկները ջանք են անում անդադար ցրիւ տալ և եթէ քիչ օդ պարունակող մի փամփուշտ դնենք օդից զուրկ մի տարածութեան մէջ, նա արագապէս կուռչի և մինչև անդամ կպայթի: Ջուրը ձգտում է տարածիլ գետնի երեսով, իսկ օդը ձգտում է տարածիլ դէպի ամեն կողմ. ահա ինչու օդը և ուրիշ նորա նման մարմիններ կոչվում են ոչ հեղուկ, այլ գազանման մարմիններ: Ջրի մասնիկները միայն վատ են կցուած իրար հետ, իսկ օդի մասնիկները ոչ միայն վատ են կցուած, այլև աշխատում են իրարից հեռանալ: Այսպէս են լինում ջրի մասնիկներն էլ, բայց միայն այն ժամանակ, երբ ջուրը գազի նման սկսում է բարձրանալ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ օդը և բոլոր գազերը պէտք է շատ թեթև լինին ջրից:

Օդը կարևոր է ամեն մէկ կենդանու շնչառութեան համար, մինչև անդամ ձկների համար, չնայելով որ նոքա ջրի մէջ են բնակվում: Եթէ ձուկը գցեն մի ջրով լի ամանի մէջ

և այնպէս փակեն բերանը, որ օդը ներս չերթայ, ձուկը կսատակի, թէև ջրի պակասութիւնը չի լինիլ նորա համար։ Երևի դուք շատ անգամ կլինիք նկատած, որ ջուրը եռ գալիս նորա երեսին անընդհատ բարձրանում ու փուլ են գալիս փամփշտակները, այդ՝ օդն է, որ ջերմութիւնից հալածուած դուրս է թռչում ջրի միջից։ Եթէ շատ եռացրած թէև յետոյ պաղած, ջրի մէջ գցենք ձուկը, նա կսատակի, որովհետև այդպիսի ջրի մէջ օդ չի լինիլ։ Խլուրդն էլ իւր խոր գետնափորի մէջ, հողի տակ զեռացող ճճին էլ շնչում են։ Ամենայն տեղ էլ, ուր մարդիք կարողացած են լինիլ, սարերի կատարին, թէ այրերի մէջ, գտնուել է օդ։ Սորանից եզրակացնում ենք, որ օդը մի ծովի պէս շրջապատում է երկիրը, և այդ օդեղէն ծովի յատակի վերայ մեն ենք գալիս մենք, ինչպէս ձկները լողում են ջրի մէջ։ Օդը մտնում է ջրի և մինչև անգամ հողի մէջ։ Գոհանանք ուրեմն Արարչից, որ այսպէս առատաձեռնօրէն շրջապատել է մեզ այն թանկագին նիւթով, առանց որի աւելի շուտով կմեռնէինք մենք քան թէ առանց հացի ու ջրի։

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ԻՆՉԻՀ ՄԵՐ ԱԶԳԸ «ՀԱՅ» Է ԿՈՉՎՈՒՄ

Մեզանից 4000 տարի առաջ Բաբիլոն քաղաքում մէկ քաջ ու հսկայ մարդ կար, որ տիրում էր այն կողմերին. Նորա անունն էր Բէլ կամ Ներբովթ: Այն ժամանակներն աշխարհը տակաւին խորին հեթանոսութեան մէջն էր ինչպէս որ այսօր էլ շատ անկիրթ ազգեր: Եթէ մի մարդ ազգի մէջ մեծ անուն էր հանում իւր քաջութեամբ յաղթութեամբ կամ բարեգործութեամբ՝ Նորան իբրև Աստուած էին պաշտում: Այդպիսի փառքի էր արժանացել Բէլն էլ իւր քաջութիւններով:

Բէլը չափազանց գոռոզացած իւր համարմունքով՝ մտքումը դրեց, որ բոլոր մերձակայ ժողովրդներին իրանց երկիրներովը հանդերձ ձեռքի տակն առնի ու իրար հպատակեցնի: Այդ ի հարկէ շատ ուրիշ քաջ տղամարդկանց սրտին ծանր թուալու բան էր: Եւ ահա նոցանից մի առաւել ազատասէր ու կորովի մարդ, «հաստաբազուկ, անձնեայ և գեղապատշաճ», Հայկ անունով, չկարողանալով դիմանալ Բէլի այդ յանդուգն բռնասիրութեան՝ ապստամբեց, Նորանից, ժողովեց իւր որդիներին, թոռներին ազգականներին ու բարեկամներին 300 հոգու չափ, հեռացաւ Բաբելոնի սահմաններից և եկաւ բնակութիւն հաստատեց Արարատեան երկրում, Այդ տեղ դեռ

առաջուանից մի ցիր ու ցան ժողովուրդ էլ կար, որ իսկոյն հպատակեցաւ Հայկին:

Անձնամոլ թագաւորը տհաճ լինելով այս բանի վերայ մտքում դրեց առաջ կակուղ վարուել Հայկի հետ և պատգամաւոր ուղարկեց իւր որդուն, որ Հայկը գայ հնազանդի իրան և բնակվի իւր երկրի մէջ ուր կուզենայ: Բայց Հայկը զայրացած մերժեց Բէլի հրաւէրը:

Այն ժամանակ գոռոզ հսկան մեծ ամբոխ ժողովեց իւր հպատակներից և կատաղի հեղեղի պէս գնաց Հայկի վերայ: Այս բանը երբ որ լսեց Հայկը դլխին հաւաքեց իւր կորիճ ու քաջաղեղ մարդկանց և պատրաստուեցաւ հանդիպելու ասուաւածանալ ցանկացող Ներբովթին, թէպէտ Հայկի կորիճների խումբը փոքրիկ էր, բայց նա քաջալերական խօսքերով ոգևորեց Նորանց, և նոքա աչքի առաջ ունենալով իրանց անցուցանելի անկախ կեանքը՝ սիրտ առին, որ քաջութեամբ դէմ կենան թշնամու բազմաթիւ զօրքին:

Արդարև, հենց Նորանն էյաղթութիւնը, ով որ մի գործ ձեռնարկելիս հաստատ կամքով ու սրտով է սկսում Հայկը իւր բոլոր քաջերով բռնութիւնն ատող մարդիկ էին, ուստի և ամենքն էլ լաւ համարեցին քաջութեամբ մեռնիլ, քան թէ կրկին անգամ Բէլի նման բռնաւորի ձեռքի տակ ընկնիլ: Եւ ահա, երբ որ երկու կողմից կռուողները ճակատ ճակատի եկան, Հայկը դիտեց ուղղակի զրահաւորված Բէլին, լարեց աղեղը և իւր ահագին եռանկիւնի նետը ցցեց Նորա կուրծքի մէջ: Վայր ընկաւ հսկան, սարսափեց Նորա զօրքը այս տեսնելով և ցիր ու ցան եղաւ ու փախաւ:

Դորանից յետոյ Հայկի ժողովուրդը սկսեց ապատ կերպով ապրիլ Արարատի սահմանում, և հետզհետէ աճում ու բազմանում էր ընդլայնելով և իւր բնակաւորած երկիրը: Փոք-

բիկ ազգը իւր նահապետ Հայկին դիւցազնի յարգանք տուեց և նորա քաջ ու հռչակաւոր անուամբ կոչվեցաւ «Հայ ազգ»։

Ահա որտեղից և էրբ է ծագել Հայ անունը։

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Քեզ ողջոյն զուարթուն
Առուգահասակ գարուն.
Քեզ ողջոյն բիւր անգուն
Տալիս է Հայոց—Տուն։
Անուշաւանի
Սօսկք տերևով
Ծիտերը ծառից
Իւրեանց ճրռուողով,
Օրհնում են գալդ.
Երկնքի դեսպան,
Դու ես մեր կեանքի
Պաշար ու պաշտպան։
Երբ հեղիկ մօտեցար
Մասիսի դաշտերին՝
Բքածին ամպերը
Տարագիր գնացին,
Հին լեռը բացեց
Իւր թաւուտ կուրծքը.
Քեզ կանաչ դիպայ
Սփռեց հովիտը։

Սիրահար սոխակը
Իւր վարդի յետքից
Վազեց Արարատ
Շինել իւր բունը։
Շատ երկար Հայաստան
Քո գալուն սպասեց,
Ծաղկեցաւ նա ալեօք,
Շատ լացեց արտասուեց։
Տիսուր ձմեռը
Մասնաց գագաթը
Թաղեց անխնայ
Ցուրտ ձիւնի մէջը.
Կարօտ շատ նստաւ
Դալար արօտի.
Ցով դարձաւ թափած
Արտասուքն աչքի։
Հին Մասիս միւս անգամ
Զարթեցաւ խոր քնից,
Զարս բոլորը ծաղիկով
Ծառերով զարդարեց։

ԳԱՐՈՒՆ

Դեկտեմբերի կիսից արդէն օրերը սկսում են նկատելի կերպով երկարիլ, իսկ մարտի 9-ին ցերեկն ու գիշերը հաւասար են լինում։ Այդ պատճառով էլ գարնան ոկիզբը համարվում է մարտի 9-ը։ Արեգակը ոչ միայն երկար ժամանակ է մնում

երկնքի վերայ, այլ և օրէցօր աւելի է ջերմացնում։ Ձիւնը փոքր առ փոքր սկսում է հալուել և երկրի երեսով ջրերը առուացած վազում են դէպի գետերն ու լճերը։ Սառուցն էլ արդէն սկսում է խոնարհիլ արևի ճառագայթների առաջև։ Տեղ-տեղ գետերի ափերում գոյանում են ընդարձակ ջրադաշտեր, որովհետև ջրերը ամելով ուռչում դուրս են թափվում ափերից։ Երկինքն սկսում է աւելի պարզել և օրն աւելի ջերմանալ։

Դեռ բոլոր ձիւնները չվերկացած՝ արդէն այս ու այն տեղ սկսում են դուրս երևիլ հին դեղնած խոտի մնոից պայծառ կանաչ բողբոջներ։ Արտուտն էլ ցորենի ցանքը սկսում է թաւիշով պատել գետնի երեսը։ Առաջին խոտի հետ բացվում են առաջին ծաղիկներն էլ։ Կապուտաչք ձնծաղիկը գլուխ է դուրս բերում հին տերևների տակից։ Տեղ-տեղ լոյս է ընկնում սառատանի ձնխարակնս էլ. (առիւծատամն), իսկ թուփերի տակ ծիլ են արձակում ծնեբեկն ու թրթնջուկը։ Ծառերը նոյնպէս զարթնում են ձմերեան թմրութիւնից և արևի ճառագայթներով ջերմացած՝ սկսում են լցուիլ հիւթերով։ Եթէ այս միջոցին ձեղքենք ուռենու կամ բարդու կեղևը, տարանից հիւթ կկաթի։

Տերևների պտոյտները (բոխերը), որ աշունքից մինչև այժմ մնացած էին անկատելի ու միակերպ, սկսում են ուռչել, ամիլ, թափ տալ իրանց կինամոնագոյն թեփուկը և արձակել կանաչ տերևներ։ Թուփերն ու ծառերը ամենքն էլ աշխատում են տօնել գարունքը թաւշազարդ զգեստով։ Մայիսի սկզբում արդէն ամեն բոյս կանաչած է լինում։ Անտառները դարձեալ տերևաւորվում են իսկ դաշտերում սկսում են գլուխ բարձրացնել հազար տեսակ ծաղիկներ։ Ամեռը թաղաւորում է միակերպութիւն, իսկ գարունքը ամեն օր մի նոր բան է լոյս ընկնում. կամ համեստ կերպով դուրս է գալիս փշոտ թուփերի տակ քնքոյշ մանուշակը, կամ շուշանն է տարածում իւր անոյշ հոտը շրջակայքում կամ փայլում են կանաչի մի-

ջից մորու դեղին ու սպիտակ ծաղիկները, որ գարնան վերջերում տալիս են մեզ դեղեցիկ հիւթալի հատիկներ, և կամ թերթերուտ վարդն է սկսում շնորհք տալ բուրաստանին։ Կեռասենիքը, խնձորենիքը, տանձենիքը, շլորենիքը և այլք ծածկվում են սպիտակ կամ վարդասպիտակ դոյներով։ Ամենայն բան ողջոյն է տալիս գարնանը, ամենայն բան ծաղկում ու բուրում է անոյշ հոտով։

Գարունքն եկաւ թէ չէ՝ բաղմաթիւ թռչուններն էլ սկսում են մեր աշխարհը թափիլ. հրտեղից դառնում նոքա։ Այսօր արտուտն է գալիս զկ-զկլ երգերով օդի մէջ բարձր, էգուց սրաթռիչ մկրատագի ծիծեռնակը, միւս օրը աղաւնիքը, կկուները. բարձր օդի մէջ, սկսում են երևիլ հարաւից դէպի մեզ թռչող արագիլների ու կռունկների շարքերը։ Շուտով սոխակն է կցում է իւր արծաթահնչիւն երգը։ Եկաւոր թռչուններից մեզ մնա մնացողները սկսում են իրանց բունը շինել, դէս ու դէն ընկնիլ, ճրվճռալ, կրկչալ. ժողովում են յարդ, մամուռ, խոտ, կաւ և շինում են բնակարաններ իրանց ձագերի համար։

Զանասէր մրջիւնները, նախշուն թիթեռնակները (թիթերմաղիններ), կոպիտ բզեզները, ի վերջոյ անտանելի մժեղներն ու մոծակները, մի խօսքով հազար տեսակ թռչող ու զեռացող միջատներ մինը միւսից յետոյ սկսում են լոյս աշխարհ ընկնիլ։ Բազմաշխատ մեղուն էլ ամբողջ ձմեռը մթին փեթակի մէջ քնելուց յետոյ՝ զարթնում է, դուրս է գալիս իւր մոմեղէն ապարանքից և թռչում է քաղցրիկ մեղը ժողովելու ծաղիկներից։

Գազանների թագաւորութեան մէջ մեծ փոփոխութիւն չի նկատվում։ Բայց պէտք էր տեսնել թէ ի՞նչքան է ուրախ գարունքի գալուն ընտանի անասունը. կովերն ու ոչխարները առաւօտեան կանուխ իրանք են վազում հովուի առաջը։

Ուրախանում էին մարդիկ առաջին ձիւնը տեսնելիս, այժմ աւելի ուրախ են առաջին ծաղիկները բացուած տեսնելով։ Տարուան իւրաքանչիւր եղանակը տալիս է մարդուն իւր զուարճութիւնը։ Տան պատուհանները սկսում են բաց անել և մաքուր զով օդ ներս թողնել, որ սենեակները հովահարուին։ Փողոցներում, ինչպէս և ամեն տեղ, շատանում են աղմուկներն ու ձայները։ Գիւղացու գործերը կրկին սկսում են շատանալ. բայց ա՜ ինչ, նա գործից չի վախենում։

Այլն ուղղում է գիւղացին, գութանն ու արօրը սարքում է և երբ գետինը մի քիչ ջերմանում է ու ցամաքում՝ գնում է դաշտը։ Նա գոմէշները կամ եզները լծում է ու սկսում գարնանացանը, որի հունձը պէտք է լինի աշնան ցանածների հետ միասին,—ցորեն, գարի, կորեկ, սիսեռ, ոսպ։ Բանջարանոցներում սկսում են մարդ մարդ փորել հողը և վարել կաղամբ, ճակնդեղ, աղցան, կոտեմ, անանուխ, պրաս և այլն։—Ուրախանում է գարունքին խեղճ մարդը ևս. այժմ, փառք Աստուծոյ, եղանակը յուրտ չէ։ Փառահեղ արեգակը լոյս է տալիս ու ջերմացնում ամենքին էլ ձրի, ամենքին էլ միօրինակ։

ԳԱՐՈՒՆ

Ո՜հ, ինչ անուշ և ի՞նչպէս զով
Առաւօտուց փչես հովիկ,
Ծաղկանց վերայ գուրգուրալով
Եւ մաղերուն՝ կուսին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ հայրենեաց
Գնա, անցիր սրտէս ի բաց։
Ո՜հ, ինչ աղու և սրտագին
Ծառոց միջէն երգես, թռչնիկ

Սիրոյ ժամերն ի յանտառին
Զմայլեցան ի քո ձայնիկ,
Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,
Գնա թռիր սրտէս ի բաց։
Ո՜հ, ի՜նչ մրմունջ հանես, վտակ,
Ականակիտ և հանդարտիկ.
Քու հայելւոյդ մէջ անապակ
Նային զերկինք վարդն ու աղջիկ.
Բայց չես վտակ իմ հայրենեաց,
Գնա հոսէ սրտէս ի բաց։
Թէպէտ թռչնիկ և հովն Հայոց
Աւերակաց թռչին վերայ,
Թէպէտ պղտոր վտակն Հայոց
Նոճիներու մէջ կսողայ,
Նոքա հառաչք են հայրենեաց,
Նոքա չերթան սրտէս ի բաց։

ԻՆՉՈՎ Է ՍՆԱՆՈՒՄ ԽՆՁՈՐԵՆԻՆ

Խնձորենին բերան չունի ամուր կերակուրներ ծամելու համար. բայց նորա փոխանակ նա կարող է իւր արմատների ծայրի պտոյտներով ծծել հողի միջից այն հիւթը, որի մէջ գտնվում են խնձորենուն հարկաւոր բոլոր նիւթերը այնպիսի լուծուած դրութեամբ, ինչպէս որ լուծուած է լինում շաքարը մի գաւաթ ջրի մէջ։

Ահա ինչու ամեն մի բոյսի անպատճառ հարկաւոր է սնձրևը, առանց թացութեան նա չի կարող սնունդ առնուլ, որ կնշանակէ թէ՝ չի կարող ծծել ցամաք հողից իրան կարևոր նիւթերը։ Խնձորենու համար ասենք դեռ մեծ փորձանք չէ, երբ երկար ժամանակ անձրև չի գալիս. նորա արմատները խոր

թաղուած են հողի մէջ, ուր որ միշտ թաց է լինում, իսկ փոքրիկ խոտն առանց անձրևի բոլորովին դեղնում ու թառամում է շուտով, որովհետև նորա կարճիկ արմատները հիւթ չեն գտնում հողի վերի ցամաք շերտերի մէջ։

Ահա եկաւ գարունը. ձիւնն սկսում է հալուիլ ու ջրել երկիրը. խնձորենու արմատներն էլ ծծում են հողից սնուցիչ հիւթերը։ Հիւթերն սկսում են վեր բարձրանալ ծառի ճղների միջով, ինչպէս որ ջուրը բարձրանում է շաքարի միջով, երբ մենք նորա մի ծայրը դցում ենք ջրի մէջ։ Գարունքին որ ծակեն ծառի կեղևը՝ հիւթ կբղխէ։ Շատ բոյսերի հիւթը քաղցր է լինում։ Հիւթը բարձրանում է ոչ թէ ամբողջ բունի միջով, այլ միայն նորա երեսի փափուկ շերտերով. ահա ինչու է, որ շատ ծառերի մէջը թէև լինում է փուչ կամ փտած, այնու ամենայնիւ նոքա կանաչում են ամեն տարի ու նորա նոր ճղներ դցում։

Հիւթը մտնում է վերջը տերևների մէջ, որոնցով շնչում է ծառը, ինչպէս որ մենք շնչում ենք թոքերով։ Ջրի մի մասը հիւթից շոգիանում է և հիւթը դորանից աւելի թանձրանում է. բացի դորանից տերևների ծակոտիքով ծառի հիւթն օդ է ծծում. խլում է օդից այն, ինչ որ իրան հարկաւոր է, և արձակում ինչ որ անպէտք է ծառի համար, բայց կարևոր է կենդանիների համար։ Ահա այդ հիւթովը՝ որ ծծվում է գետնից և փոփոխվում տերևների մէջ, սնանում է խնձորենին։ Կնթեցէք ծառի բոլոր տերևները՝ նա էլ պտուղ չի՝ տալ և չի՝ ճաշիլ. իսկ եթէ մի քանի տարի շարունակ քաղէք խնձորենու տերևները՝ նա կչորանայ իսպառ։

Տերևների միջից ծառի թանձրացած ու ծանրացած հիւթը սկսում է կրկին ցած գնալ ոստերի ու ճղների միջով, անցնելով կեղևի ու վերջական բարակիկ շերտի արանքով։ Նա գոյանում է ծառի միջուկի երեսից մի ուրիշ նոր շերտ։ Եթէ

մի տեղ կտրես ծառի կեղևը մինչև նոյն իսկ միջուկը՝ հապա վերևում դարձեալ կածի ու կհաստանայ ծառը, իսկ ներքևում կմնայ անփոփոխ որովհետև ցած իջնող հիւթը կարուածքից չէ կարող ներքև անցնիլ։

ԱՐԾԻՒՆ ՈՒ ՀԱՒԸ

Մի անգամ դիշատիչ արծիւն ընկել էր երկաթեայ վանդակի մէջ, տխուր ու մունջ էր նա և կատաղաբար չորս կողմը նայելով չէր մտանում առաջն ածած մսի կտորներին։ Վանդակը դրած էր դուրսը և նորա մօտով ման էին գալիս հաւերը։ Դոքա սկզբում բաւականին հեռու էին շրջում արծուից դող ի դող մտիկ տալով ահարկու թռչունին, բայց յետոյ հասկանալով որ նա չէ կարող վնաս տալ վանդակի միջից, փոքր առ փոքր սիրտ առան, սկսեցին պըտըտիլ վանդակին շատ մօտ, և վերջապէս կցեցին խօսիլ արծուի հետ։

«Ինչո՞ւ չես ուտում, ասաց նորան մի բարեսիրտ հաւ, միթէ չե՞ս տենում առաջդ թափած քո սիրելի կերակուրը։ Տես ինչպէս ախորժակով ենք ուտում մենք գարու հատիկները։ Կեր, մեր տէրն էլի՛ կտայ քեզ։ Որ չուտես՝ կմեռնես։ Հոգս մի՛ աներ, անազատ կեանքը այնքան վատ չէ ինչպէս դու կարծում ես, վանդակդ էլ բաւականին ընդարձակ է։

—«Այո՛ այդպէս է, բայց հաւերի և ոչ արծիւների համար, ձայն տուեց վերջապէս տխուր կալանաւորը, հաւի բոլոր դատարկախօսութիւը զզուանքով լսելուց յետոյ։ Եղուց, յաւելացրեց նա, ձեզ շամիւրի կ'անցկացնեն կամ կդցեն սպասի մէջ, իսկ դուք այնքան տխմար էք, որ չէք հասկանում ձեր թշուառ դրութիւնը, և այնչափ կուրացած էք տարկութեամբ, որ չէք կարողանում սիրել ազատութիւնը,

ինչպէս ես եմ սիրում նորան։ Դուք փոխել էք նորան ընչին հատիկների հետ, որ ձրի թափուած են դաշտերում, իսկ ինձ համար անազատ կեանքը ոչինչ գին չունի։

ԲՈՅՍԵՐԻ ԱՃԻԼԸ

Քանի՞ քանի տեսակ բոյսերով ամեն տարի բնութիւնը զարդարում է երկիրը։ Մի փոքրիկ տարածութեան վերայ ինչքան բազմապիսութիւն է լինում։ Բայց առաւել զարմանալի է այն արագութիւնը, որով բնութիւնը բոյսերով ծածկում է ամեն մի դատարկ տեղ,—մերկ ժայռեր, չքանող ճանապարհներ, մինչև անգամ կառուցներ ու պատեր, և յանում է խոտեր ու ծաղիկներ, ծառեր ու թուփեր հողի ամեն մի արգաւանդ կտորի վրայ։ Այս բանը ամենք տեսնում ենք միշտ, բայց ուշք չենք դարձնում այդ նշանաւոր երևոյթի վերայ, որովհետև երեխայութիւնից աչքերս սովորել է տեսնել նորան։ Արարչի ամենամեծ իմաստութիւնն երևում է ամենից հասարակ ու բնական բաների մէջ էլ, որոնք չեն նկատվում հենց նորա համար, որ այնպէս հասարակ ու բնական են։

Բոյսերի մեծ մասը զարմանալի զօրութիւն ունի աճելու։ Մեզ ծանօթ թամբաքուի բոյսը տարին մինչ 40,000 սերմիկներ է դցում։ Կաղնին հինգ հարիւր տարի ապրում է, կաղին է տալիս և ամեն անգամ 500 հատ. բոլորը միասին կլինի 25,000 կաղին, իսկ սոցա իւրաքանչիւրից ծառ է գոյանում։ Այժմ, թէ որ ենթադրենք, որ նոքա էլ կաղին կտան, իսկ կաղիններից էլի ծառեր կրուսնին ապա կարճ ժամանակում կաղինների թիւը հարիւր միլիոններով պէտք էր համրել։ Աճման այսպիսի զօրութեամբն է, որ անթիւ անհամար բոյսեր ծածկում են երկրիս երեսը։

Եթէ որ ամեն մի սերմիկ բոյսից ընկնելով՝ այնտեղ էլ

Ինար, ամեն մի բոյսի տակ կգոյնային սերմիկների կոյտեր և նոցանից ոչ մինը չէր կարողանալ արմատ ձգել հողի մէջ ու բուսնիլ։ Բայց Աստուած իւր փիմաստութեամբ ուրիշ կերպ է տնօրինել։ Շատ սերմիկներ հասնում են թէ չէ՝ իսկոյն ցրիւ են գալիս դէպի զանազան կողմեր. նոքա այնքան փոքրիկ ու թեթև են լինում որ ամենահանդարտ քամին էլ քշում է նորանց հեռու տեղեր։ Մի քանի բոյսերի սերմերն ունին թեւուկներ, որ թռցնում են նորանց հեռու։ Մայր ծառի կոճակները հասնում են թէ չէ ճեղքուում են, և նոցանից ցրիւ են գալիս սերմեր դէպի զանազան կողմեր։

Աշունքին, երբ որ անդադար փչում են սաստիկ քամիներ, մենք չպիտի մոռանանք, որ հենց այդ ժամանակն է, երբ բոյսերի սերմերը հասած են լինում և երբ քամին նոյն գործն է կատարում, ինչ որ հողագործը ցանք անելիս։ Պէտք է միտ բերենք նոյնպէս, որ անձրևներն իսկապէս այդ ժամանակն են թրջում փափկացնում հողը, որ նա կարողանայ ծոցն առնուլ բոյսերի սերմերը։ Այսպէս է Աստուծոյ աշխարհում,—բոլոր բաներն էլ ծառայում են մէկը միւսին։

Բացի դորանից շատ թռչուններ ու անասուններ ևս օգնում են բոյսերի աճելուն։ Շատ սերմեր կան որ կպչուն ճանկեր ունին որոնցով նոքա կպչում են անասուններին և մինչև անդամ մարդկանց շորերին և այսպիսով ցրւում են մի տեղից միւս տեղ։ Քանի մի տեսակ սերմեր էլ այնքան կարծր են, որ չեն մարսվում թռչունների ստամոքսում. այդպիսով էլ, օրինակ, տեսնում ես մի կեռասի ծառ բուսած մի հին աշտարակի գլխին։ Կան այդպիսի սերմեր էլ, որոնք գետերի հոսանքներով քշվում են ծովի մէջ, իսկ այն տեղերից ալիքների ուժով դուրս են ընկնում եզերքն ու բուսնում։ Ցայտնի բան է, շատ սերմեր գետին են թափվում ի զուր շատերն էլ ծառայում են մարդկանց ու անասուններին որպէս կերակուր։ Բայց

դորա տեղակ՝ ամեն մի բոյս այնքան շատ սերմեր է տալիս, որ եթէ նոցանից հազարերորդ մասն էլ բուսնի՝ էլի հերիք է երկիրը բոյսերով ծածկելու համար։

Ուրեմն ամեն բան բնութեան մէջ, ամպն ու անձրևը, հողմն ու մրրիկը, թռչուններն ու գազանները, գործակցում են բոյսերի աճեցողութեանը, հնազանդելով Ամենակալ Արարչի կամքին։

ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻ

Մինչ դեռ յուսով խայտայ բնութիւն
Ցետ դառնաշունչ ձմերայնոյն
Եւ ի գաւառն իմ հայրենի
Դեղաձիծաղ դառնայ գարուն,
Մինչ բոյր ի բոյր փթթին ծաղկունք
Եւ ճռուողին նորեկ ծիծառունք,—
Ի քեզ ևս դարձ առնեմ յայնժամ,
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան։
Ո՛չ Հելուետեան ինձ դաշտավայրք
Եւ կամ զուարթ մարգագետինք,
Ո՛չ քան զքեզ չքնաղագեղ
Իտալական պայծառ երկինք։
Հեռի ի քէն պանդուխտ գոլով՝
Քոյովդ յար տապիմ անձկով.
Ի խանձարուրդ իմոց կենաց,
Ո՛վ Հայաստան, առնում ես դարձ։
Գայցեն աւուրք, ուր մանկութեան
Անկցի տիոցս իմ գեղ դալար,
Եւ հեռասցին յինեն վայելք
Կենաց՝ թեթև ի գարշապար։

Ուր հեգ մուսայս մատն ի յերեր
Մոռանայցէ երգել զսէր.
Զնինջ ի ծոցդ առնում յայնժամ,
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան։

ԻՆՉՈ՞Ի ՕՏԱՐՆԵՐՆ «ԱՐՄԵՆ» ԵՆ ԿՈՉՈՒՄ ՄԵԶ

Օտար ազգերը շատ հազիւ են Հայ կամ Հայաստան բառերը գործածում. նոքա մեզ անուանում են Ա ր մ ե ն կամ Ա ր մ ե ն ի, իսկ մեր աշխարհը Ա ր մ ե ն ի ա։ Այս ահա ինչ պատճառով է։ Դեռ 1300 տարի Փրկչի ծնունդից առաջ Հայ ազգը մի նահապետ ունէր Արամ անունով. նա շատ քաջ էր և եռանդոտ սրտով սիրում էր իւր հայրենիքն ու ազգը։

Արամ նահապետը իւր կառավարութեան ղեկն առած օրից ջերմ աշխատանքով սկսեց հոգ տանել, որ Հայաստանը փրկէ այն քանի մի թշուառութիւններից, որ նոյն ժամանակները վրայ էին հասած նորան և որ ծանր տագնապով ծանրացել էին այդ վեհազն տղամարդի սրտի վերայ։

Երևի Արամայ նախորդների թուլութեան պատճառով Հայաստանի շրջակայ ազգերը նեղում ու ճնշում էին նորան. Մարաց Նիւքար իշխանը մէկ կողմից, Ասորոց Բարշամ իշխանը միւս կողմից, Պայապիս անունով մինը մէկէլ կողմից տիրել ու հարկատու էին արել Հայաստանի զանազան մասերը։

Արամ մեծ զօրք ժողովեց ու գայրագին յարձակմունքներով ջարդեց—հալածեց իւր սիրած հայրենիքի թշնամիներին։ Այսպէս, ոչ միայն Հայաստանը ազատեց օտար տիրողների ձեռքից, այլ և առաւել ընդարձակեց նորա սահմանները՝ ուրիշ հողեր էլ խլելով թշնամիներից։

Արտի կսկիծը հովացնելու և չորս կողմի բռնաւորներին սարսափեցնելու համար Արամը մէկ խիստ պատիժ տուեց յանդուգն Մար Նիւքար իշխանին. նորան բռնեց բերաւ Հայոց Արմաւիր քաղաքը և պարսպի աշտարակի գլխին ճակատից գամել տուեց։

Յաղթութիւնները վերջացնելուց յետոյ հայրենասէր Ազգապետը հրամայեց որ իւր նուաճած երկրներումն էլ բոլորեքեան հայերէն խօսին։ Ցայտնի չէ թէ ինչքան յաջողեց Արամին այս հրամանի գլուխ տանելը, ըստ որում դժուար ու անբնական բան է ամբողջ ժողովուրդներ, թոթովախօս մանկանից սկսած մինչև զառամեալ ծերունին, մոռացնել տալ մի լեզու, որի մէջ սնել է նոցա հոգին, և խօսեցնել մի այնպիսի լեզուով, որ արմատ չունի նոցա հոգու մէջ։ Սակայն լաւ յայտնի է, որ Արամը իւր բարձր քաջութիւններով հռչակեց իւր, նոյնպէս և իւր սիրած ազգի անունը, որ այնուհետև հնչվում էր հեռաւոր օտարների բերանումն էլ։ Ուրեմն մեր ազգն «Արմեն կամ Արմենի, իսկ մեր երկիրը «Արմենիայ» կոչուեցան Արամ քաջ նահապետի անուամբ։

ԱՄԱՌՆ

Ամարան սկզբում օրերն ամենից երկար են լինում։ Ամբողջ 15 ժամ արեգակը ցած չէ գալիս երկնքից, իսկ գիշերները այնքան կարճ է լինում, որ մարդ դեռ քնից չկշտացած, լուսանում է։

Որքան հեռանանք ամառը մեր երկրից դէպի հիւսիս, այնքան աւելի օրերը երկար կլինին, իսկ գիշերները կարճ։

Երբ որ կէսօր է դառնում, արեգակը բարձրանում է երկնքի պայծառ ու կապոյտ կամարի գագաթը և նորա ճառագայթները գրեթէ բոլորովին ուղղահայեաց ընկնում են մեր գլխին։ Կէսօր առում ենք օրուան այն միջոցին, երբ արեգակը գլուխ է երկնքի ամենաբարձր կէտում։

Կէսօրին ոչ միայն արեգակին չէ կարելի մոտիկ տալ, այլև ամեն մի բանի, որ լուսաւորուած է լինում նորանով, որովհետև արեգակի լոյսն աչք է խտղում։ Երկինքը, երկիրը և օդը բռնվում է պայծառ ու ջերմ լուսով, և մարդս ակամայ աչք է ածում, որ մի հով տեղ գտնի պատսպարուելու Արդէն չափից դուրս տաք է օդը։ Դաշտերի վրայ շոգը հուր հուրատում է։ Այդ թեթև օդն է, որ շոգիներով լցուած՝ վեր է բարձրանում ոստոստելով սաստիկ ջերմացած գետնի երեսից։ Ծառերը չեն խշխշում, իսկ տերևները կարծես շոգից յոգնած՝ պճկում, վիզները ծռում են։ Թռչունները թաղնվում են անտառի խորքում, տաւարը դադար է առնում արածելուց և հանգստանում շուաքների տակ. մարդն էլ բրտինքը կոխած և սաստիկ ուժահատ՝ թողում է գործը։ Այսպէս ամեն բան սպասում է շոգի անցնելուն, բայց հացի համար, խոտի համար, ծառերի համար կարևոր է այս շոգը։

Սակայն երկարատև երաշտութիւնը վնասակար է բոյսերին, որոնք թէև սիրում են տաքութիւն, բայց սիրում են և թացութիւն։ Անտանելի է նա մարդկանց համար էլ, ահա ինչու են ուրախանում մարդիկ, երբ որ սև-սև ամպերը սկսում են կուտակուիլ, որոտը թնդում է, կայծակը պսպղում և զովարար անձրևը թափվում է, որ հովացնէ ծարաւատանջ երկրի այրուող սիրտը։ Վատ է միայն երբ անձրևը կարկտախառն է լինում, ինչպէս երբեմն պատահում է ամենաշոգ օրերում, որովհետև կարկուտը փչացնում է թերահաս (հեղ) արտերը։ Գիւղացին սրտանց աղօթում է Աստուծոյն, որ կարկուտ չլինի։

Գարունն ինչ որ սկսել էր՝ ամառը վերջացնում է։ Տերևները բացվում են և քիչ ժամանակից առաջ մերկ անտառը այժմ հազար տեսակ թռչունների բնակարան է դառնում։ Մարգագետիններում կանաչ խոտը ծածանվում է ծովի ալիք-

ների նման։ Նորա մէջ գեռում են անհամար միջատներ։ Ծառերի ծաղիկները թափվում են։ Բաց-կարմիր կեռասն ու մոյգ-կապոյտ դամոնը սկսում են գլուխ հանել տերևների արանքից. խնձորն ու տանձը դեռ ևս խակ են լինում, բայց կամաց-կամաց սկսում են հասնիլ ու հիւթով լցուիլ։ Ամեն մի հովի, ամեն մի ծառատանի միջից անոյշ հոտ է բուրում։ Անտառում մեծ ծառերի փուչակներից, կամ գիւղի մէջ փարախումը շարած փեթակներից՝ ուրախ-ուրախ բզզալով դուրս են վազում ժրաջան մեղուները և թռչտելով մեղրահիւթ ծաղիկների վերայ՝ աշխատում են մեղը պատրաստել, որ իրանք էլ կերակրուին, մարդկանց բերանն էլ քաղցրացնեն Արտերում գարին ու ցորենն էլ արդէն հասկաւորվում են և սկսում են դեղնել մինը միւսից յետոյ (ցորենը գարուց յետոյ)։ Զեփիւռը թեքթեքելով տատանում է նորանց։ Բակլան, ոսին ու սիսեռը իրանց կարմիր ու սպիտակ ծաղիկներով նոյնպէս զարդարում են անդերը։ Կորեկն էլ, թէև ոչ այնքան բարձր ու նազելի, բայց առատ ճիթերով բեռնաւորուած սկսում է խոնարհեցնել իւր ճոճոփաւոր կատարը, կարծես կամենալով ասել, թէ՝ «ինչքան տրդիւնարեր լինիս՝ այնքան խոնարհ պէտք է լինիս»։ — Բայց մի՞թէ կարելի է անուն-անուն թուել բոլոր այն բաները, որ ամառը երևում են մինը միւսի յետևից։

Թէ թռչնի, թէ դազանի, թէ միջատի համար ուրախութիւն է ամառը և առատութիւն։ Ահա արդէն փոքրիկ, անզօր ձագերը ծվծվում են բունի մէջ և ծնողները օդի մէջ թռչտելով կերուսկուր են որոնում նոցա համար. նոքա գլուխները բունից դուրս հանած ու բերանները բաց՝ վազուց արդէն սպասում են ուտելու։ Ծնողները մի անգամ հասկից ընկած հատիկներ են բերում, միւս անգամ մժեղներ, ուրիշ անգամ հասած պտղի մասնիկներ։ Սրատես ուրուրը լայն թևերը տարածած երկնի բարձրութենից տեսնելով մի ձագուկ, կամ մի

անփորձ, տկար, մորից հեռացած թռչնիկ, նեռի պէս ցած է յարձակվում նորա վերայ. խղճուկը զոհ է գնում այդ կատաղի գիշակեր թռչնի ճիրաններին. Պառաւ սագերը վեղները գոռոզաբար ծռմռելով՝ դէպի ջուրն են տանում իրանց փուտրիկ դեղին ճագերին։

Մազմազոտ, նախշուն թրթուրը (սէրատէրի շունը) առատնուելով իւր բազմաթիւ ոտների վերայ՝ կրծում է տերևներն ու պտուղները։ Փայլուն թիթեռնակների թիւը չկայ։ Մեղուները ձագ են տալիս և աճում. փեթակի մէջ այժմ նեղուածք է նոցա համար, ուստի և նոքա սկսում են բաժանուիլ ջոկ-ջոկ աշխատասէր թագաւորութիւնների, որոնցից մէկը մնում է հին տեղը, իսկ միւսը գնում նոր բնակարան պտռելու։ Բայց մեղուապանը վաղուց արդէն պատրաստած է լինում ազատ գայ սերնդի համար նոր փեթակ. նա շվշուալով հաւաքում է նորանց, մի ձեռքում աւելը բռնած, որ փախստականները նորա վերայ ժողովվին, իսկ միւսում վառած շորերի մի փաթոյթ, որ սորա ծուխը թոյլ չտայ մեղուներին կծոտել իրան։ Մրջիւնն արդէն շատ սառերկրեայ անցքեր ու ամարանոցներ է շինել և սկսել է մթերել իւր ձմեռուան պաշարը։ Այսպէս, ամենքի համար առատապէս բաց է արել Արարիչը իւր ողորմած աչքը և թափում է (զեղում է) երկրի վերայ ջերմութիւն, բարերար անձրև, ծաղիկներ, պտուղներ, խոտերի ու հացաբոյսերի անթիւ սերմեր, և այլն։

Շատ ու շատ է ամառը գիւղացու գործը։ Հազիւ նա պրծաւ ցելը, որ աշնանացանի համար փարիկացնէ հողը, և ահա վրայ հասաւ խոտհարը։ Հնձողները ծանր հագուստները հանած, փայլուն ու զընգզընգող գերանդիքն առած՝ շտապում են դաշտը խ՚ոտ հարելու (հնձելու)։ Կնանիքը նոյնպէս սիրով փոցխերն ու եղանները առած կուտակում են արդէն չոբացած խոտը։ Ահա և բարձր ու բոլորակ դէզեր դրուեցան։

Երբեմն, եթէ մօտ տեղ մի մեծ ալնոտարած ծառ է լինում, գիւղացին կտրում է նորա միջին ճղները ու դէղ է դնում ծառի վերայ, որ խոտը տաւար չուտէ, և կամ նա ապահով լինի կրակ ընկնելուց կամ փոթելուց։

Խոտահարը վերջացաւ թէ չէ՝ գալիս է հունձը։ Գարին արդէն հասել է, այնպէս որ եթէ քիչ էլ թողնես նորան չընձաձ՝ կվաղահանի (կթափուի)։ Կարճ ժամանակից յետոյ հասնում է ցորենը. գիւղացին գերանդին ցած է դնում մանդաղն առնում. սկսում սեսարան է, երբ հնձողների շարքը մտնելով արտերի մէջ այս ու այն կողմից կաշեղէն գոգնոցները (առաջակապները) կապած քաղցրաձայն երգերով սկսում են հնձել ոսկեշող հացաբոյսը։ Որտեղ քիչ առաջ ծածանվում էր ցորենը, այժմ այնտեղ միայն կտրած յարդեր են ցցուած։ Հնձողը նախ ժողովում է բռան մէջ գարու կամ ցորենի ճանկերը, յետոյ քանի մի ճանկ միասին կապում է, որ դառնում է կուտակ, այսպիսի տասն կուտակ պինդ կապելով շինում է խուրձեր, և վերջապէս արդէն հնձած արտի մէջ դնում է տեղ-տեղ փանջակներ (դէզեր), որոնցից ամէն մինը տասն խուրձ է լինում։ Այն երկրում որտեղ հացաբոյսը կարճ է լինում, արտերը հնձում են գերանդիով խոտի պէս։ Դժուար է հնձողի բանը կիզող արևի տակ. նորա ճակատից քրտիքը թափվում է առատ կաթիլներով։ Ցիրաւի, մեծ սովորութիւն է հարկաւոր այսպիսի ծանր գործի համար. բայց և ինչքան ջանասիրութիւն ու համբերութիւն պէտք է ունենայ խեղճը։ Հակառակի պէս հունձի ժամանակ մէջ են ընկնում պաս շաբաթներն էլ և զըրկում հնձողին նորա միակ սիրտ հովացնող բանից այն է—սառն մածնից սաւ թանից, որ նա շատ ախորժակով ճաշում է կէսօրին ծառի շուաքի տակ։

Հունձը պրծաւ թէ չէ գիւղացին իսկոյն սկսում է հնձածը կրել կալը, որ կասէ։ Կալը ջրում սաւ հաւասարեցնում են։

Ամեն օր առաւօտեան շատ վաղ գիւղացին խուրձերը ցրվում է կալի մէջ, ձիանք կամ գոմէշներ ու եզներ է լծում և դրեթէ ամբողջ օրը չարչարվում է մի հաշանի վերայ։ Անդադար լսում ես նորա քաջալերական ձայնը յոգնած անասուններին և տակը քարած կամերի չրխկչրկոցը։ Քանի մի անգամ նա պրանում է, եղում է հաշանը, որ լաւ կասվի պրծնելուց յետոյ երկու մեծ կուտակներ շինելով կալի ծայրերում՝ սկսում է քամել։ Մանր ցորենը թափվում—ամբարվում է մէջ տեղը, իսկ թեթև դարմանը քամին քշում է դէպի մարագը։ Ինչքա՜ն, ինչքա՜ն քրտինք և ուժ է թափում գիւղացին մինչև որ վերջացնում է կալը։

Բայց ինչո՞ւ էլի ուրախ է գիւղացին ամառը, երբ նա այդքան չարչարանք է կրում։ Ո՛հ, շատ են դորա պատճառները։ Նախ գիւղացին գործից չէ վախենում, նա մեծացել է աշխատանքի մէջ։ Երկրորդ նա գիտէ, որ ամառնային աշխատանքն ամբողջ տարին կերակրում է նորան։ Երրորդ զգում է գիւղացին, որ նորա աշխատանքով կերակրվում է ոչ միայն իւր գերդաստանը, այլև բոլոր աշխարհը—և՛ ես, դու, և՛ ամեն մի ճոխաղարդ պարոն, թէև այդպիսի պարոններից շատերն արհամարհանքով են նայում գիւղացու վերայ։ Նա իւր անշուք գործով կերակրում է ամենքին այնպէս, ինչպէս ծառի արմատը նորա տերևազարդ զարդ կատարներին։

Շատ ջանասիրութիւն ու համբերութիւն է հարկաւոր գիւղային գործերի համար, բայց և ոչ պակաս հմտութիւն ու բանիմացութիւն են պէտք։ Փորձեցէք դուք էլ հնձել և կրտեսնէք որ այդ հեշտ բան չէ։ Առանց սովորելու գերանդիով ոչինչ չես կարող անել։ Լաւ դէզ դնելն էլ հեշտ բան չէ. հերկելու համար մեծ փորձառութիւն է հարկաւոր, իսկ լաւ սերմնացան լինել ամեն մի գիւղացու անգամ գործը չէ։ Բացի դորանից պէտք է դիտենալ, թէ երբ ինչ անես, ինչպէս սարքես արօրն ու գութանը, ինչպիսի փայտ յարմար կլինի լուծի համար, ինչպիսի սամինների համար, ինչպիսին կոտրակի ու համնի և այլն։

Տեսէք ինչքան շատ բան պէտք է գիտենայ գիւղացին. և ինչպէս կարելի է տդէտ անուանել նորան, թէ և նա չիմանար կարդալ ու գրել։

Քաղցր է քնում գիւղացին ծանր աշխատանքներից յետոյ, զգալով որ կատարեց իւր սուրբ պարտականութիւնը։ Մեռնելիս անգամ նա ախ չի քաշիլ թողնելով մշակած դաշտերը իւր զաւակներին, որոնց նա պահել—մեծացրել է, սովորեցրել է աշխատանքի և իւր տեղը գործաւորներ շինել Աստուծոյ և մարդկանց առաջև։

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵԿԳ ՇԻՆԱԿԱՆԱՑ

Ա՛յ մարդ, այսօր շատ քնեցար, ննջեցիր,
Առաւօտեան հով ժամանակ անցուցիր.
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Ջերմութիւնը ձորն ու դաշտը փրռուեցաւ։

Ընկերներդ վաղ արտերը գնացին,
Ցորեն, գարին գերանդիով հնձեցին.
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նրատան հանգչել կաղնիների հովումը։

Ա՛յ մարդ, վեր կաց սառը ջրով լուացուիր,
Գոտիդ կապէ, գերանդիդ առ, դաշտ հասիր,
Քանի հով է, հունձդ արա արտումդ,
Հունձդ հնձէ, մի ծուլանար գործումդ։

Հունձդ կապէ, բարդերդ բարդէ, տուն արի,
Հանգստացիր, երբ քո հունձդ կատարի,
Բեր գերանդիդ կախէ պատին քո տանը.
Ես իրիկուան կը պատրաստեմ սեղանը։

Ա՛յ մարդ, հերիք, ինչ որ այսօր քնեցար,
Աչքերդ մէկ բաց, տես թէ որչափ ուշացար
Մեր դրացին վաղ անցկացաւ կամուրջէն։
Վաղ լռեալ է մեր գրվերը ձայնելէն,
Ի՞նչ ես պառկեալ, ի՞նչ ես քնեալ սիրական,
Արեգական շողը հասաւ մեր դրան
Մի՛ ծուլանար ժամանակդ խրնայէ.
Այն պիտի մեզ բոլոր ձմեռ կերակրէ։

ԹԻԹԵՌՆԱԿ

Ինչի՞ համար այնպէս վրայ պրծած թռչկոտում է նախշուն թիթեռնակը ծաղկից ծաղիկ շուռ-շուռ թագցնելով իւր փոքրիկ գլխուկը ծաղիկների անուշահոտ անօթիների մէջ։ Երևի նա էլ բերան ունի, երևի նա էլ իւր համար կերակուր է որոնում ծաղիկների մէջ։ Այո՛ թիթեռնակն էլ բերան ունի, միայն շատ փոքրիկ, բայց այս նորա համար է, որ նա չի ուտում իւր կերակուրը, այլ խմում է երկայն լեզուակով կամ աւելի լաւ ասել, փոքրիկ կնճիթով, որ խողովակաձև գոյացած է լինում նորա ծնօտներից։ Թիթեռնակը կամ դուրս է հանում իւր կնճիթը, որ հիւթ քաշէ ծաղիկների անօթիներից, և կամ կծկում է նորան գալարերով, որ հեշտ լինի թռչելը։ Թիթեռնակը կամ, որ շատ երկար կնճիթիկ ունի, կայ այնպիսին էլ, որ ամենևին չունի։ Բայց ինչով են ապրում այս վերջիններս, նոքա չեն կարող ամուր կերակուրներ ծամել, կնճիթիկ էլ չունին հիւթ ծծելու։ Ուրեմն ինչով։ Ոչինչով։ Նոքա իրանց բոլոր կեանքում ոչ ինչ չեն ուտում, բայց նոցա կեանքն էլ մի օր է միայն, և հէնց այդ օրը ձու ածելուց յետոյ մեռանում են։

Թիթեռնակի գլխուկի վերայ մենք կարող ենք տեսնել

շոշափուկներ և երկու մեծ-մեծ շատ բաղադրեալ աչքեր, որոնք բաղկացած են լինում հազարաւոր մանրիկ աչերից։ Թիթեռնակի թեփկոտ (խաւոտ) և մի քիչ դուրս պրծած կուրծքի վերայ գտնվում են երկու անթափանցիկ մեծ թևեր և վեց փոքրիկ, երկայն, վեց խաղանի ոտներ։ Երկու հատ յետևի թևերը էլ կան փոքն ու կուրծքն իրար միաւորուելու տեղում։ Թիթեռնակի բոլոր չորս թևերն էլ ծածկուած են անթիւ անհամար մանրիկ, գոյնզգոյն թեփուկներով, որ շատ նմանում են շողշողուն փոշու։ Խոշորացուցով կարելի է տեսնել, որ այդ թեփուկները փետուրների նման՝ սուր ծայրովը մտած են լինում թևի մէջ, իսկ լայն ծայրովը իրար վերայ նստած։ Թիթեռնակի թևերի գոյնզգոյն զարդն էլ կախուած է այդ թեփուկներից և սոքա են, որ օգնում են թիթեռնակին թռչկոտել։ Թէ որ անզգուշութեամբ մէկը թափ տայ թիթեռնակի թևերից այդ փոշին՝ նա համարեա թէ էլ չի կարող թռչել։

Եւ գունով, և մեծութեամբ զանազան են լինում թիթեռնակները։ Նոքա շատ կարճ կեանք են անցնում, ոմանք ապրում են մի օր միայն։ Նոքա ձու են ածում այնպիսի տեղ, ուր որ զաւակները, որոնց երեսն էլ չի տեսնում մայրը, կարողանային առատ կերակուր գտնել իրանց համար։ Բոլոր թիթեռնակները կերպարանափոխութիւն են կրում,—ձուից, որ ածած է լինում մի որ և է տերևի վերայ դուրս է գալիս որդնիկ—թրթուր. թրթուրը շատ ուտում է և մեծանալով դառնում է անշարժ բոժոժ կամ պատուճանապատան. իսկ բոժոժից դուրս է գալիս դարձեալ նոր թիթեռնակ, որ նոյնպէս ձու ածելից յետոյ մեռնում է։

Գեղեցիկ արարած է թիթեռնակը և զուարճացնում է մեզ, երբ տեսնում ենք նրան ծաղիկների վերայ ուրախ-ուրախ ճախրելիս. բայց մի և նոյն թիթեռնակը թրթուր եղած ժամանակը սոսկալի շատակեր է և մեծամեծ վնասներ է հասցնում

այգիներին, դաշտերին, անտառներին ու բանջարանոցներին։ Էլի լաւ է, որ թռչունները փչացնում են թիթեռնակների բիւրաւոր ձուերը, իսկ գորտերը, խլէզներն ու միւսները՝ թիթեռնակներին իրանց, եթէ ոչ՝ նոցա թիւը անհամար և տուած վնասը անչափ կլինէր։ Տան շորերն ու գահոյքն ապականող ցեցն էլ այն ժամանակ չէ վնաս բերում։ Երբ թռչում է, այլ այն ժամանակ, երբ սողալիս է լինում իբրև փոքրիկ սպիտակ որդն։

ՇՈՒՇԱՆ

Քարերն ու ժայռերը հողի զաւակներն են։ Նոքա ամենից աւելի են նման հողին, դորա համար էլ նա իւր կուրծքին կպցրած է պահում նորանց և չի թողնում որ հեռանան իրանից։ Շատ անգամ է ջուրը նախանձել հողին։ Դորա հարազատ զաւակը—սառոյցը երբէք մի ձմեռից աւելի չի ապրիլ, այդ պատճառով էլ ջուրը չարակամ լինելով հողի անթիւ և մշտատև զաւակներին՝ աշխատում է անդադար խորտակել նորանց։ Անձրևի կաթիլները մաշում են ժայռերի գագաթները և սառչելով ճեղքոտում են ամենակարծր քարերը։

Ահա մի անգամ էլ խօսք կապեցին բոլոր կաթիլները, հաւաքուեցան, հեղեղներ, վտակներ ու գետեր կազմեցին և ամեն մի առաջն ընկած բան քշելով ածեցին ծովի մէջ։ Ամբողջ ովկիանոսը զինաւորուեցաւ կռուելու, նորան դաշնակցեց մրրիկը, կայծակը լոյս տուեց նորան, ալիքները ուռան ու փրփրեցան, գոռալով ու թնդալով բարձրացան նոքա և ծածկեցին ցամաքը։ Այն ժամանակ կործանուեցան պինդ-պինդ ժայռերը կատաղի ջրերից, ցիրուցան ընկան նոցա կտորտանքը, մինչև որ տիրեմ դարձան ու պղտորեցին ջուրը։ Մեծ եղաւ բնութեան միջի կռիւը։ Հողի զաւակները խորտակուեցան, և ջրերը սիրաը հովացած յետ դարձան իրանց տեղերը։

Բարձր երկնուղէշ ժայռերի տեղակ այժմ ափուած էր գետերքում ու ծովերքում մի տոմուտ դաշտավայր։ Ցօ-թագին արևը փոքր առ փոքր անհետացրեց կռուի նշանները. դաշտավայրն անապատի շոր հագաւ. երկիրը քարի պէս պընդացաւ ու ճաքճքոտեց, և մի ջերմ ու խեղդող պտոյտահոտմ թողն ամպեր բարձրացնելով սկսեց պըտրտել քարուքանդ ժայռերի վերայով։ Այդ տեղ թագաւորում էր մահը, ոչ մի հատ կանաչ տերև, ոչ մի ծաղիկ, ոչ մի թիթեռնակ չէր կարելի գտնել հալումաշ հողի վերայ։

Սակայն այդ տեղ էլ կեանքի նշոյլ կար, միայն թագ կացած։ Հազարաւոր սերմիկներ աննկատելի կերպով հանգստացած էին հողի մէջ, սպասելով պատեհ ժամանակի։

Պէտք է գիտենալ որ բոյսերն աճում են երկու եղանակով. սերմիկներից, կամ կոկոններից։ Ծառերն ու թուփերը ճղնիկների վերայ կոկոններ (պտոյտներ) ունին. դոքա ծածկուած են լինում ամուր կեղևով։ Շատ բոյսեր կան, որոնց կոկոնները գետնի տակն է գոյանում այդպիսի կոկոններին ասում են սոխուկներ, դոքա էլ դրսից ծածկուած են լինում ամուր կեղևներով. դոցա մի քանի շերտ ճկուն ու խիտ սեղմուած թերթերը կարողանում են դիմանալ անպտուղ գետնի ջոր ու ցամաք զանգուածների ճնշմանը։

Երբ որ գալիս են անձրևները, շաւիղներ են բացանում փափուկ հողի մէջ և քշում իրանց հետ աւազի հատիկները։ Սերմիկներն ու սոխուկները ներս են ծծում տաք հիւթը։ Սոխուկից բուսնում է մի սրածայր տերև, նոքա յետևից էլ միւսներն են դուրս գալիս իրար վերայ գեղեցիկ ձևով։ Ինչքան շատ են տաքանում տերևները արևի լուսի տակ, այնքան շատ են գեղեցկանում։ Ամենից վերինները դառնում են շքեղազարդ շուշաններ։ Սպիտակ ու պայծառ փայլում է շուշանը շրջակայ մթնագոյն տարածութեան մէջ։ Վեց հատ թերթեր բաղկաց-

նում են ծաղկի ծածկոցը. վեց հատ ոսկեշող առէջներ նաղղելի կերպով ձոձում են ծաղկանոթի միջի կանաչ թելերի վերայ։

Տգեղ ու մռայլ անապատը այժմ ծածկվում է հազարաւոր ծաղիկներով, կակաչը, յակինթը, արքայագանգուրն և ուրիշ հազար ու մի ծաղիկներ, աշխատում են մինը միւսից առաւել գեղեցիկ լինելը բայց նոցա մէջ ամենից սիրունն է լինում սպիտակ շուշանը։

ԷՇՆ ՈՒ ՍՈԽԱԿԸ

Բացուել էր գարունը, սար ու ձոր ծաղկել,
Անոյշ հոտն ու հոմն ամեն տեղ բռնել,
Ամեն աշխարհից հեռու տեղերից
Փախած թռչունները իրանց բուներից
Եկան ողջունել գաղուստը գարնան,
Մայր ու ձագ նստած թուփերի վերան։
Պարկեշտ սոխակն էլ իւր այրուած սրտի,
Իւր սիրուն վարդի սէրն ու իւր մտքի
Կարօտն ու աշխոյժ բերան բերելով՝
Խոր ձորում նստած վեշտերը լալով՝
Նայում էր ջրին, իւր վարդի թփին,
Սպասում էր որ բացուի սիրելին։
Բայց վարդն անիրաւ մնացել էր փակ,
Խեղճ սոխակի սիրտը դարձել էր կրակ
Այս դառն բոսկին սատանի քամին
Որտեղից հանեց մեր կորած իշին,
Քուռն էր հատել, թէ կերը պակսել,
Գայլն էր յետ ածել, թէ տէրը դնքսել,
Ականջները խլած՝

Սարն ի վեր ընկած՝
Վազեց ու հասաւ, դունչը վրայ բերեց
Անմեղ վարդի թուփն ու կոկոնն որ բռնեց՝
Փշրեց ու ջարդեց արաւ կտոր-կտոր
Ու ինքն վայր ի ձոր
Գլուխն առաւ գնաց։
Սոխակն այս բանը որ տեսաւ՝
Եկաւ
Վարդի վրայ կանգնեց
Իւր սուգն սկսեց,—
«Աննման իմ վարդ, ցանկալի հոգւոյս,
Սրտիս բերկրանքի ապաւէն ու յոյս.
Ինչի՞ դառն օրհաս հանեց քեզ աշխարհ,
Կրբ ոչ ոք գինդ պէտք է չիմանար.
Երկինք է տեղդ, ինչի՞ ես մնում
Իշի կերակուր այս փշի միջում։
Քանի փուշ ու էշ երկրից չեն պակաս՝
Մտածում եմ, որ անտէր կմնաս.
Կամ այրիր դու ինձ, որ մի օր պրծնիմ,
Կամ թէ առ թռչնիք, երեսիդ միանիմ։

Իմ սիրուն սոխակ, մի՛ այդքան ցաւիր,
Կա՛ց մեր միջումը քո վարդը գովիր,
Էշն աղբի մէջ է առել իւր ծնունդ,
Նորա հոտովն էլ առնում է սնունդ.
Քեզ ծառ ու ծաղիկ, քեզ վարդ մանուշակ
Պարգևել է Տէրն, իմ ազնիւ սոխակ։

ԹՈՒԹԱԿՆ ՈՒ ՍՈԽԱԿՆ

Մի թութակ տան մէջ այնքան ճղղաց, գոռաց, շրվշվաց որ տանուտէրը հրամայեց դուրս տանել նորան։ Թութակի ինքնասիրութեանը դիպաւ այս բանը, և նա սկսեց գանգատել սոխակին, որ եկել էր տեսնելու մեր տարաշխարհիկ թութակին։

«Աչքիս լոյս, ասաց թութակը սոխակին, ես լսել եմ որ դու լաւ վարպետ ես երաժշտութեան մէջ. խնդրեմ լսես իմ երգերը և ասես բացայայտ, թէ ինչ պակասութիւն կայ նոցա մէջ և թէ ինչո՞ւ իմ տերը չի սիրում նորանց։ Նա չէ՞, որ այնքան զուարճութեամբ լսում է այնպիսի վատ երգիչների, ինչպիսին է արտուտը, քնարիկը կամ ծիծեռնակը, որոնց ձչիւնը աւելի մկների ծվոցին է նման, քան թէ երգի։ Ի՞նչ պատճառով, հէնց որ ես սկսում եմ իմ բոլոր ճարտարութիւնը ցոյց տալ այդ տիմարը հրամայում է հեռացնել ինձ։—«Երգիր, ասաց սոխակը, ես ուրախութեամբ կլսեմ քեզ պէս սիրուն թռչունի երգը»։ Թութակը սկսեց իւր բոլոր ճարտարութիւնը բանեցնել.—կրկչաց աքլորի ու հաւի պէս, հաչեց շան պէս, մլաւեց կատուի պէս մի խօսքով խառնափնթոր կերպով կրկնեց բոլոր բերան ասած բառերն ու երգերը։ «Այժմ, սիրելիս, ասաց նա սոխակին, վերջացնելով իւր ճունչիկ երաժշտութիւնը,—ասա՛ խնդրեմ, լսած կա՞ս մի այսպիսի բան երբ և իցէ։

—«Դու շատ հմուտ ես ձայնդ նմանեցնելում, ասաց սոխակը թութակին, բայց ես կցանկանայի լսել քո յատուկ երգը»։

Թութակը տարակուսած մնիկ արաւ։ Սոխակին և նորից սկսեց մլաւել կատուի նման, հաչել շան նման, կռայել աղռաւի նման, դուրս տալ իւր բոլոր սերտած խօսքերը։ Բայց որքան էլ աշխատեց սոխակը՝ չկարողացաւ լսել թութակի յատուկ երգը։

—«Տեսնում ես ահա՛, ասաց վերջապէս սոխակը գլխաւոր պակասութիւնդ այն է, որ դու երգում ես ուրիշի նման, ուրիշի ձայնով։ Ինչքան տկար լինի ծիծեռնակի ձայնը, որին դու արհամարհում էիր, բայց նա իւր մեղմիկ երգի մէջ արտայայտում է իւր սեպհական զգացմունքը, իւր սէրը, իւր վիշտը, իւր ուրախութիւնը, իւր տխրութիւնը։ Ահա՛ ինչու են զուարճութեամբ լսում նորան մարդիկ, իսկ քեզ հրամայում են դուրս տանել երբ սկսում ես երգել։ Աշխատիր որ գտնես քո սեպհական երգը, այն ժամանակ քեզ էլ կը լսեն ուշադրութեամբ։ Բայց ես շատ եմ կասկածում, որ դու այսքան երկար ուրիշին նմանուելուցդ յետոյ կարողանաս արտայայտել քո յատուկ զգացմունքը»։

ԱՇՈՒՆ

Արդէն յունիսի 9-ից սկսած փոքր առ փոքր օրերն սկսում են կարճանալ իսկ գիշերը երկարել։ Սեպտեմբերի 11-ին ցերեկը դարձեալ հաւասար է լինում գիշերին։ Այս աշնանային գիշերահաւասարն է և աշնան սկիզբը։ Արեգակը առաւօտեան 8 ժամին է ծագում, իսկ երեկոյեան 4 ժամին մայր մտնում։

Ամպերը գրեթէ ամեն օր պատած են լինում երկնքի երեսը. գոքա այն գարնանային ամպերը չեն, որ արծաթի սաբերի պէս թափառում էին երկնակամարի վերայով։ Օդը սկսում է ցրտանալ։ Հետզհետէ սկսում է գիշերները եղեամն դնել խոտերի, կտուրների վերայ։

Աշնանային մանր անձրևներն ամենևին նման չեն ամառուան փոթորկալից անձրևներին. աշունքն անձրևում է համարեա ամեն օր, և երկիրն այնպէս շուտ չի ցամաքում, ինչպէս ամառը։ Քամին անդադար փչում է հեռու-հեռու ցրուելով ծառերի ու խոտերի հասած սերմերը։

Ծառերի տերևները տեղ-տեղ սկսում են դեղնիլ, կար-

ծես թէ աշնան մահաբեր ձեռքը թառամեցրած լինէր նորանց։ Ամենից առաջ ուռին էր բացուել, ամենից առաջ էլ նա է սկսում դեղնել։ Փոքր առ փոքր դաշտերը դատարկանում են. էլ չեն երևում արաբերում գիգած խուրձերը. ծաղիկներն անհետացել են. այս ու այն տեղ աչքաթող արած խոտը դէպի գետին է թեքվում և կարծես սպասում է ձիւնին։ Ամեն բան լռում, համրանում, խաւարում է և մերկանալով ամառուան պայծառ զարդերից, սառնում է աշնան միատեսակ գորշագոյն կերպարանքը։ Տարուան այդ եղանակում բնութիւնը նման է լինում մի բազմավաստակ մարդու, որին նինջը յաղթահարում է։ Մի քանի ժամանակ անցնելուց յետոյ նա (բնութիւնը) փաթթուելով սպիտակ վերմակի մէջ՝ քնում է ամբողջ ձմեռը։

Տեղափոխական թռչունները մինը միւսի յետևից պատրաստվում են ուղևորուելու։ Ամենից առաջ ճանապարհ են ընկնում ծիծեռնակները. դոցա յետևից արագիլները, սասարկները և այլն։ Աղաղակ բարձրացրած, կամ երկար շղթայաձև շարքերով, կամ անկիւն կազմելով՝ թռչում են դէպի հեռաստան մեր ամառնային հիւրերը։ Անտառները հանդարտում են ու դատարկվում. միայն ագռաւները նստելով մերկ ճղների վերայ, կռայում են իրանց խռպոտ ձայնով, իսկ կաչաղակները կրկչալով թռչում ոստից ոստ։ Սևացած, մռայլադէմ երկրին նայելիս մարդ տխրում է. գոնէ ձիւնը շուտ անէր ծածկէր նորա մերկութիւնը։

Գալիս է ձիւնն էլ, բայց երկար ժամանակ չկարողանալով դիմանալ, երբեմն մի երկու ժամ մնալուց յետոյ՝ անհետանում է։

Աշունքը գիւղացու գործը հեռզհետէ սակաւանում է, բայց դարձեալ անգործ չի մնում։ Նա խաղողը քաղել, քամել գինի շինել, կարասների մէջն է ածել, դորանից յետոյ պէտք է աշունքի սկզբում հերկել հողը, ցաքանել ու սերմել։

Երբ որ գործից թեթևանում է գիւղացին՝ բարձրանում է սայլերին կամ բեռնում ձիերին ցորենի հակերը և տանում ջաղացաղալու։ Կամ թէ ուրագն ու կացինը ձեռին՝ զանազան երկրագործական գործիներ է շինում։ Դորանից յետոյ գիւղացին այլ ևս այնքան գործ չունի ինչքան ամառը։ Ժամանակ առ ժամանակ թէ փայտ կամ ցախ պէտք է բերէ անտառից՝ այդ է, միւս ժամանակները ազատ է։ Այս է պատճառը, որ գիւղական հարստանիքների մեծ մասը այդ ժամանակներումն է լինում (աշունքի վերջերում և ձմեռուան սկիզբներում), երբ շատ են լինում տօն օրերը և առատ նոր քաղցր գինին։ Շատ ու շատ նեղութիւններ էր քաշում գիւղացին մինչև հիմայ, հարկաւոր է նորան մի քիչ էլ հանգստանալ, ուրախութիւն անել։

ԱՆՁՐԵՒ

Ջերմութեան ազդեցութեամբ սառոյցը հեղանիւթ է դառնում, իսկ հեղանիւթը—շոգի։ Ջրի շոգիանալու համար մեծ տաքութիւն հարկաւոր չէ. թրջած թաշկինակը պաղ քամու տակ էլ կարող է ցամաքիլ, սառցի կտորը ցրտի տակ էլ է փոքրանում շոգիանալուց, թէև քիչ-քիչ։ Արդէն մենք գիտենք թէ ինչու շոգիացող ջուրը մեզ չի երևում և ինչու ձմեռը տեսնում ենք քրտնած ձիուց բարձրացող գոլորշիք, թէև ձին ամառը շատ է քրտնում, քան թէ ձմեռը։ Այժմ դժուար չէ կարծեմ հասկանալ, թէ ի՞նչպէս է ջուրը երկրից բարձրանում մթնոլորտի մէջ՝ իբրև գոլորշի կամ շոգի, և ինչպէս թափվում այնտեղից բազմաթիւ կաթիլներով՝ իբրև անձրև։

Երբ օդը պաղ լինի երկրի մակերևութից, այն ժամանակ կարելի է տեսնել գետերի, լճերի, ծովերի ու մահճակների շոգիացումն անգամ։ Այդպիսի երևացող շոգիները մառախուղ են կոչվում կամ թուղպ, և լինում են այնպէս թանձր, որ մի

քանի քայլ հեռուից ոչինչ չի կարելի տեսնել։ Բայց ջուրը միշտ ու միշտ շոգիանում է, թէև մեզ չի երևում, և փորձերով հաստատուած է, որ օդի մէջ միշտ ջրի գոլորշիք կան։

Այրը որ բարձրում գտնուող գոլորշիքը մեզ երևումեմ են՝ ամպ ենք անուանում նորանց։ Ամպը նորանով է միայն զանազանվում թզպից, որ մթնոլորտի բարձր շերտերումն է գտնվում։ Շատ անգամ ցածում անտեսանելի գոլորշիքը բարձրում տեսանելի են դառնում, պատճառ, ինչքան բարձր է օդի շերտը երկրից՝ այնքան պաղ է լինում նա։ Բնական օրէնք է, որ ամեն մի թափանցիկ մարմին, անցկացնելով իւր միջից լուսոյ ճառագայթները, առաւել քիչ է ապաքանում նոցանից քան թէ անթափանցիկ մարմինը։ Մեր երկիրն էլ իբրև խիտ ու անթափանցիկ մարմին աւելի երկար է պահում իւր մէջ արևի ճառագայթներից ստացած տաքութիւնը, քան թէ օդը. ինչքան անօսր է լինում օդը, այնքան քիչ է տաքանում։ Բայց հասկանալի է, որ օդը ինչքան բարձր՝ այնքան անօսր է կամ անգայտացած։ (Ինչո՞ւ)։ Ահա ինչու երկրի անտեսանելի գոլորշիքը բարձրանալով օդի վերին շերտերը՝ ամպանում են ու տեսանելի են դառնում։

Բարձր սարերի գագաթները եղած մարդիկը, հաւատացնում են, որ ամպերը թուղպ են, ուրիշ ոչինչ։ Նոյն իսկ ցուրտը, որ չերևացող շոգիքը երևացող ամպեր է լինում, ամպերն էլ փոխարկում է անձրևի կաթիլների։ Օդի մէջ լողացող ամպի վերայ երբ փչում է պաղ քամի՝ այն ժամանակ շոգիները թանձրանալով կաթիլներ են դառնում և օդից ծանրանալով՝ ընկսում են անձրևել։

Ամպերը կարող են զանազան բարձրութիւն ունենալ։ Ամենաբարձր ամպերը եօթն կամ ութ վերստ հեռու են լինում մեզանից, նոքա թեթև են լինում, կարծես արծաթազօծած և կամ բաղկացած փափուկ սպիտակ փետուրներից,

ուստի և ասվում են փետրային ամպեր։ Այդքան բարձրութենում շատ ցուրտ է լինում, այն պատճառով փետրային ամպերը, երևի, բաղկացած են սառած փամփշտիկներից կամ սառցային բիւրեղներից։ Այդպիսի բարձր թեթև ամպերը երկար ժամանակ կարող են թափառել մթնոլորտի մէջ և անձրև չդառնալ. և առհասարակ նկատուած է, որ փետրային ամպերը լաւ եղանակ են գուշակում։ Իսկ երբ գոլորշիքը շատանում են օդի մէջ, ամպերը ծանրանում են և սկսում են ցած իջնել. կուտակվում են իրար վերայ մեծ-մեծ ժայռերի ամրոցների, աշտարակների, ուղտերի ձևով և վազում են հողմի ուղղութեամբ. այդպիսի կուտակուած ամպերը ի հարկէ անձրև են գուշակում։

Աշխարհիս բոլոր մասերում հաւասարաչափ չէ անձրև գալիս և ոչ էլ անձրևները հաւասար են լինում միմեանց։ Սրբեմն մի անձրև քանի մի բոպէի մէջ այնքան ջուր է թափում, որքան մի ուրիշ անձրև գուցէ մի շաբաթում էլ չը-թափէր։ Ծովից մօտիկ և ջերմ երկիրներում անձրևը թէև ուշ-ուշ է գալիս, բայց գալիս է հեղեղներով։ Կան այնպիսի ջերմ ցամաք անապատներ էլ՝ ծովից ու մեծ գետերից հեռու, ուր որ համարեա թէ երբէք անձրև չի լինում։ Այդպիսի տեղերում բոյսերը չորանում են, գետինը պատառ-պատառ է լինում ցօթից. թռչունները, գազանները և միջատները կամ փախչում հեռանում են, կամ սատակում այնտեղ։ Այդպիսի տեղերը գտնվում են միջին Աֆրիկայում և Ասիայի քանի մի կողմերում։ Այնպիսի երկիրներ էլ կան աշխարհիս վերայ, ուր մի քանի ամիս շարունակ անձրև է գալիս, իսկ յետոյ մի քանի ամիս էլ կաթ չի կաթում։ Այդ տեսակ անձրևներ կոչվում են շրջանաւոր կամ պարբերական անձրևներ. նոքա կախումն ունին նոյնպիսի շրջանաւոր քամիներից, որոնք մի քանի ամիս շարունակ փչում են մի ուղութեամբ, ջրի գոլորշիկ-

ներ բերելով իրանց հետ, և յեռոյ նոյնքան ժամանակ էլ ուրիշ ուղղութեամբ, հեռու տանելով գոլորշիները։

ԱՐՏԱՍՈՒՈՂ ՈՒՌԵՆԻ

Կարկաչահոս գետի եզերքում երես առ երես բուսած են երկու ուռենիք, ճկուն, կարմրաւուն ճիւղերով։ Նոքա երկուսն էլ աճել են մի զոյգ սերմիկներից, որ մի ժամանակ գլուխ գլխի պարկած են եղել հինօրեայ ուռենու ծաղկի մէջ։ Երբ որ այդ սերմիկները դեռ ևս քնած էին իրանց տաք օրրանի մէջ, մի սաստիկ քամու ճայթիւն դուրս խլեց նորանց այն տեղից ու գցեց սերմիկներից մէկը մէկ, միւսը միւս եզերը. նոքա ընկան փափուկ, խոնաւ հողի մէջ. պտիկ արմատներ գցեցին և փոքր առ փոքր իրանք էլ մեծ ծառեր դարձան։ Մենակ նոքա չէին այն տեղ, ուրիշ շատ ծառեր էլ բուսան նոցա չորս կողմում, այնպէս որ երկու հարազատ քուրիկները դժուարութեամբ էին միմեանց երեսը տեսնում։ Ահա ինչու նոքա այնպէս ցած են թողել իրանց ոտները և այնպէս վշտագին սսսափում էին իրանց տերևներով. ահա ինչու մարդիկն էլ տխրալի ծառեր են համարում ուռենին և շատ անգամ տնկում են նորան իրանց սիրելիների գերեզմանի վերայ և անուանում նորան արտասուող։

Ցիրաւի, ուռենու ոստերից կաթիլ-կաթիլ թափվում է արտասուքի պէս մի տեսակ վճիտ հիւթ, բայց այս կաթիլները ոչ թէ ուռենին է պատրաստում, այլ նորա վրայ բնակուող միջատները։

Սակայն արտասուող ուռենին էլ ունի իւր ուրախ օրերը։ Գարնան սկզբում, երբ այլ ծառերն ու թուփերը տակաւին քնած են լինում, նորա պտոյտները (կոկոններն) սկսում են արդէն զարթնել։ Մինչ այն ժամանակ կինամոնագոյն թեփուկներով փաթաթուած քնած էին նոքա. տաք հովը փչեց

թէ չէ նոքա իսկոյն քանդեցին իրանց բանտի պատերը և դուրս երևեցան այնտեղից որպէս փափուկ ու սիրուն բամբակի քուլաներ։ Այդ քուլաներն ուռենու ծաղիկներն են, բայց նոքա երկու ծառերի վերայ էլ նմանն չեն իրար. մէկի վրայ քուլաները դեղին են և թեփուկների տակ ունին բազմաթիւ փոշեատներ. այդ տեղ է հասնում ոսկեփայլ փոշին։ Մեղրի հոտ է գալիս քուլաներից, և մեղուները խումբ-խումբ շտապում են նոցա մօտ անուշահոտ կերակրի պաշար առնելու համար։ «Ճատ լաւ, ասում են մեղուներին ոսկեշող քուլաները,—մեղր առէք ինչքան կուզէք, ցէրը ձեզ հետ, բայց դորա փոխանակ մի փոքրիկ ծառայութիւն արէք մեզ.—այն տեղ գետի միւս ափում բուսած է մեր հարազատ քուրիկը, գնացէք նորա մօտ, բարև տուէք մեզանից և մեր ոսկեփայլ փոշուց ընծայեցէք նորան ոբքան կարողանաք։ Մեղուները յանձն են առնում ուրախութեամբ. նոքա իրանց թաւուա հանդերձը բոլորովին շաղախում են ոսկեշող փոշով, մնում է նորանց թռչել միայն մինչև միւս ուռենին, որ կատարեն յանձնարարութիւնը։ Այս մէկ ուռենու քուլաները աւելի քնքոյշ ու աւելի կանաչ են. նոքա նոյնպէս մեղրի հոտ ունին և գրաւում են մեղուներին, բայց նոցա թեփուկների տակ չկան փոշեատներ, այլ երկու-երկու սերմնատուն բաց բերանիկներով, որոնք անհամբերութեամբ սպասում են իրանց հարազատ քրոջ ոսկեղէն ընծային։ Մեղուները կբերեն այդ ընծան և անկասկած կտան ում որ պէտք է հասնի. բերում են նոքա, և ի պարգև իրանց աշխատանաց՝ այստեղ էլ են մեղր ստանում։ Ուրախութեամբ ընդունում են սերմնատներ ունեցող քուլաները իրանց հարազատ, թէև հեռաւոր, քուրերի ընծաները. թագցնում են նորանց և նոցա օգնութեամբ շինում են իրանց փոքրիկ սերմիկները։

Աշունքին նորից փչում է քամին, նորից ցրւում է սերմիկները, և թէպէտ նոքա հազարներով փչանում են, բայց

այնքան շատ են լինում, որ ինչպէս և իցէ մէկն անշուշտ ընկնում է պողոտաների երկրի վերայ և ժամանակին ուռի ծառ է դառնում:

Այսպէս ուրեմն մեղուների շնորհով մի ուռենին գնծայ է ոսկարկում միւսին:

ԱՂԲԻՒՐԱԿՆ

Արդէն շատ անգամ եմ լսել կարկաչուն աղբիւրակների մասին, բայց դեռ ոչ ոք չէ պատմել ինձ, թէ ինչ են նոքա կարկաչում այնքան: Ահա մէկ վճիտ աղբիւրակն դուրս է վազում մեծ քարի տակից. թող նստեմ հիմա նորա մօտ և տեսնեմ թէ ինչ է քչքչում: Անհամար փոքրիկ ալիքներ մէկ-մէկի առաջը կտրելով ու խոխոջալով դուրս են թռչում քարերի ու աւազների արանքից, բարձրացնելով ու շշշջելով նոցա հատիկները:

«Ասացէք ինձ, սիրուն փոքրիկ ալիքներ, պատմեցէք, ինչո՞ւ էք այդպէս շտապում, ո՞ւրտեղից և ո՞ւր էք վազում, ինչո՞ւ էք այդպէս բօթբօթում իրար:

—Ա՜հ, խոխոջացին ալիքները, մենք շատ ենք, և շատ-շատ, այնտեղ սարի մէջ դեռ այնքան էլ կանք, որ անկարելի է մեզ համրել. մենք ամենքս էլ ուզում ենք լոյս աշխարհ դուրս գալ, բայց դուռը փոքրիկ է, ահա՛ինչու ենք այսպէս բօթբօթում իրար:

«Բայց ո՞ւրտեղ էք եղել մինչև այժմ և ի՞նչ էք արել: Չլինի՞ հէնց այն օրից էք նստած սարի մէջ, երբ աղաւնին նոյին բերաւ ձիթենու շիւղը, որ նշան տայ, թէ ջրերը ցամաքել են:

«Ա՜հ, ո՛չ, ո՛չ, ո՛չ.» քչքչացին ալիքները մէկը միւսին ընդհատելով, և նոցանից իւրաքանչիւրն այնպէս շտապեց ասել իւր պատմութիւնը, որ ես ոչ մի խօսք էլ չկարողացայ

ջոկել: Ես կռացայ աղբիւրակն վերայ վերցրի մի բուռն ջուր՝ մաքուր և սառն, և միմիկ կաթիլ մատներս ապանքից անցկացնելով՝ սկսեցի ուսումնդիր լինել նորանց մի առ մի: Ի՜նչպիսի հրաշալի պատմութիւններ ասես որ չպատմեցին նոքա ինձ:

—Մենք անցեալ ձմեռը ձիւնի հատիկներ էինք, ասացին ինձ երկու կաթիլներ, և այնտեղ սարի վերայ ընկած ուրախ-ուրախ փայլում էինք արևի լուսով, մինչև որ նա հալեցրեց մեզ գարունքին:

—Մենք կարկտի հատիկներ էինք, քչքչացին ուրիշ կաթիլներ, և աւաղ, ամբողջ հասկաւորած արտը տեղն ու տեղը նստեցրինք:—Իսկ մենք ցօղի կաթիլներ էինք և ջուր տուինք ծարաւ շուշանին, ասացին երկու հատ ուրիշ կաթիլներ:—Մենք ծովի երեսին նաւեր էինք քշում:—մենք յագեցրինք ծարաւ մարդուն և փրկեցինք նորա կեանքը:—Մենք պլպլանում էինք ջրաղացի քարը—մենք փրփրում էինք շոգենաւի անիւների տակ,—մենք անուշիկ հիւթ էինք կեռասի մէջ, մենք համեղ գինի.—մենք դեղ.—մենք թոյն.—մենք կաթն, ճրփճրփացրին իրար յետևից վճիտ կաթիլները, մարգարիտների նման թափելով մատներից:

Մի հատ պայծառ կաթիլ կախ ընկաւ մատս ծայրից.—«Ես մի ժամանակ արտասուք էի, շշնջաց նա.—ես մի կաթիլ քրտինք, ասաց նորա յետևից միւսը, վայր ընկնելով գետնի վերայ.—իսկ ես մի ժամանակ քո սրտի մէջ էի, ձայնեց երրորդը. մի կաթիլ ջերմ արիւն էի, յետոյ դու շնչելիս դուրս թռայ իբրև շոգի և մտայ ամպերի ծոցը:

Ես տեսայ որ այս պատմութիւններին վերջ չպիտի լինի, կաթիլները կրկին շարունակի աղբիւրակի մէջ:

Ես միտք ունէի ամաչեցնել պարծենկոտ աղբիւրակին և ասացի նորան. դու լաւ կանես որ պատմես ինձ, թէ ինչ նոր բան ես տեսել սարի մէջ:—Ի՞նչ պիտի լինի այնտեղ, միտք

էի անում ինձ ու ինձ. քարեր են անշարժ ընկած աշխարհի ստեղծմանից դեռ, որ և յաւիտեան պիտի մնան ընկած, եթէ մարդիկ չքանդեն ու պէտք չածեն նորանց. բայց ինչքան մեծ էր իմ զարմանքը, երբ աղեխրակը բոլորովին հրաշալի բաներ պատմեց ինձ:

—Ամեն մի կաթիլ. ասաց նա, ձիւն եղած լինի, թէ անձրև, թէ կարկուտ, թէ ցօղ, մնում է գետնի մէջ և գործում այնտեղ ուժը կարածին չափ, բաց անելով իւր համար հիացուցիչ կերպերով անցքեր ու շաւիղներ: Մենք ընչին ենք երևում քեզ ու տկար, բայց ինքդ էլ ես տեսնում ինչքան շատ ենք մենք, և դուցէ լսած լինիս, թէ կաթիլները միմեանց յետևից ընկնելով՝ կարծր քարն էլ կծակեն: Մեզանից իւրաքանչիւրը սարերի մէջ քարաշորտերի միջով անցկենալիս՝ խլում քշում է իւր հետ աննկատելի կերպով այս կամ այն քարի մասնիկները: Սակայն շուտով ծանրանում է փոքրիկ կաթիլի բեռը, ուժը չի պատում, որ նորան տանէ, ուստի և վայր է գցում մի որ և իցէ ուրիշ խորշում: Այսպէս ուրեմն, կրից ու գաճից մենք շինում ենք տեղ-տեղ գեղեցիկ բիւրեղներ: Երբեմն կաթիլները սարի մէջ դուրս են գալիս մի մեծ ընդարձակ անձաւ . . . . Նա մէկ ժամանակ աղով լեցն է եղել, բայց ջրի միլիոնաւոր կաթիլները ներս են ծծել այդ տեղը ու տարել նորան ով գիտէ որ պուճախ. դուցէ ծովի մէջ, որի ջուրը ինչպէս քեզ յայտնի է, այնքան աղի է: Այսպիսի անձաւի մէջ զուարճալի էլ է մեզ համար գործելը. ուրախ-ուրախ ցած ենք թռչում առաստաղից, թողնելով այն տեղ մեզ հետ բերած քարի փշուրները. այդպիսի առաստաղի վերայ գոյանում են տեսակ-տեսակ եկեղեցու կամ աշտարակի նման բաներ: Երևի տեսած կլինիս դու, թէ ինչպէս մենք ձմեռը տանիքից թափուելիս ստեղում ենք սաստիկ ցրտից և դոյացնում երկայն-երկայն թափանցիկ շիշեր: Մեր սառերկրեայ

գործը մի քիչ նմանէ դորան, միայն թէ այն տեղ մեր շինած շիշերը ջրից չեն լինում այլ կրից (ստալակտիտ): Անձաւների յատակում կաթիլները հաւաքուելով ստորերկրեայ լճեր են գոյացնում: Յետոյ այն տեղից դուրս են գալիս ու մտնում ժայռերի արանքները և ջրվէժների պէս ժայռից ժայռ են թռչում աղմկելով:

«Երբեմն մեզ մօտ է գալիս ջուր խմելու լեռնային սալամանդրը, մի երկայնաւուն փոքր անասուն, դունատ ու կոյր. դուք չէք կարող դիմանալ մէկ տեղ առանց արեգակի, բայց նա ատելով ատում է արևի լոյսը և մահու չափ վախենում նորանից: Եթէ մի կտոր փայտ է հանդիպում մեզ ճանապարհին՝ մենք գործ ենք սկսում նորա հետ էլ. ծակոտիքը լցնում ենք կայծքարով կամ կրով, իսկ փայտանիւթը կոտրատում ու տանում ենք հետներս. կարճ ասել—նորանից շինում ենք այն, սրին դուք անուանում էք քարացած փայտ. բայց այդ սխալ է, որովհետև նորա մէջ փայտի փշրանք էլ չի լինում մնացած, այլ քար է լինում բոլորովին՝ փայտի միայն ձևն առած: Մի և նոյն առուտուրն ենք անում մենք խեցիների հետ ևս: Նոքա էլ շինուած են կրից փոքրիկ անասուններ ձեռքով հազարաւոր տարիներ առաջ. մենք դուրս ենք կրում խեցիների կիրը, բայց անցեալ տնանի և նորա տնակի յիշատակը պահելու համար՝ շինում ենք այդ տնակն ուրիշ նիւթերից»:

Բայց ահա վրայ վազեց թաւալգլոր մի ուրիշ ալիք և սկսեց պատմել ինձ մի այլ պատմութիւն. նա պատմեց, թէ ինչպէս մի անգամ ջրի կաթիլները քանդել են Շուէյցարիայում մի ամբողջ սարի տակը, այնպէս որ նա փուլ է եկել և տակովն արել ամբողջ չորս գիւղեր իրանց բնակիչներովն ու անասուններովը: Բայց ես ընդհատեցի այդ տխուր պատմութիւնը, ասելով ալիքին, որ ես ոչինչ չեմ սիրում լսել գանազան կոտորածների ու աւերմունքների մասին: Լաւն այն է, պատմիր ինձ

մի ուրիշ բան, օրինակ, ասա՛ ինձ,—եթէ քո կաթիլները սարի մէջ այդքան շատ ուտում ու խմում են, այդքան շատ քանդում ու շինում են, ուրեմն շատ կարելի է քո վիճակ ջուրդ էլ այնպէս մաքուր ու անխառն չէ, ինչպէս երևում է։

—Շատ և շատ կարելի է պատասխանեց աղբիւրականը, որ իմ փոքրիկ գործաւորներից մէկը կամ միւսը կրելիս լինի իւր հետ այս կամ այն թիւը։

—Բայց ի՞նչպիսի նիւթեր ուր են տանում նորանց քո գործաւորները և ինչո՞ւ, հարցրի ես նորան։

—Մենք կիր ենք տանում, ձայն տուին մի քանի կաթիլներ մեզ վաղուց արդէն սպասում են միլիոնաւոր ծովային կենդանիներ—խխունջներ, պոլիպներ, ծովասողներ և ուրիշ շատերը, որոնց հարկաւոր է բնակարաններ ու բուստեր շինել, որովհետև այդ բոլորը կրից է շինվում։

—Իսկ մենք, վրայ բերին ուրիշ մի քանիսը, տանում ենք կայծքարահող, մեզ վաղուց աչք դրած մնում են, բիւր-բիւր ջրածին ծծիներ ու բոյսեր. մեր ճանապարհի միջերքում բուսած խոտն անգամ պահանջում է մեզանից իւր բաժինը։

Քանի մի ալիքներ ևս կրում էին իրանց փոքրիկ փամփուշտների մէջ մթնոլորտի օդ, որ գետի մանր ձկներն ու ծովի անհամար կենդանիքը կարողանան շունչ քաշել։ Ուրիշ քանիսն էլ տանում էին իրանց մէջ ածխային թթու, որ առողջարար սնունդ հասցնեն ջրաբոյսերի արմատներին։ Այլք կրում էին դաճ երկաթի սև լուսակրի (ֆոսֆորի) թթու և շատ ուրիշ աղեր, որ այս բոլորը որ և իցէ ճանապարհով հասցնեն բոյսերին, անասուններին ու մարդկանց։ Այն շարիշար մոլեկուլները, որոնց տեսած կլինիք բեռնաւորուած զեռալիս դէպի իրանց բունները, չեն կարող աւելի գործունեայ լինիլ քան թէ աղբիւրի միլիոնաւոր կաթիլները, որոնցից իւրաքանչիւրը կրում է իւր բեռը, մատակարարելով ամեն տեղ սնունդ ու կեանք։

Ամբ է լինում արդեօք այդ մարգարտահատ կաթիլների հանգիստը։ Հազիւ ովկիանոս են հասնում նոքա ծանր-ծանր աշխատանքից վաստակաբեկ,—մէկ էլ նորից վազում բարձրանում են խեղճերը ամպերի մէջ, որ կրկին վերադառնան դէպի իրանց ստորերկրեայ գործունէութիւնը, դէպի օրհնեալ աղբիւրակը։

—Ո՜վ մեծ Արարիչ, շնչացի ես աղբիւրակի մտից հեռանալով, սահման չունի քո իմաստութիւնը։ Քանի-քանի մեծամեծ գործեր ես կատարում Դու մի կաթիլ ջրի ձեռքով։ Որքան կեանք ու գործունէութիւն կայ քո աշխարհի մէջ։

ԶՄԵՌՆ

Զմեռը թէ և արեգակը լոյս է տալիս, բայց քիչ է տաքացնում։ Նա ամառուան պէս չի մնում երկնքի երեսին. այդ պատճառով էլ ձմեռուան օրերն աւելի կարճ, իսկ գիշերներն աւելի երկար են լինում, քան թէ ամառուանը։ Գետերն ու լճերը այնպէս սառչում են, որ սառուցի վերայով կարելի է լինում մարդ գալ։ Գետինը ծածկվում է ձիւնով. բայց ձիւնը օգտակար է, որովհետև նորա տակ ամենասասիկ ցրտերի երեսից պահպանվում են ծաղիկների և հացաբոյսերի սերմերը, որոնք, եթէ ձիւնը չլիներ՝ կարող էին սառչել։

Ծառերի տերևները դեռ աշունքի վերջերում սկսում են թափուիլ, այնպէս որ դոքա ամենևին մերկ են լինում։ Կանաչ տերևների տեղակ այժմ կախկախվում են ծառերի ոստերից ձիւնի սպիտակ քուլաները։ Միայն եղևնին ու շոճին ձմեռն էլ են պահպանում իրանց կանաչ փշանման տերևները կամ ասեղները։ Այն ծառերը, որ այդպիսի փշանման տերևներ ունին, սավում են փշատերև կամ ասեղնաւոր ծառեր։

Զմեռը դաշտերում ու անտառներում շատ քչանում են թռչունները ու գազանները, իսկ միջատները բովորովին անհետանում են։ Դոցանից մի քանիսը կոտրվում են, թողնելով

միայն ձուեր. միւսները շատ խորը թաքվում են գետնի տակ, ինչպէս մրջնները։ Մի քանի միջատներ ամբողջ ձմեռը քնած են մնում և զարթնում են միայն ձիւնը հալուած ժամանակ։ (Ձմեռն ո՞ւր են գնում ճանճերը)։ Թռչուններից շատերը ձմեռը հազարաւոր վերստերով հեռանում գնում են տաք երկիրներ. ծիծեռնակները, սարեակները, արտուտները, սոխակները, դեռ աշունքն են հեռանում մեզանից։ Վայրի սագերը, արագիլները, կարապները, կռունկները շարիշար երամներով երկարաձգվում են երկնքով հիւսիսից դէպի հարաւ, այսինքն դէպի աւելի տաք երկիրներ։ Այդպիսի թռչուններին ասում են տեղափոխիկ թռչուններ։ Կաքաւները, փասիանները, ագռաւները, կաչաղականները, ծտերը մնում են մեզ մօտ ձմեռն, այդ պատճառով էլ ասվում են ձմերոց թռչուններ։

Գազանները էլ մեծ մասով ձմեռ ժամանակ թաքնվում են որջերի ու փուչակների մէջ։ Նոցանից մի քանիսը ամենացուրտ ժամանակը քնում են, կամ աւելի ճիշտ ասել. թմրում են, ինչպէս ոզնին, արջը, առնէտը։ Ընտանի անասունները— ձիանքը, գոմէշները, կովերը, ոչխարները, ցրտից ու քաղցից կկոտորվէին, եթէ մարդս տաք գոմեր չշիներ նոցա համար և չպատրաստէր դարման խոտ ու դարի։

Ձմեռը գալիս մարդը իւր պատրաստութիւնը տեսնում է։ Նա ոկսում է վառարանները վառել, դռներն ու պատուհանները պնդացնել և տաք հագուստ հագնել։ Անուաւոր սայլերի ու կառքերի տեղակ սկսում են դործ ածուիլ թեթև սահնակներ, որ ճռնչալով սահում են ձիւնի երեսով։ Գիւղացիք դաշտի գործերը դեռ աշունքն են լինում վերջացրած, բայց նոքա ձմեռն էլ ունին իրանց դործը։ Կանայք ձմեռը իլիկ կամ ճախարակ են մանում ու գործում են գուլպաներ, կապերտներ, գորգեր և այլն։ Ձմեռ ժամանակն աւելի շատ են վառվում ճրագներ ու կանթեղներ, քան թէ ամառը։ (Ինչո՞ւ)։

Ուրախալի բան է, երբ ձմեռը ծագում է արևը և ձիւնաթաղ դաշտերի վերայ պսպղում են միլիոնաւոր կայծեր, իսկ ծառերը հենց իսմանաս զարդարուած են լինում ձիւնեղէն ապակիներով։ Բայց ձմեռը նա միայն կարող է ուրախանալ, ով որ տաք տուն ունի ու տաք հագուստ. ով որ բքաբեր ցրտի ժամանակ միջոց ունի նստիլ վառ հնոցի առաջև, կուշտ ընթրիք ուտել և յետոյ տաք անկողնի մէջ քնել։ Բայց ի՞նչ է լինում թշուառ ծերունի աղքատի օրը։ Զնայելով սաստիկ ցրտին, նա ստիպուած է ման գալ դռնէ դուռն, ձեռք մեկնել սորան ու նորան և սպասել թէ ո՞վ է «Աստուծոյ սիրուն» մի կտոր հաց տալիս նորան։ Ծերունին չունի դռնէ մի տաք քուրձ. նորա տրեխները ծակծկոտ են և հին, վերարկուն պատառ-պատառ. նորա ձայնը դողդոջում է ծերութենից ու ցրտից, աչքերը լցվում են արտասուքով, ձեռներն ու ոտները դողում են։ Տրտում է այն մանուկն էլ, որ ման է ածում կոյր աղքատին. խղճուկը կանգնելով կամ մէկ կամ միւս ոտքի վերայ՝ փչում է փէտացած մատներին, այն ինչ դաժան ցուրտն էլ քամում է նորա աչքի արտասուքը։ Ո՜հ, թոյլ տուէք նորանց տաքանալու, կերակրեցէք նորանց և ձեռքից եկածը մի՞ խնայէք։

Բայց ձմեռը ամե՛ն օր չի պարզ լինում։ Մէկ էլ տեսնում ես մի բուք վեր կացաւ, և սաստիկ քամին սուլելով ու ֆշշալով սկսեց քշել դալարել օդի մէջ ձիւնի քուլաները։ Շատ անգամ այսպիսի բուքերին ճանապարհորդը ճանապարհը կորցնում է։ Լաւ է, եթէ նա խելք անի մնի ու թաղուի ձիւնի տակ, (որովհետև այնտեղ տաք է լինում), եթէ ոչ՝ շատ հեշտութեամբ կփէտանայ նա դաժան ցրտի մրրկի ձեռքից։ Ի՛նչքան ուրախ կլինի մարդ այդպիսի օրը գտնէ մի կերպ քաշ դալ մինչ գիւղը։ Բարեսիրա գիւղացին սիրով ընդունում է ցրտահալած ճանապարհորդին, հնոցը թէժացնում է և հիւրասիրում է նորան Աստուծոյ տուածով։ Թունդ ցրտերը ջրօրհ-

նէքին են լինում։ Հիսփսային երկիրներում այդ ժամանակ այնպիսի ցրտեր են պատահում որ թռչունները օդի մէջ մինչև անգամ սառչում ու ցած են ընկնում գետնի վերայ։

———

ԱՂՔԱՏ ԿԻՆ

Ցուրտը փչեց, ձմեռը սաստիկ,
Ձիւնը ծածկեց գետինը.
Ամենայն մարդ մտաւ իւր տուն
Պատսպարուել ցրտից։
Ժամի դռնում դողդողալով
Կանգնած է մի աղքատ կին.
Նորա հանդերձը պատառ-պատառ
Զուներ շատիկ իւր հագին.
Անհամարձակ նա իւր ձեռքը
Պարզում է անցկացողին,—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Զեզ, սիրելիք, ասեմ ով էր
Այս խղճալի աղքատը,
Այն ցրտումը տաքորիկ
Կանգնած ժամի դռնումը.—
Շատ ժամանակ դեռ չէր անցել
Երբ նա փառքով ու պատուով
Ման էր գալիս փողոցներում
Իւր սեպհական կառքերով.
Այժմ վախով նա իւր ձեռքը
Պարզում է անց կացողին,—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Ամենայն օր նորա դռնում
Կանգնած էին շատ կառքեր,
Միշտ հացկերոյթ, ընթրիք գինով,
Նուագարան ու տաղեր.
Ամենայն ոք ցանկանում էր
Լինել նորան բարեկամ.
Ամենայն ժամ նորան բաց էր
Շռայլ քսակը մեծատան.
Այժմ զրկուած ամեն բանից,
Զուներ անգամ հացի գին,
«Ողորմութիւն արէք, պարոն
Անտուն, անտէր աղքատին»։

Ժամի դռնում նա կանգնած է
Աչքերը կոր, վիզը ճուկ.
Նորա նախնի բարեկամքը
Զեզ ասում նորան. «խղճուկ,
Ե՛կ դու մեր մոտ. մենք կամքենք
Քո վիճակի դառնութիւն
Կը թուլացնենք ճակատագրիդ
Խիստ հարուածի սաստկութիւն».
Նա տանում է տառապելով
Այս սոսկալի վշտերին,—
«Ողորմութիւն արէք պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

———

ՅՈՂ, ԵՂԵԱՄՆ, ՁԻՒՆ ԵՒ ԿԱՐԿՈՒՏ

Գիշերն արեգակը մայր մտնելուց յետոյ, երկրի մակերևոյթը, որ ցերեկով տաքացած է լինում՝ սկսում է պաղել որովհետև նորա տաքութիւնն օդի մէջ է անցնում, իսկ երբ երկիրը

աւելի պաղ է լինում օդից, այն ժամանակ նորա երեսին կաթիլ-կաթիլ սկսում են ժողովել այն անտեսանելի գոլորշիները, որ մինչ այն ժամանակ գտնվում էին օդի մէջ. իսկ և իսկ այնպէս, ինչպէս որ պաղ բաժակի կողքերին ժողովվում են ջրի կաթիլներ, երբ որ մենք տաք սենեակ ենք տանում նորան: Այդ կաթիլները ցօղ են անուանվում. նոքա լինում են խոտերի ու տերևների վերայ սովորաբար առաւօտեան ժամանակ, երբ որ գետին, առաւել պաղ է լինում. նոքա շողշողում են արևի տակ և մնում են երկար ժամանակ մինչ ցամաքիլը, այսինքն վերատին շոգիանալը: Երաշտութեան միջոցին, երբ անձրևներ չեն լինում, ցողը գոնէ մասամբ զովացնում է ծարաւած բոյսերը:

Աշունքը, երբ զիշերով այնքան է պաղում երկիրը, որ ջրի փոքրիկ մասերը նորան դիպչելով սառչում են, ցողը գետնի երեսին, պաղած կտրներին ծառերի տերևների վերայ—եղեամն է դառնում, և մենք զարթնելիս տեսնում ենք որ գետինը, խոտերը, տերևները, ցանկերը և կտուրները սպիտակել են: Բայց արեգակը բարձրանալով նորից ցօղ է շինում նորան, իսի ցողը՝ նորից շոգիացնում:

Եթէ որ անձրևի կաթիլներն անց են կենում այնպիսի օդի միջով, որ ամպերից սառն է լինում, այդ կաթիլները սառչելով դառնում են սառցի կտորներ կամ կարկուտ: Ուրեմն կարկուտը սառած անձրև է: Երբեմն կարկտի հատիկները շատ մեծ-մեծ են լինում. կարկուտը գալիս է շատ անգամ ամառուան ամենաջերմ ժամանակը, երբ քամին յանկարծակի պաղեցնում է օդը, յառաջ քան ամպերի պաղելը: Հարաւային Ամերիկայում երբեմն ձուի մեծութեամբ կարկուտ է գալիս, այդպիսի կարկուտը կոտորում է ոչ միայն թռչուններին, այլ և մեծ անասուններ:

Եթէ որ այն ամպը, որի միջից անձրևը գալու է լինում,

ինքը շատ պաղում է, այն ժամանակ նորա միջի գոլորշիները դառնում են գեղեցիկ ձիւնահատիկներ, կամ փոքրիկ սառցային բիւրեղներ, դոքա բաղկանում են սառցի ամենամանր կտորներից, որ ընդհանուր կենտրոնի շուրջը դասաւորուած են լինում զուգաչափ: Ձիւնի հատիկները տեսակ-տեսակ են լինում և երբեմն նմանում են սիրունիկ ոստղերի:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԲՈՑՍԵՐՆ ԻՆՉ ՕԳՈՒՏ ԵՆ ՏԱԼԻՍ ՄԱՐԴՈՒՆ

Մարդս ինչպէս աշխարհի տիրապետողը՝ իւր կարիքների և մինչև անգամ իւր ցանկութիւնների համար շահվում է կենդանիներից ու բոյսերից:

Կենդանիներից ստանում ենք միս, ճարպ, կաթն, ձու, կաշի, բուրդ, սաև, ոսկր, եղջիւր, փետուր, մարգարիտ, փղոսկր, մեղը, մեսաքս և էլի ուրիշ շատ նիւթեր: Շատ կենդանիներ, որ չեն տալիս մեզ ոչ ուտելու և ոչ հագնելու նիւթեր, զուարճացնում են մեզ. օրինակ սոխակը, քնարիկը, թութակը. մի քանիսին հեծնում ենք. միւսերը պահպանում են մեր տունը, իսկ միւսերը փչացնում են մեզ համար վնասակար անասուններին: Բայց կան և այնպիսիքը, որ, ինչքան յայտնի է, միայն վնասակար են, զօրօրինակ, թունաւոր օձերը, անօգուտ, թէև փառահեղ, առիւծը, տաղտկացնող ճանճը և այլն:

Բուսական թագաւորութիւնը մեզ աւելի շատ օգուտ է տալիս, քան թէ կենդանականը: Իբրև կերակուր մենք գործ ենք ածում այնքան բազմաթիւ բոյսեր, որ նորանց համրելն անգամ դժուար է: Մի քանի բոյսերի պտուղն ենք ուտում, ինչպէս է, խնձորը, տանձը, ընկոյզը, ծիրանը, կեռասը և այլն: Միւսների ծաղիկները, օրինակ, թուզ ոսի ծաղիկը թաքնուած

է լինում պտղի մէջ, վարդը, որի անուշահոտ թերթերից քաղցրաւենիք են շինում և այլն։ Այլ միւսների սերմերն ենք ստանում. զորօրինակ, ցորենը, գարին, կորեկը և առհասարակ բոլոր հացհատիկները, կանեփը, վուշը, արևածաղիկ սերմերը և այլն։ Մի քանիսների միջուկն ենք առնում, ինչպէս սագօ ասված արմաւենունը։ Ուրիշները տալիս են մեզ իրանց տերևները. օրինակի համար, կաղամբը, անանուխը, թէյը։ Մի քանիսն առաջարկում են մեզ իրանց հիւթը, օրինակ, շաքարի եղեգը, ճակնդեղը, խնկենին։ Միւսներն իրանց սոխաբմատը (սոխուկը.) ինչպէս, սոխը, սխտորը, գետնախնձորը։ Այլ միւսների արմատներն ենք գործ դնում, զորօրինակ. գաղարը, ճակնդեղը, բողկը և այլն։ Մենք դեռ չենք խօսում այս տեղ և այն բոյսերի մասին, որոնք գործ են ածվում իբրև դեղ և որոնց թիւ ու համարը չկայ։

Բոյսերը ոչ միայն կերակրում, այլ և հագցնում են մեզ. այդպիսիքն են կտաւիը, բամբակը և այլն։ Նոյն բոյսերից էլ ներկ ենք ստանում, որոնցով ներկում են չիթեր, չուխաներ, փայտաշէն կարասիք և տան պատեր։

Բայի ուտելիքից ու հագնելիքից բոյսերը տալիս են մեզ նաև վառելիք և նիւթեր շինութեանց, նաւերի մակոյկների, գահոյքի և ուրիշ հազար ու մի բաների համար, թղթի համար, որի վերայ մենք գրում ենք, թանաքի համար, որով գրում ենք։

Բայց այս դեռ բոլորը չէ. — բոյսերը մաքրում են այն օդը, որ շնչում ենք մենք. նոքա խլում են օդից ածխային թթու, որ վնասակար է կենդանիների կեանքին, նորանից ածուխ են հանում իրանց համար և յետ են տալիս օդին թթուածին, առանց որի ոչ մի կենդանի չէ կարող ապրիլ։

Բոյսերը կերակրում են ոչ միայն մարդուն, այլ և ամեն մի շնչաւորի։ Կենդանիներից ոմանք ուղղակի բոյսերով են կերակրվում, իսկ այլ ոմանք ուտում են բոյսերով կերակրուողներին, բայց ամեն մի կեանք ունեցող՝ ուղղակի թէ ընդմիջապէս, կերակրվում է բոյսերով։ Առիւծը պատառում է անզօր այծեամին, բայց նա սնուած է լինում խոտերով գայլը գիշատում է խոզուկ նապաստակին, բայց նապաստակը կերակրվում է թոքրիկ ծառերի կեղևով. տերևներով ու կանաչներով. աղուէսը ուտում է հաւին, բայց նորա համար միսը գոյացած է լինում հացհատիկներից. կոմշ ու ոչխարը տալիս են մեզ միս, բայց այդ միսը գոյանում է խոտից ու դարմանից, որ նոքա մարսում են իրանց ստամոքսի մէջ։ Պոզվատի պէս ամուր փղոսկրը գոյանում է բրնձից, խոտերից ու տերևներից, որոնցով կերակրվում է փիղը։ Մեղուն մեզ մեղը է տալիս, բայց նա այդ մեղրը շինում է բոյսերի անօթիկներից։ Շերամը մեռաքս է հիւսում մեզ համար, բայց նա թելն նիւթը ստանում է թթենու տերևներից։

Բայց և ինչքան գեղեցկութիւն են տալիս բոյսերը մեր երկրին։ Նոքա ծածկում, կենդանացնում ու զարդարում են այն մեռեալ քարերը կաւերը, աւազները, այն անկեանք հանքերը, որոնցից բաղկացած է երկրի կեղևը։ Ով որ եղել է մի աւազուտ կամ քարոտ անապատում, ուր հարիւրաւոր վերստ շրջակայ տարածութեամբ չի երևում ոչ մի ծառ, ոչ մի խոտ, և յետոյ մտել է մի առատ երջանիկ աշխարհ — նա կանգնելով փառահեղ, պայծառ ու կանաչազարդ դաշտի մէջ տեղում և նայելով ալեծածան արտերին, գոյն զգոյն ծաղիկներին, ստուերախիտ ու զով անտառներին՝ չի կարող չփառաբանել այն Տիրոջը, որ ստեղծել է երկիրս և հրամայել է նորան զգեստաւորուիլ բուսական հանդերձով։

ԿԵՐԱԿՐԻ ԱՂ

Աղը միակ հանքային նիւթն է, որ գործ է ածում մարդը իբրև կերակուր. իսկ իբրև դեղ գործ են ածվում մի քանի ուրիշ աղեր: Նա ոչ միայն համեղացնում է մեր շատ կերակուրները, այլ և օգտակար է և մինչև անգամ կարևոր առողջութեան համար. բայի դորանից աղի օգնութեամբն է, որ երկար ժամանակ պահում են միսը, ձարպը, ձկները, ոսկրները, վարունգը և շատ ուրիշ օրգանական (գործարանաւոր) առարկաներ:

Աղի գոյնը ձեզ լաւ յայտնի է. գունով նորան դժուար է որոշել շաքարից, բայց համից իսկոյն կարելի է իմանալ մէկ բանի մէջ աղ կայ, թէ չէ: Աղը բոլորովին լուծվում է ջրի մէջ և տալիս է նորան աղի համ: Բայց ջուրը կարող է լուծել իւր մէջ միմիայն մի որոշ չափով աղ, նայելով նոյն իսկ ջրի քանակութեանը, և եթէ չափից դուրս աղ ածենք ջրի մէջ, նա էլ չի լուծիլ, կամ ինչպէս ասում են—կը յագենայ աղով:

Ջրի մէջ աղը լուծելուց յետոյ կրկին կարելի է յետ ստանալ նորան, նորա համար հարկաւոր է միայն եռացնել ջուրը, մինչև որ բոլոր ջուրը գոլորշիանայ ու ցնդի օդի մէջ, այն ժամանակ մաքուր աղը միայն կմնայ տակը: Եթէ ածենք աղաջուրը մի տափարակ ամանի մէջ և դնենք նորան մի տեղ քանի մի օր, ջուրը փոքր առ փոքր կգոլորշիանայ, իսկ ամանի յատակի վերայ կերևան բազմաթիւ փոքրիկ բիւրեղներ, որոնց բոլոր վեց երեսներն էլ հաւասար կլինին իրար և որոնք այդ պատճառով անուանվում են խորանարդիկներ: Աղի բիւրեղները թափանցիկ են լինում և փայլուն:

Աղը կարող է լինել և՛ հաստատուն և հեղուկ դրութեամբ, ուստի նորան ձեռք են բերում կամ գետնի տակից հանելով, ինչպէս ուրիշ շատ քարեր ու մետաղներ, կամ աղով

յագեցած ջրերից, օրինակ—լճերից, որոնց տակը բիւրեղացած նստած է լինում աղը:

Հարկաւոր է ասել, որ ամեն տեղ ծովի ջուրը աղ է պարունակում իւր մէջ, թէև ոչ հաւասարաչափ, բայց ծովի ջրի մէջ բացի աղից ուրիշ խարնուրդներ էլ կան, ուստի այդ ջուրը դառն է լինում և անպիտան խմելու համար: Հանքային աղը կամ քարաղը մեզանում ստանում են Երևանի նահանգի Էջմիածնայ գաւառի Կողբ գիւղից և Հին—Նախիջևանից: Հայաստանը շատ երևելի է իւր բազմաթիւ քարաղի հանքերով. Ղարս քաղաքի քարաղը աղնիւ ու թափանցիկ տեսակն է. շատ ընտիր է նոյնպէս Թոլգում քաղաքին մօտաւոր Նորաշէն գիւղի քարաղը: Ծովի աղը ստացվում է մեզանում Բագու քաղաքից:

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այն ժամանակուանից սկսած, երբ մարդիկ կարողացան թուղթ շինել, գրագիտութիւնն աւելի և աւելի սկսեց տարածուիլ, որովհետև թուղթը շատ էժան էր մագաղաթից և բոլոր ուրիշ նիւթերից, որոնց վերայ գրում ձին առաջ. փող չունեցողն էլ այժմ կարող է ձեռագիրներն արտագրել: Սակայն արտագրելը շատ ժամանակ էր պահանջում, բացի դորանից, հեշտ չէր ձեռագիրներն ձեռք գցելը ևս: Ահա և հնարեցին տառեր ձուլելն ու միանգամից շատ գրքեր տպելը: Այս, ի հարկէ մեծ բարերարութիւն էր մարդկանց համար:

Տպածը շատ հեշտ է կարդալ, քան թէ ձեռագիրը, և բաւական է միանգամ շարել տառերը մի գրքի համար,—նորանից յետոյ թէկուզ հազարաւոր օրինակներ տպիր այն գրքից մի և նոյն շարուածքի վերայ: Տպագրութեան արհեստը հնարեց մի գերմանացի, Գուտենբերգ անունով, մեզանից 400 տարու չափ առաջ: Նորանից առաջ մի տախտակի վերայ փո-

ընդարձակում էին նեղարներ կամ գրեր, սև ներկ էին քսում վրան և փորագրածը տպում թղթի վերա։ Գուտենբերգն սկզբում այն արեց միայն, որ տախտակի վերայ փորագրած տառերն սկսեց կորտել, այսինքն շինեց ջոկ-ջոկ փայտեայ տարեր։ Այսպիսի կերպով էլ հարկաւոր չէր ամեն մի էջի համար առանձին տախտակ փորագրել, որ գիրքը տպվելուց յետոյ պէտք էր դէն դցել։ Միևնոյն տառից այնքան շատ էր շինվում, որ հարկաւոր եղած տեղը շարում էին նորանից, առանց ձեռք տալու արդէն շարուածին։ Երբ որ գիրքը տպվում պրծնում էր, հարկաւոր էր միայն շարած տառերը ցրուել և ամեն մէկը իւր գզրոցը դցել, որ յետոյ էլ դժուար չլինի գտնելը։ Բայց փայտի տառերը դիմացկան չէին. ուստի և մոռացեցին տառեր ձուլել արծաթի ու ցինկի խառնուրդից. այդպիսի տառերը ոչ շատ թոյլ էին, որ շուտով վչանան, ոչ էլ շատ ամուր, որ թուղթը պատառեն։

Այժմ գրաշարը ձեռագրին նայելով՝ տառերը շարում է հաւասար չափով, շարքերի արանքում բարակիկ մետաղէն քանոններ է դնում, որ շարքերը չխառնուին իրար. և ամեն մի երեսի շարքերը կապում պնդացնում է առանձին շրջանակի մէջ։ Այդ շրջանակները դնում են մեքենայի վերայ (քանիսը որ կարող է տեղաւորուիլ թերթի մի երեսում) տպագրական մուր են քսում և տպում։ Արագատիպ մեքենաներ կան, որոնցից մէկը երեք գործաւորի օգնութեամբ մի ժամու մէջ կտպէ 5000 թերթ երկու երեսից էլ։

Երբ որ գիրքը տպվում է այսքան արագ և այսքան շուտ քանակութեամբ, էլ նա թանկ չէ կարող լինել. յետին աստիճան էլ եթէ կամենայ՝ կարող է մի քանի կոպէկով գիրք առնել և կարդալ։ Բայց ի՞նչքան արագ են հրատարակվում լուրերը տպագրութեան միջնորդութեամբ — դժուար է մինչև անգամ հաւատալ. օրինակի համար, այսօր երեկոյեան տեղե-

կանում են մի որևէց է պատերազմի կամ նաւերի դալստեան կամ մի ուրիշ բանի մասին, եղուց առաւօտեան բոլոր քաղաքն արդէն կարդում է այդ լուրը լրագիրների մէջ։ Այսպէս ուրեմն տպագրութիւնը իրար մօտեցնում է մարդկանց և օգնում է ընտանեկան տարածուելուն։

ԳՐԱՄԻ ՔԱՌԱԿԸ

Երեք բարեկամ ուխտ էին դրել միմեանց հետ, որ կեանքի ամեն հանգամանքների ու կարիքների մէջ անձնազոհութեամբ օգնեն իրար, ինչպէս երեքեանքը մի անձն. նոքա բնակվում էին զանազան տեղերում և ժամանակ առ ժամանակ հաւաքւում էին ի միասին, որ մէկ մէկի յայտնեն իրանց գլխի անցքը։ Սոցանից մինին մի անգամ պատահեց փողի կարօտութիւն, որ թէև այնքան դժուար չէր անցկացնելը, բայց մեծ պակասութիւն կբերէր նոցա անուանը, եթէ ստիպուած լիներ հրապարակաւ յայտնել իւր կարօտութիւնը։ Իսկոյն թուղթ գրեց նա իւր մօտաւոր բարեկամին և խնդրեց, որ ուղարկէ իրան հարկաւոր եղած փողը։ Միւս օրը ստացաւ փողը մի քսակի մէջ կնքած. նա զբաղուած լինելով դեռ ևս ուրիշ գործով մի կողմ դրեց քսակը, առանց բաց անելու։ Մի քիչ անցած մինը թուղթ բերեց սորա մօտ միւս բարեկամից, որ խնդրում էր առաջին իսկ փոստով ուղարկիլ այնքան փող, ինչքան կարող էր։ Արդարամիտ մարդը կարծելով թէ իւր բարեկամը աւելի մեծ դժուարութեան մէջ է՝ առանց երկար մտածելու առաւ կնքած քսակը և ուղարկեց բարեկամին։

Բայց էգսը երեկոյեան առաջին բարեկամը, որից ինքը ստացել էր փողը, եկաւ նորա մօտ և տուեց նորան մի և նոյն կնքած քսակը։ Այս ի՞նչ զարմանալի անցք է, հարցրեց առաջին բարեկամը. այս քսակը ինչպէս ես կնքած ուղարկել էի

քեզ, այնպէս էլ դարձել է ինձ մօտ, խնդրեմ բացատրես ինձ բանի որպիսութիւնը։»—Մի՛ զարմանար, պատասխանեց միւս բարեկամը, ես դեռ չէի բացել քըսակը, երբ իմ և քո բարեկամը թուղթ էր գրել ինձ և շատ խնդրում էր, որ ունեցած փողս ուղարկեմ իրան։—«Այժմ հասկանում եմ բանը, ասաց առաջինը, ես իմ բոլոր պատրաստի փողս ուղարկել էի քեզ և վախենալով, որ մի գուցէ փողի հարկաւորութիւն ունենամ՝ գրեցի մեր բարեկամին և փող խնդրեցի նորանից։ Ահա տեսնում ես որ նա էլ իւր մօտ չունենալով խնդրել է քեզանից, որ ուղարկէ ինձ։ Այժմ վեր առ այս փողը և գործ դիր, որովհետև նա քեզ աւելի է հարկաւոր։ Եւ ի՞նչպէս կարող է մեզ մի կարօտութիւն պատահել, երբ մենք այսպէս սրտակից բարեկամ ենք միմեանց։

* * Շ. * *

Արիստոտել հին փիլիսոփային հարցրին, Թէ ի՞նչ է բարեկամը։ Ասաց. «Մի հոգի երկու մարմնի մէջ»։

ՋԵՖԵՐՍՕՆԻ ՏԱՍՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Միացեալ Նահանգների նախագահ Ջեֆերսօնը որ մեռաւ 1826 թուականին, իւր բարեկամին ուղարկած նամակի մէջ գրել էր յետագայ տասն կանոնները։

Ա. Ինչ որ այսօր կարող ես անել, էգուցուան մի՛ գցիր։

Բ. Ինչ որ ինքդ կարողես անել, ուրիշին մի՛ անիլ տար։

Գ. Մինչև չվաստակես՝ փող մի՛ վատնիլ։

Դ. Լիժան ասելով մի՛ գնիր այն բանը, որ քեզ համար անօգուտ է։

Ե. Հպարտութիւնն ու գոռոզութիւնը մեզ աւելի ճնաս կբերեն, քան Թէ սովը, ծարաւն ու ցուրտը։

Զ. Սակաւ ուտելիներուս համար երբէք չենք գղջալ։

Է. Սիրով արած բանից մարդ չի՝ ձանձրանալ։

Ը. Վրանի քանի անգամ տրամում ենք միայն մեր երեւացած թշուառութիւններով, որ իրօք ամենևին չեն պատահում մեզ։

Թ. Ամեն բանի լաւ կողմն առ միշտ։

Ժ. Եթէ բարկացած լինիս՝ խօսելուցդ առաջ մինչև տասն համրիր. իսկ եթէ կիրքդ սաստիկ լինի—մինչև հարիւրը։

ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ

Երկու երիտասարդ, որ սերտ բարեկամ էին իրար հետ, մի գարնանային օր ձեռք ձեռքի տուած զբօսնում էին անտառի մէջ։ Նոցանից մինը ասաց իւր ընկերին. Եկ որոնենք այստեղ պատկեր մեր բարեկամութեան համար։

«Մտիկ արա, ասաց առաջինը, այս տերևազարդ վայելչակազմ կաղնուն, որ առոյգ զօրութեամբ բարձրանում է այստեղ ինչպէս մի տաճարի սիւն. մտիկ արա և այս քնքոյշ պատուտակին, տես ինչպէս գրկախառնել է նորան, կարծես թէ կամենում է միանալ նորա հետ. առանց կաղնուն նա պէտք է փռուէր գետնի երեսով։ Երիտասարդները նայեցին միմեանց երեսին սա խօսեցին,—Գեղեցիկ պատկեր է դա. դալար կանչութիւնը քաղցրապէս զարդարում է ծանրադէմ կաղնու բունը. այդպէս էլ աւելի գօրեղը աղնուացնելով ինքն իրան, սիրով քաշում ու բարձրանում է իւր վերայ նորան, որ աւելի քնքոյշ է և թոյլ։ Այո՛, մի գեղեցիկ ու քաղցր ներդաշնակութիւն է այս, դա՛ չէ բարեկամութեան պատկերը։

«Ահա՛ այն թումբի կուրծքի վերայ այգեգործը կապում է խաղողի ծառը փեկոնի վերայ, դա մի խորհրդաւոր միաւորութիւն է։ Ամուրը կրում է իւր վերայ աւելի փափկին ու օգ-

տակարին, որ պատրաստէ մարդուս համար ամենագնիւ պտուղը։ Բայց մի՞թէ այդ դաշնաւորութիւնը չէ հաստատւում մարդու ձեռքով, ասացին երիտասարդները. այդ անվում է շահ ստանալու համար, և մի՞թէ չէր կարող պատահել, որ խաղողենին ծանր ողկոյզներով բեռնաւորուած ճեղք է իրան պահպանող ծառի ճիւղը և կամ իւր լայն տերևներով ծածկէ նորա տերևները։ Ցգեղ չէ այդ պատկերն էլ. դա նման է քաղաքական ընկերութեան մէջ մարդկանց ոյժերի միաբանութեանը, բայց բարեկամութեան պատկերը չէ-դա։

Բարեկամութեան հոգեկից դաշնաւորութիւնը չունի իրան հաւասար բան ոչ երկնքումը և ոչ աշխարհիս վերայ, ասում էին նոքա։ Վերջապէս նոքա հասան երկու մատաղատունկ կաղնիների միաւորուած շուաքի տակ և մոտիկ էին անում այն փառաւոր և ուժեղ ծառերին։ Ի՞նչ հիանալի տունկեր են սոքա, ասացին երիտասարդները։ Սոցա արմատները պինդ խրատրատած են իրար, սոցա կատարները միահաւասար բարձրանում են դէպի երկինք. երկուսն էլ համաղօր ընդդիմանում են փոթորկին, և եթէ յաղթուին՝ երկուսն էլ միասին պէտք է կործանուին։ Նմանութիւն չունի՞ արդեօք այս մեր բարեկամութեանը, հարցրին երիտասարդները։ Նոքա նայեցին միմեանց երեսին փայլատակող աչքերով և գրկախառնեցին իրար այրական կաղնիների հովանաւորութեան տակ,

ԲԱՐԴԻՆ ՈՒ ՎԱԶԸ

Մի օր բարդի ծառը կցեց նախատել
Խաղողի վազին՝ գոռոզ դէմք առած.
—«Ի՞նչ ես գուշ եկել, ակար արարած.
Սա էլ որ չլինիմ՝ շուաք չտամ քեզ,
Ի՞նչ պիտի անես.
Թէ որ չթողնեմ

Փաթաթուիս ինձնով.
Ասա՛ ինձ, էլ ո՞վ
Քեզ կգահպանէ,
Բարակ քամին էլ հոգիդ կը հանէ։
Մտի՛կ արա ինձ, տես ուր եմ հասել
Ինձ պէ՛ս հասակ առ, որ ամէն մարդ էլ
Քեզ մտիկ տալիս՝ ուշն ու խելք գնայ,
Շլինք ծուելով ոչ պատիւ կըտայ։
Ոչ ցիր է ինձ պէտք, ոչ դերան, ձորկ.
Մէկ տուաս գետնին, միտը երկնքի,
Ամպի, անձրևի, քամու առաջին.
Ձղներս վեր քաշած՝ որ սուր ու կացին
Նորան չդիպչին։

Բայց ձեր խեղճ ցեղը դուրս եկաւ թէ չէ՝
Շուտով շլինքն է խոնարհում, թէ քիւում,
Ոտի տակ ընկնում, մէկ հով դիպչելիս
Գետնին չոքի չոք դէս ու դէն ընկնում.
Ափսուս այդ պտուղ, որ դուք էք տալիս»։
—«Ի՞նչ եմ անում ես հատա ճիւղն ու հատակ,
Շատ բարձրանանք էլ, դարձեալ մեր ապգը
Այն սրտի տէր չէ, որ գլուխ բարձրացնի»,
Պատասխան տուեց վազը սիրելի։
«Ուր թողնենք մեր քաղցր պտղի ճիթերը,
Էլ ո՞վ կցրուի մարդկանց վշտերը,
Էլ ո՞վ այն ազնիւ, այն սուրբ բաժակը
Կասայ, որ միշտն հոգու միշտակը։
Իսկ է, երբեմն շուաքդ տեսնում ենք,
Երբեմն քեզնով մենք փաթաթվում ենք,
Բայց այն էլ կայ որ մեր լարի տէրը,
Թէ որ չառանայ մեր օգուտները

Քեզ մի օր էլ է չի պահիլ այգում.
Ուրեմն ի զուր ես դու գոռոզանում.
Մեզ որ պահում են, սիրում, ջուր տալիս՝
Սրանց քեզ էլ է մեր շահը գալիս։
Ինչքան սիրտդ տայ, այնքան դարձրացիր,
Բայց և իմացիր,—
Մենք էլ որ պտուղ չտանք քեզ նման,
Մեր նիւթն ու ոյժը չկորցնենք այքան,
Ոչ կրկնռանանք, ոչ կցածանանք,
Այլ կհաստանանք ու կմեծանանք.
Բանից վախեցողն ու փորի գերին
Այդպէս կգիրանայ, հասնի երկնքին»։

* * 6. * *

Մի ծնող իւր որդուն բերելով ուսուցչի մօտ՝ խնդրեց, որ դաստիարակէ նորան։ Երբ ուսուցիչը պահանջեց իւր աշխատանքի վարձը տարեկան 100 մանէթ, ժլատ ու տոէտ ծնողը կարմրելով վարձի բանակութիւնից՝ ասաց. «Օրինա՛ծ, այդ քան փողով ես մի ստրուկ կարող եմ դնել»։ Ուսուցիչը պատասխանեց. «Դնի՛ր, այն ժամանակ կունենաս երկու ստրուկ»։

ԿՐՕՆԱՒԻՈՐԸ

Մի վանքում կենում էր մի կրօնաւոր, որ իրիկնապահին շատ վաստակած ու թուլացած էր երևում։ Վանահայրը մի անգամ հարցրեց նորանից այդ բանի պատճառը։ «Ո՛հ, պատասխանեց կրօնաւորը, ես ամեն մի օր այնքան գործ ունիմ կատարելու, որ եթէ Աստուծոյ շնորհը չօգնէ ինձ՝ իմ զօրութիւնս չի հերիքանալ։—Ես երկու արծիւ ունիմ սանձելու, երկու նապաստակ դաղարեցնելու, երկու բաղէ կրթելու, մի վիշապ յաղթահարելու, մի առիւծ նուաճելու։—Այդ ինչ յիմար գանգատներ են, ասաց վանահայրը, այդպիսի զանազան

գործեր միասին չեն յանձնում մի մարդու, և իմ վանքումս ամենևին այդպիսի պարտականութիւններ չկան։ «Այնու ամենայնիւ պատուական հայր, ես սուտ չասացի, պատասխանեց կրօնաւորը։—Երկու առիւծներն իմ աչքերս են. որոնց պէտք է մեծ զգուշութեամբ հսկեմ, որ չլինի թէ հաւանին այնպիսի բաներ. որ կարող էին ինձ տալ իմ յաւիտենական երանութեանը։ Երկու նապաստակներն իմ ոտներս են, որոնց պէտք է թոյլ չտամ վազելու կորստական ուրախութիւնների քամակից և մանգալու յանցաւոր ձանապարհներով։ Երկու բաղէներն իմ ձեռներս են. որոնց պէտք է կրթեմ ու արիացնեմ որ կարողանամ նոցանով ինձ և իմ կարօտ եղբայրակիցներին օգնել։ Վիշապն իմ լեզուս է. որոնց պէտք է միշտ սանձի տակ պահեմ, որ նա չխօսի ոչինչ անվայել և անպիտան խօսք։ Առիւծն իմ սիրտս է. դորա հետ անդադար պէտք է կռիւ տամ, որ ունայնութիւնը և անձնասիրութիւնը չը թագաւոր են նորա վերայ, այլ որ Աստուծոյ հոգին բնակուի և ներգործ է նորա մէջ։ Հիւանդն իմ մարմինս է, որ ինքնահաճութեամբ երբեմն այս բանն է ցանկանում, երբեմն այն, առանց քննելու թէ ցանկացած բանը վնասակա՞ր է արդեօք թէ օգտակար իմ ճշմարիտ առողջութեան համար։ Այս բոլոր գործերը վաստակեցնում են ինձ»։ Վանահայրը զարմանքով ականջ էր դնում կրօնաւորի ասածներին և վերջումը խօսեց այսպէս. «Եղբայր, դու աշխատում ես ցիրոջ այգումը, նա կվարձատրէ քո ջանքը յաւիտենական կերակրով կհանգստացնի քո վաստակաբեկ կարողութիւնը։

ԲԱԺԱԿ ՓՐԿՈՒԹԵԱՆ

Ահա մթնեց արևմուտքը Հրէաստանի աշխարհին,
Գայծառ օրը տեղի տուեց երեկոյեան խաւարին.

Արեգական վերջին լուսով գեռ կիսալեր վառ ի վառ
Գրկած պատած այդիներով Նէրսէսեան սուրբ կատար:
Երուսաղէմ—փառք Հնութեան լերանց վերայ հանգչում էր.
Կարկաչելով Յորդանանը ափերի մէջ թաքչում էր,
Մեռեալ—ծովը քնաթաթախ աչերն ի վեր ամբարձած,
Համարում էր անթիւ ասաղեր երկնից աչքին ըզմայլած:
Մութը իջաւ. . . տարածեցաւ գերեզմանի լռութիւն,
Ծագեց լուսին ու լոյս տուեց Գեթսեմանի այգիուն.
Զիթենիի ծառերու տակ հոգի վրայ տարածուած,
Երեք հոգի խոր քնել են վիշտն ու հոգսը մոռացած.
Բայց ուրիշ քուն կաշկանդել էր համայն ազի մարդկութեան,
Խրուած թաղուած մինչի կոկորդ ճահիճի մէջ մոլութեան:
Միայն Մինի սուրբ աչերից քունը հեռի էր փախչում,
Ոչ խայթ խըղճի, ոչ աշխարանք նորա հոգին էր տանջում:
Նա անմեղ էր. մոլութենէն նա միշտ մնաց անհաղորդ.
Լոկ մարդկութեան համար թափեց այսօր աչքից արցունք յորդ,
Մահագուշակ սարսուր ընկաւ նորա սկար մարմնին,
Երբ փրկութեան մարդկան ազգի բաժակ ակսաւ առաջին:
«Հայր, կոչեց նա, վիշտը հոգին իմ ճնշում է չարաչար,
Քանի որ կամ պակ ու փուր աչքէս անցնում են շար-շար.
Կուզայ ժամը (ես այդ գիտեմ) գառը ողջակէզ.
Չի արանջալ իւր վիճակէն, կը խոնարհի գլուխը հեզ,
«Միակ որդիդ պիտի մեռնի, որ ազգ մարդկան ազատէ,
Անգոհ մարդը նորա գլխուն հայոհոյանքեր կը թափէ.
Հայր, հայր, ինձնից թող հեռանայ այս բաժակը դառնութեան.
Որոնց համար ես պիտ՝ միռնիմ բնաւ չարժեն փրկութեան.
Բայց թէ Որդուդ դառն մահը ազգիա կուտայ նոր մի կեանք,
Նոցա անթիւ մեղաց համար լեցի արիւնն իմ փրկանք»:

---

* * 7, * * *

Մի փիլիսոփայից հարցրին, թէ ինչ բան առատել հին է. նա պատասխանեց. Աստուած. որովհետեւ նորա գոյութիւնն անսկիզբն է: Հարցրին. ի՛նչ բան սամենազեղեցիկ է. պատասխանեց. Աշխարհը. զատնան, նա Աստուծոյ գործն է. եւ նորանից աւելի գեղեցիկ բան չկայ:—Ո՞ր բանն է ամենից մեծ.—Տարածութիւնը. որովհետեւ ամեն բան պարունակում է իր մէջ:—Ի՞նչ բան աւելի շուտ ոտիցդ թէ:—Մտքը ընտրում թռչում ու վազում է ամենայն տեղ:—Ո՞ր բանն է ամենից զօրաւոր.—Կարգը որ ամեն բանի յաղթում է: Ո՞վ է: վերջապէս, ամենից իմաստունը:—Ժամանակը. որովհետեւ ամենայն բան գտնում է:

ՄԱՐՄԻՆՆԵՐ

Եթէ կամենանք մի քար կոտրելով մի քանի մասն անել, պէտք է զարկենք այդ քարին կռունով կամ մի ուրիշ բանով, եթէ ոչ քարը չի կոտրուիլ: Սորանից երևում է, որ քարի մասները պինդ կցուած են միմեանց հետ մի անշարժ զօրութեամբ: Այդ զօրութիւնը, որ քարի մասները պահպանում է իրարից հեռանալուց՝ ասվում է կցումն: Այս զօրութիւնը տեսնում ենք և ուրիշ շատ մարմինների մէջ. օրինակ, երկաթի, սպունգի, կաւեղէնի և այլն բաների. բայց ամենի մէջ ոչ հաւասարապէս: Այսպէս երկաթը չի կոտրվում կռանի զարկով. իսկ սպունգը և կաւիճը կարելի է մասներով էլ մաս մաս անել: Բայց այսու ամենայնիւ բոլոր այդ մարմինները իրանք իրանց չեն քայքայվում, նոցա մասները միմեանց հետ մնում են կցուած: Այս տեսակ մարմինները, որոնց մասերն իրար հետ պինդ կպած են կցման զօրութեամբ, ասվում են հաստատուն կամ պինդ մարմիններ: Ինչքան շատ լինի մի որ և իցէ մարմնի մէջ այդ կցումը, նա այնքան խիստ կլինի և ամուր:

Բայց արդեօք ջուրը և կաթն էլ կարող են հաստատուն մարմիններ անուանել: Եթէ ջուրը բաժակի մէջ ածենք՝ նորա մասերը չեն հեռանալ միմեանցից, և հաստատուն մարմնի

պէս կերևի մեզ. բայց եթէ բաժակը կոտրուի կամ գլորուի՝ ջուրը կսկսի թափիլ։ Այս նորանից է յառաջանում որ ջրի մասների մէջ համարեա թէ չկայ կցումն։ Այդ պատճառով երբ որ կամենում ենք ջուրը և կաթը պահպանել թափելուց՝ լցնում ենք ամանների մէջ։ Ուրեմն ջուրը և կաթն հաստատուն մարմիններ չեն։ Այս տեսակ մարմինները, որոնց մէջ կցումն այսքան աննշան է, ասվում են հեղուկ մարմիններ կամ հեղանիւթ։ Ջուրը, կաթը և ուրիշ հեղուկներ կարելի է լցնել կամ թափել կաթիլներով դորանց անուանում են կաթիլահեղուկ կամ ծորելի մարմիններ։

Մեզ ամեն կողմից շրջապատած է օդը, որով մենք շունչենք առնում։ Տեսնենք դա ինչպիսի մարմին է։ Վերցնենք մէկ փամփուշտ, փչենք նրան ու յետոյ պինդ կապենք բերանը։ Մեր փչած օդը այժմ փամփուշտի մէջն է։ Հիմայ սխմենք ձեռքով փամփուշտը և յետ քաշենք ձեռքերներս։ Մենք կընկատենք որ փամփուշտը առաջ կըսխմուի, իսկ յետոյ, երբ որ վերցնենք ձերքերներս, կրկին կընդունէ իւր առաջուայ փչուած դրութիւնը։ Այս տեսակ մարմինները, որոնք սեղմուելուց թեքուելուց, ճնշուելուց յետոյ, կրկին ընդունում են իրանց առաջուայ դրութիւնը ասվում են առաձգական մարմիններ։ Առաձգական մարմինների օրինակը մենք տեսնում ենք ռեզինի, պողովատե զսպանակի և սպունգի մէջ։ Այդ պատճառով օդն էլ է առաձգական մարմին, Արձակենք այժմ փոքր ինչ մեր փամփուշտի կապը և ձեռքերնիս մէկը դնենք բերանի վերայ միւսովը ճնշենք նորան։ Այդ ժամանակ մենք կզգանք որ փամփուշտի մէջ եղած օդը երբեմն վրստալով դուրս է հոսվում, և կարծես թափվում է փամփուշտից, որպէս թէ փամփուշտի միջնը չոր հեղանիւթ լինէր։ Այդ պատճառով օդը առաձգական հեղուկ մարմին է։ Մի և նոյն ժամանակ նկատում ենք որ փամփուշտի բերանը արձակում ենք թէ չէ

միջի եղած օդը իսկոյն սկսում է հոսիլ։ Այդ նորանից է յառաջ գալիս, որ օդի մասները միմեանց հետ ոչինչ կցումն չունին. նոքա մինչև անգամ աշխատում են հեռանալ միմեանցից և պարարիլ ամեն կողմ։ Այդ փատճառով եթէ կամենանք պահպանել օդը կամ որևիցէ ուրիշ առաձգականահեղուկ մարմին, պէտք է պահենք նորանց ամրապէս փակած ամանների մէջ։

Վերառնենք այժմ մի կտոր սառոյց։ Մենք արդէն գիտենք որ սառոյցը հաստատուն մարմին է։ Բայց այդ սառոյցը դնենք մի ամանի մէջ և բռնենք մոմի բոցի վերայ։ Այդ ժամանակ սառոյցը կհալի և մենք կստանանք կաթիլահեղուկ մարմին, այսինքն ջուր։ Եթէ այդ ջուրը տաքացնենք կընկատենք որ նորա միջից սկսում է ցնդիլ կաթիլահեղուկ մարմինը — ջրային շոգիները։

ԿՈՑՐԵՐԸ

Մի քանի կոյր մարդ ընկած մէկ ճամփայ
Գնում էին այնպէս, ինչպէս կոյրը կերթայ.
Ոտք էին փոխում, սայթաքում, ընկնում,
Կամ գլխին տալով ծնկի վերայ չոքում։
Մի անցուորական այս հէնց որ տեսաւ՝
Սիրտը մրմնջաց, մէկ փայտ վեր առաւ
Կոյրերին տուեց որ էլ վայր չընկնին,
Փայտը դէմ տալով գնան տեղ հասնին։
Կոյրերից մէկը գլուխը պատռած
Փայտը ձեռն առաւ, դարձաւ առաջնորդ.
Այսպէս լոքիլոք, մէկ մէկից բռնած
Ուղևորուեցան կոյրերը ճամփորդ
Ցանկարծ մէջները կռիւ բացուեցաւ,
Ով ասես՝ առաջ գնալ կամեցաւ։

Այս չվերջաց ծ՝ մի ուրիշ քամի
Մտաւ քթները, թէ ձեռնափայտի
Ցեղն ինչից կլինի, ի՞նչ ծառից կարած
—Բոսի փայտից էջ, մէկն ասաց յանկարծ.
Միւսը ընկերի դունչը ձեռելով՝
«Կաղնուց է պոկած», ասաց գոռալով:
Այսպէս հետզհետ բոլորից կռիւ,
Էլ ո՞վ է կարող տալ համար, հաշիւ,
Թէ քանի՛ մուշտակ, քանի՛ զարկ, քացի
Հասցրին իրար կոյրերդ խելացի.
Մեծ աւար ու դմիոց, աղմուկ բարձրացաւ,
Գլուխ ու բերան արնով ներկուեցաւ:
Այն փայտը որ պէսք է նորանց պահպանէր,
Միս—ապտան շինեց բոլոր ոսկրներ.
Խելօք կոյրերից մէկն էլ է սակայն
Ասածը թողուլ չեզաւ համաձայն:

Իմաստուն մարդիկը մեզ պէս կոյրերին
Որ հաւատ տուին, օրէնք կարգեցին,
Կամեցան որ մեզ օգնութիւն անեն,
Ոչ թէ մեր տունը քանդեն կործանեն:
Բթամիտ կոյրին ինչ ժամ պատարագ.
Այնքան ձգձգեցինք հաւատ ուրացակ,
Որ մէկի տեղը հազար ու միլիոն
Իրար գլուխ կերան, որ պահեն կանոն:

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Փրկիչը տակաւին աշխարհի վերայ էր, երբ Հայոց Աբգար Թագաւորը լսելով նորա հրաշագործութիւնների համբաւը և

խմանալով որ Հրէաները հալածում ու նեղացնում են նորան, նամակ գրեց, որ գայ իրան բժշկէ և յետոյ իրան հետ միասին հանգիստ ու ապահով բնակուի Հայաստանի նեղսիա քաղաքումը: Յիսուս անձամբ չկարողացաւ Աբգարի մօտ գնալ, բայց նամակով խոստացաւ, որ իւր առաքեալներից մէկին կուղարկէ: Քրիստոսի համբարձման յետոյ Թադէոս առաքեալը եկաւ Հայաստան, բժշկեց Աբգարին և մկրտեց վերջապէս նորան, այնպէս էլ քաղաքացիներից շատերին, դլխաւորապէս մեծամեծներին:

Աբգարն սկսեց մեծ ջանք անել Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը տարածելու համար, և ոչ միայն ինքը հոգով ընդունել էր քրիստոնէական ճշմարիտ հաւատը, այլ նամակներ էր գրում ու խնդրում շրջակայ երկիրների տիրապետողներին, որ քրիստոնէութիւնը չհալածեն իրանց իշխանութիւնների մէջ, այլ ընդհակառակն աշխատեն, որ նա տարածուի. մինչև անգամ խնդրեց Հռովմայեցոց Տիբերիոս կայսերը, որ Հրէաներին պատժէ Քրիստոսի հետ անգթաբար վարուելնուն համար:

Սակայն իւր ցանկացած նպատակը գլուխ չտարաւ՝ մեռաւ Աբգարը, որ անդրանիկն եղաւ քրիստոնեայ թագաւորներից:

Բ.

Բայց քրիստոնէութեան արեգակը երկար չփայլեց Հայոց երկրի վերայ. հեթանոսութիւնը իւր մռայլ քօղով կրկին փակեց Հայերի հոգեկան աչքը: Մէկ կողմից Աբգարի յաջորդները հալածեցին նոր կրօնը, միւս կողմից էլ ազգն ինքն էր դեռ ևս անպատրաստ մի այնպիսի վսեմ ուսումն ընդունելու համար, որպիսի Քրիստոնէական կրօնն էր

Այդ ժամանակուանից մօտ 300 տարի էր անցել, երբ

քրիստոնէութիւնը կրկին անգամ, բայց սուրաջուանից աւելի զօրեղ միջոցներով, սկսեց մտնուել Հայաստանի մէջ։ Հայոց Թագաւորն այդ միջոցին Տրդատն էր, որ անուանի էր իւր զարմանալի քաջութեամբը և Հռոմ քաղաքումն ստացած վարժութիւններովը։

Մի անգամ Տրդատ փառքով ու յաղթանակով մտաւ Երիզա գիւղը, որտեղ գտնվում էր Անահիտ աստուածուհու մեհեանը։ Թագաւորն ինքն սկսեց պաշտել Անահտին և հրամայեց, որ երկիրպագանեն, զոհեր մատուցանեն և կանաչ պսակներ ու ոսկեր ընծայ բերեն նորան։ Այդ ժամանակ մի Գրիգոր անունով մարդ չկասարեց Թագաւորի հրամանը, որովհետև սրտանց քրիստոնեայ էր։ (Գրիգորն այն Անակայ որդին էր, որ նենգութեամբ սպանել էր Տրդատի հայր Խոսրով Թագաւորին։) Թագաւորը թէ քաղցրութեամբ և թէ զանազան պատիժներ սպառնալով՝ սաիպում էր Գրիգորին, որ քրիստոնէութիւնը թողու, բայց երբ տեսաւ, որ ի զուր էր իւր աշխատանքը՝ սկսեց զարհուրելի չարչարանքներ տալ նորան. վերջը երբ իմացաւ, որ Գրիգորը Խոսրովին սպանողի որդին էր՝ հրամայեց որ նորան կողոպտեն, Արտաշատ բերդի խոր վերապը գցեն։

Երկար ժամանակ մնաց քրիստոնեայ Գրիգորը վերապի մէջ, հրաշապատում կեանք անցկացնելով այնտեղ, մինչև որ Տրդատը և իւր երևելի մերձաւորներից շատերը չարաչար հիւանդանալով, Թագաւորի քոյր Խոսրովիդխտի երազից իմացան, որ պէտք էր անշուշտ Գրիգորին հանել խոր վերապից որ բժշկէր նոցա անտանելի ցաւագարութիւնը։

Ելաւ Աստուծոյ մարդը վերապից և բժշկեց ախտաժէտների ոչ միայն մարմինը, այլ և հոգին, դարձնելով դէպի քրիստոնէութիւն և մկրտելով նորանց։ Դորանից յետոյ Տրդատի և առհասարակ կառաւարութեան օգնութեամբ Ս. Գրիգորը սկսեց ազատ կերպով քրիստոնէութիւնը Հայաստանի զանազան

կողմերում ուսուցանել, դարձնել Հայերին դէպի այդ ճշմարիտ հաւատը։

Տրդատի ջերմեռանդ քրիստոնէութիւնն ու նորա թագաւորական զօրութիւնը մի կողմից, Ս. Գրիգորի բազմաճիգ աշխատանքը և քրիստոնէական ուսմամբ լցուած ուսումնարանները միւս կողմից՝ օգնական եղան, որ Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը տևողական արմատ գցէ։ Ս. Գրիգորը կործանեց այլև երկրում գտնուող կռատունները և շատացրեց վանքերի, եկեղեցիների և եկեղեցականների թիւը։ Մեր էջմիածնի մայր եկեղեցին հիմնարկուած է նոյն իսկ Ս. Գրիգորի ձեռքով։ Այսպէս իւր քրոնաջան ճգամբ տարածեց Ս. Գրիգորը Հայաստանի մէջ քրիստոնէական ուսման պայծառ լոյսը, որոյ համար էլ անուանուեցաւ «Լուսաւորիչ Հայոց»։

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳԻՒՏԸ

Մենք արդէն գիտենք, որ Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը տարածելու ժամանակ Ս. Գրիգոր Լուսաւորիչը և Տրդատ Թագաւորը բազմայրին ուսումնարանների թիւը իրրև հեշտ միջոց լուսաւորութիւն տարածելու համար։ բայց չնայելով ամեն տեսակ հոգատարութեան թէ Տրդատի ու Լուսաւորչի օրերով և թէ նոցանից մինչև 100 տարի յետոյ, ուսման դործը չկարողացաւ ժողովրդի մէջ աջողակ ընթացք ստանալ։ Ի՞նչ էր սորա պատճառը։—Այն էր, որ Հայերը սաիպուած էին եկեղեցուն էլ, ուսումնարաններուն էլ, Յունաց կամ Ասորոց գրերը և շատ անգամ էլ լեզուն դործածել, որովհետև այն ժամանակ չկային դեռ ևս յատուկ Հայկական գրեր։ Այսպէս կաղ ի կաղ էր յառաջ գնում Հայ դպրութիւնը մինչև հինգերրորդ դարու սկիզբը։

Հինգերորդ դարի սկզբում Հայաստանի Թագաւորն էր Վրամշապուհը, որ անխոնջ ջանքերով հոգում էր ազգի բա-

րիքների համար։ Դորա օրերով ապրում էր և Ս. Մեսրոպ, որ աշխարհական կարգերին հմուտ և զինուորական արհեստին վարժ մի եկեղեցական էր և կատարեալ ուսում էր ստացած Յունաստանում։ Մեսրոպ ծառայում էր Վաղարշապատի թագաւորական դիւանի մէջ, Մի քանի ժամանակից յետոյ նա մրաքումը դրեց հեռանալ թագաւորական պալատի փառահեղութիւնից և սրբակեաց կեանք անցկացնել։ Այդ ժամանակուանից նա սկսեց յաճախ մտնել ժողովրդոյ դրութեան մէջ. նա ճանաչեց ու տեսաւ, որ թէպէտ քրիստոնէական հաւատը տարածուել էր, բայց մի ծանր տգիտութիւն և գրեթէ վայրենութիւն դեռ ևս նստած էր ազգի շատ մասի հոգու վերայ։ Այս բանը մեծ ցաւ եղաւ և ծանր ծանրացաւ երանելի Մեսրոպի սրտին։ Նա մտածեց, որ անշուշտ հարկաւոր էր հիմնաւոր ուսումն տարածել Հայաստանի մէջ. այդպիսի ուսումն անկարելի կլինէր օտար գրերով։ Ուրեմն Մեսրոպի ցանկութիւնը կատարելապէս գլուխ գալու համար՝ անշուշտ հարկաւոր էին բուն հայկական գրեր, բայց դոքա չկային։

Մեսրոպ այդ զգալի պակասութեանը մի ճար գտնելու համար՝ գնաց Ս. Սահակ կաթուղիկոսի մօտ, որ ամբողջ ազգի մէջ սիրելի համբաւ էր ստացել իւր մեծամեծ երախտիքներով, որովհետև անտրտունջ և անխոնջ աշխատում էր ազգի հոգեկան յառաջադիմութեան համար և բոլորովին անձնազոհ էր նորա բարիքին։ Ս. Սահակը Մեսրոպի հետ խորհուրդ արին, որ Վաղարշապատում մէկ ժողով կազմեն, որտեղ թագաւորն ինքն էլ ներկայ լինէր, և մտածեն հայկական գրեր ունենալու վերայ։ Ժողովի մէջ թագաւորը յայտնեց իւր լսածը, թէ Դանիել անունով մէկ ասորի եպիսկոպոսի մօտ հայոց գրեր կան. վճռեցին որ ձեռք բերեն նորանց։ Այդ գրերը ձեռք բերելուց յետոյ տեսան, որ նորա շատ թերի են հայոց լեզուի հարուստ հնչիւնները ձևակերպելու համար։ Ժրաջան Մեսրոպը ցաւերով

այս անյաջողութեան վերայ սկսեց անդադար աղօթել ու կրկին մտածել, որ իրանց մտադրութիւնը լրացնելու հնարքը գտնէ. վերջապէս նորա հոգու աչքին կերպարանուեցան տառեր, որոնց նա իսկոյն գրի առաւ և որոնցով յաջողեցան ունենալ հայկական լիակատար այբ ու բենը։

Շատ մեծ եղաւ ինչպէս Ս. Մեսրոպի,, այնպէս էլ Ս. Սահակի և Վրամշապուհ թագաւորի ուրախութիւնն այս գիւտի վերայ։ Դորանից յետոյ բացուեցան ուսումնարաններ, և հայոց աշխարհի ընդունակ ու յառաջադիմութեան յոյս տուող մանկունքը ժողովվեցան այդ ուսումնարանների մէջ։ Ո՛չ երանելի թագաւորը խնայեց իւր արքունի գանձ ու ազդեցութիւնը և ոչ առաքինի ու սուրբ հայրերը՝ իրանց քրտնաշխատ ջանքը Հայոց աշխարհի լուսաւորութեան համար։ Սահակի ու Մեսրոպի աշակերտները և աշակերտաց աշակերտները զարգացան հոգեւոր և մտաւոր ուսման մէջ։ Դոցանից շատերն ուղարկուեցան կատարելագործուելու Հայաստանի սահմաններից դուրս ևս—Հռովմ, Աթէնք, Բիւզանդիոն, Աղէքսանդրեա, որոնք այն ժամանակները գիտութեան կենտրոններ էին։ Այդ տեղերում հայ ուսանողները զարմանալի ընդունակութիւններ էին ցոյց տալիս գիտութիւնների և լեզուների մէջ, պատիւ և մեծարանք էին գտնում և ժամանակի ուսումնականների մէջ համբաւ էին վաստակում։

Այսպէս Ս. Սահակի ու Մեսրոպի աշակերտներից շատ շատերը երևելի պատմաբաններ ու իմաստասէրներ դուրս եկան և գեղեցկութեամբ հռչակաւոր թարգմանութիւններ արին։ Այն ժամանակուան թարգմանութիւնների պտղը Սուրբ Գիրքն է, որի մէջ մեծագոյն փառքը պատկանում է նոյն իսկ բաղմերախտ հայրերին, այսինքն Սահակին ու Մեսրոպին։

Դորանից յետոյ Ս. Մեսրոպը անդադար պտըտում էր Հայաստանի բոլոր կողմերում և զանազան միջոցներով ամեն

ճիգն գործ էր դնում ուսման լոյսն անխափան ծաւալելու համար։ Մարդասիրական հոգուց դրդուած Ս. Մեսրոպը գտաւ Վրաց և Աղուանից գրերն էլ և ամեն կերպ աշխատեց, որ նոցա մէջ ևս տարածուի լուսաւորութիւնը։

Յիրաւի երջանիկ էր Հայոց աշխարհը հինգերորդ դարում, երբ այնքան մեծամեծ ջանքեր կային նորա բարգաւաճութեան համար և երբ կարող էր պարծենալ այնպիսի ժրաջանութեամբ և իմաստութեամբ անուանի շատ ուսումնականներով։ Ի զուր չէ ասում մեր Կորիւն պատմագրանը այն ժամանակուան համար, թէ՝ «Հայոց ցանկալի և երանելի աշխարհը անպայման սքանչելի էր»։ Ի զուր չէ նոյնպէս, որ հինգերորդ դարը համարվում է Հայոց ուսումնականութեան «ՈՍԿԵԴԱՐԸ»։

ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Գեղեցիկ էր սկզբնական երկիրը, երբ նոր-նոր էր կերպարանուած Աստուծոյ խօսքով. բայց նորա վերայ դեռ ևս չկար մարդ, և ոչ ոք էր որ վայել էր նորա գեղեցկութիւնը։ Յեռ-ռեկով պայծառ արեգակը բարձրանում էր երկինք և սփռում երկրի վերայ լոյս ու ջերմութիւն, գիշերով հեզիկ լուսինն էր բարձրանում և փայլում էին բիւրաւոր աստղեր. երկնքի կապոյտ կամարը ոսկի ու արծաթի ամպերով զարդարուած, բարձր սփռուած էր ինչպէս մի անսահման տաղաւար։ Ընդարձակ ծովը ծածանում ու մռնչում էր, բարձր ալիքը պարզում էին ամպերից վեր իրանց շրշղողուն արծաթեայ գագաթները. ամենայն տեղ հոսում էին ջրարատ կապոյտ գետեր, եռում ու ցայտատիշուր ալիքներով փրփրում էին ջրվէժներ, խոխոջում էին պլատրատող վտակներ, ընթանալով հիւթալի անուշահոտ խոտերի միջով. բարձր արմաւենիք հոգմահարում էին իրանց կատարները. կանաչ ու ծաղկաստիւր դաշտեր բուրում էին անոյշ

հոտերով. սիրուն անասուններ հոտոտում և բերկրում էին. պայծառ նախշուն թռչնակներ ու պսպղուն միջատներ գոհարների պէս փայլելով շրջում էին օդի մէջ. սոխակը երգում էր իւր արծաթահնչիւն երգը,—բայց մարդս տակաւին չկար և ոչ ոք էր, որ վայել էր տիեզերքի փառահեղութիւնը։

Երեգակը լուսինն ու աստղերը փայլելով, բայց բոլորովին անզգայ, ընթանում էին իրանց սահմանած շաւղով, չանանելով ու չզգալով ոչինչ, մինչև անգամ իրանց յատուկ շքեղութիւնը։ Վարդը բուրում—պճնում էր, չմտանելով թէ ինչքան գեղեցիկ էր ինքը. սոխակի երգը ոչ ոքի լսողութիւնը չէր գրաւում։ Անասունները թէև նստում ու լսում էին ամեն բան, բայց չէին հասկանում ոչ բնութեան գեղեցկութիւնը, ոչ այն իմաստուն օրէնքները, որոնց համեմատ նա ստեղծուած էր։ Իւր մարմնի պահանջը լրացնելով էր միայն ուրս խանում Անասունը, նորանը իւր կերակուրն էր միայն. և ուտելով Աստուծոյ հրաշալի արարածները, նա չէր հասկանում թէ ինչքան հրաշքներ կան իւր կերած ամեն մի փոքրիկ բոյսի մէջ։ Նոցանից ոչ մէկը չէր կարող գտնել մի անգամ դլուխ բարձրացնել դէպի երկինք և ասել շնորհակալութեամբ,—«Ինչպէս մեծ ու ողորմած ես Դու, ով Արարիչ. ինչպէս սիրում եմ ես քեզ»։ Ամենայն ստեղծուած ապրում էր բնական օրէնքներին համեմատ և չէր էլ կարող ուրիշ կերպ ապրիլ, քանի որ չունէր իւր յատուկ կամքը, չէր կարողանում մեղանչել, բայց և չէր կարողանում բարութիւն անել, չճանաչելով ոչ չարը, ոչ բարին։

Տեսնելով թէ ինչքան սիրուն էր աշխարհը, Աստուած սիրալիր սրտով կամեցաւ ստեղծել մի այնպիսի էակ, որ իւր անմահ հոգով նման լինէր Ինքեան—Տիեզերքի Արարչին, որ կատարէր իւր օրէնքները ոչ թէ կարիքի պահանջմամբը, ինչպէս միւս արարածները, այլ հասկանալով նոցա իմաստութիւնն

ու բաստութիւնը. որ դիմէր դէպի ճշմարիտը, բարին ու գեղեցիկը իւր յատուկ ցանկութեամբը և մերժէր սուտը, չարը և մեղքը զզուելով դոցանից։

«Ստեղծենք մարդ, ասաց Տէրը, մեր պատկերի ու մեր նմանութեան պէս» և ստեղծեց հողից մի հիանալի գեղեցիկ մարմին. ներշնչեց նորա մէջ Իւր յատուկ Արարչական բերանից անմահ, բանական ու ազատ Հոգի։ Աչքերը բաց արաւ մարդը, հիացած և սքանչացած մանկ արաւ աշխարհին, և նորա հոգին զգալով իւր Աստուածային ծագումը, լցուեցաւ երջանկութեամբ, շնորհակալութեամբ և սիրով դէպի Արարիչը։

Ուրքան էլ բարեոք լինէր երկիրը, բայց տխուր կլինի մարդ միայնակ, մտածեց Տէրը, և ցանկալով աւելացնել մարդու երջանկութիւնը, ստեղծեց նորա համար մի գեղեցիկ ընկերակցուհի։ Ստեղծագործութիւնը վերջացնելուց յետոյ Աստուած ասաց առաջին մարդկանց. «Սիրեցէք մէկ մէկի, աճեցէք, և իշխեցէք երկրին. ամեն ինչ որ կայ դորա վերայ՝ տալիս եմ ձեզ»։

Այն տեղը ուր որ կենում էին առաջին մարդիքը, գտնվում էր փառահեղ երկրում, Հայաստանի մէջ. այն տեղ, որտեղից հոսում են Տիգրիսն ու Եփրատը։ Բայց աւաղ, այն տեղն այժմ տխուր տեսարան է ներկայացնում մեզ։ Երևում են տեղ—տեղ հինօրեայ քաղաքների աւազապատ աւերակները միայն, որպէս զի վկայ լինին այդ երկրի հին մեծափառութեանը։

ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄԻՆԸ

Ա.

Մարդուս մարմինը կազմուած է շատ հեղանիւթ և ամուր մասերից և այս բոլոր, կարելի է ասել, անհամար մասերը

կերպաւորում են մի մեքենայ, որի զուգաչափութիւնը թէպէտ այնքան աչքի տակ չեն դցում մարդիք և ուշադիր չեն լինում նորան, ինչպէս հարկն էր, այնու ամենայնիւ դա է առաւելապէս, որ ցոյց է տալիս մեզ Արարչի կարողութիւնն ու ամենիմաստութիւնը։

Մեր մարմնի հաստատ սիւները ոսկրներն են. սոքա պինդ ու կարծր են և այնպէս ամրապէս կազմուած, որ կարողանան դէպի վեր պահել մարմնի ծանրութիւնը. առանց նորանց մարմինը փափուկ ու տկար կլինէր, ինչպէս լինում է ոսկրներից բաժանած միսը։

Ոսկրները ամուր կապուած են միմեանց հետ յօդերի միջնորդութեամբ. յօդերը պատած են կակուղ ու ձգական աճառներով, այն նպատակով որ չորորուին միմեանց վերայ. այլև ունին պինդ կապեր, որ չլինի թէ մինը միւսի միջից դուրս պրծնի։

Յօդերի գլխուկները (կըղոփոյները) և դոցա ամանները (կողոփները) պատած են ներսից մի անչափ կոկ աճառով, որից դուրս է դալիս մի հիւթ երկուքի մէջ տեղում, որպէս զի հեշտութեամբ կատարուի անդամների շարժութիւնը։

Բոլոր ոսկրներն աճառներով ու կապերով միաւորուած բաղկացնում են մարդկային մարմնի ոսկրակազմը կամ սկելետը։

Ամբողջ ոսկրակազմը բաժանվում է երեք գլխաւոր մասերի, —Գլուխ, Իրան կամ Բուն և Անդամներ։ Գլխի սկաւառակը (գանգը) բաղկացած է զանազան համակարգած մասներից.—Ճակատի գագաթի և ծոծրակի ոսկրներից։ Երեսի վրայ կան քթի, ծնոտների և թշերի ոսկրներ. վերին և ստորին ծնոտների մէջ ամրացած են ատամները, որոնք նոյնպէս ոսկրներ են, միայն թէ իրանց պսակների վերայ պատած մի պինդ պսպղուն նիւթով—արծնապակով (մինէռալ)։

Բուռնը կամ Իրանը բաղկացած է ողնաշարից, կուրծքից ու տաշտից։ Ողնաշարը կամ ողնասիւնը բաղկացած է 24 օղաձև ոսկրներից։ Նորա վերին ծայրումն են եօթը պարանոցական ողներ, սոցանից ցած թիկունքի վերայ տասներկու ողներ և վերջապէս հինգ հատ մէջքի (գօտկատեղի) վերայ։ Թիկունքի ողնական ոսկրների վերայ երկու կողմերից շատ մանր կապերով հաստատված են կողերը, որոնցից եօթն զոյգ ազնվաձև կորանալով միաւորւում են կուրծքի սափակ ու նեղ ոսկրի հետ և ձևացնում են կուրծքի փոսը։ Միւս հինգ զոյգ կողերը չեն մօտենում կուրծքի ոսկրին և սվում են թերակողէք։ Այնտեղ, ուր որ վերջանում է ողնաշարը, երկու կողմից գրանվում են Անանուն ասված ոսկրները, սրա կապակցած են միւսների հետ և կազմում են տաշտը, այս պատճառով էլ ասվում են տաշտի ոսկրներ։

Անդամները, այսինքն ձեռքերն ու ոտները, որ շատ նման են միմեանց, նոյնպէս բաղկանում են զանազան առանձին մասերից։ Ձեռքը երեք մասն ունի,—վերին մասն (ծղեկ), որ է ուսից մինչև արմունկը։ բազուկ, որ է արմունկից մինչև դաստակը, և դաստակ կամ ձեռքի թաթը։ Ոտները բաղկանում են,—աղդրներից, որ են տաշտից մինչև ծնկները, սրունգներից, որ են ծնկածալից մինչև ոտնաթաթերը, և ոտնաթաթեր։

Այս բոլոր ոսկրները առաջուց կակուղ են լինում և աճառային, բայց հետզհետէ կարծրանում ու ամրանում են։ Երեխաների գանգը կակուղ է լինում և ունենում է բաց տեղեր՝ վերայից մորթով ծածկուած, որոնք փակվում են յետոյ։ Ոսկրները կատարելապէս ամրանում են միայն 15, և ոմանցը 20 տարեկան հասակում։ Մերութեան ժամանակ նոքա աւելի կոշտ են լինում և բեկանուտ (հեշտ կտրուղ)։

Բ.

Մարդուս մարմնի ամբողջ մանրութիւնը բաղկացած է ջոկ-

ջոկ մասերից, որոնք մկնաձև բոլորակուած՝ հատ կամ բարակ կապերով ամրանում են ոսկրների վերայ, սրա մկնակները կոչ մուսկուլներն են։ Ամենայն մկնակ բաղկանում է առանձին բարակ թելերից և պատած է նուրբ մաշկով։ Մկնակները ջղերի ազդեցութեամբ շարժում են ամբողջ մարմինը կամ սրա մասերը։ Այն ոյժը որով մկնակները պարզվում ու գուժ են գալիս՝ շատ մեծ է և ասվում է գրգռախառնութիւն։ Այս գրգռութիւնը մասամբ ներգործում է մեր կամքով. զորօրինակ, երբ որ քայլում ենք, վերցնում ենք կամ բռնում մի բան, և մասամբ—ակամայ, զորօրինակ սրտի զարկռութեան, շնչառութեան մէջ։ Մի քանի մկնակներ այնպիսի խմաստութեամբ են կարգադրած Արարչից որ երբէք չեն յոգնում և չեն դադարում գործելուց։ (Որո՞նք)։

Գ.

Գլխի սկաւառակի կամ գանգի մէջ պարունակվում է ուղեղը, մարմնի ամենակարևոր և ամենանուրբ մասը։ Թէ որպիսի և իցէ մի վնաս հասնի նորան, իսկոյն մահ կյառաջանայ։

Ուղեղը շաղուանակաբար երկարաձգվում է ամբողջ ողնաշարի միջով, անցնելով ողների կազմած զանաձև խոռոչակից, և անուանվում է ողնակաղուղեղ։ Որքա՜ն մեծ է Աստուծոյ խմաստութիւնը, որ ուղեղը տեղաւորել է այնպիսի ամուր ոսկրակապի մէջ, ուր որ նա պահպանվում է իբրև անթափանցելի Վահանի տակ։

Գլխի ողնաշարի ուղեղից դուրս են գալիս, շատ ապիտակ թելեր ու կապեր զանազան հաստատութեամբ, որոնք տարածվում են մարդուս մարմնի բոլոր բաժիններում։ Նորանց ասում են ջիղեր և նոքա հաղորդակցութիւն ունին իրար հետ։ Ջիղերը մեր մարմնի անչափ կարևոր մասերն են, որովհետև նոցա զգայականութեամբը միայն մենք կարող ենք զգացողութիւն ունենալ, այս պատճառով մեր մարմնի մենակ այն մասերը

կարող են զգալ։ որոնց միջից անց են կենում ջղերը. մազերը, եղունգները բոլորովին անզգայ են։

Բոլոր ջղերի ծագման տեղը ուղեղն է և այս է պատճառը։ որ եթէ ճնշեն ուղեղը՝ մարդ կկորցնի իւր բոլոր զգացողութիւնը։ Բայց ջղերը ոչ միայն զգացութեան, այլ և շարժողութեան գործարաններ են։ Եթէ մի ջիղ կտրեն կամ պինդ կապեն վերայից՝ այն ժամանակ իւր շարժականութիւնը կկորցնի կամ կդօսանայ և այն անդամը, որին հասնում է ճնասուած կամ կապած ջիղը։ Կարճ ասել,—ամենաղօրեղ մկնակային կազմուածն էլ պէտք է դադարէր գործելուց. եթէ ապրեցութիւն չլինէր ջղերի կողմից։

Դ.

Մարդս տպաւորութիւններ է ստանում և պատկերացնում իրան բոլոր դրսի բաները հինգ զգայարաններով, որոնք են շօշափողութեան, ճաշակի, լսողութեան, տեսութեան, և հոտառութեան զգայարանները։

Մենք կարող ենք շօշափել մեր մարմնի բոլոր մասերով, մանաւանդ թէ մասներիս ծայրերով, որովհետև նոքա պատած են շատ բարակ ու փափուկ մորթով և նոցա մէջ վերջաւորվում են բազմաթիւ զգայուն ջիղեր։—Շօշափողութեամբ մենք որոշում ենք առարկաների կակուղ կամ կօշտ, պաղ կամ տաք խորթուբորտ կամ հարթ լինելը։ Սովորութիւնից կամ պարապմունքից մարդու մարմնի որ և իցէ մասը կարող է անզգայանալ։ Դարբինները կարողանում են երկար ժամանակ պահել ձեռքի մէջ տաք երկաթ, ամբողջ օրը զարկում են ծանր կռաններով. գիւղացիք գործում են միշտ կացնով, բահով, արօրով, բայց մեծ ցաւ չեն զգում որովհետև նոցա գործածութիւնից ձեռքի ափը ծածկվում է մի հաստ կաշուով։ Աւելի մեծ զգացողութիւն ունի մարդս աչքի մէջ, այն պատճառով

էլ մի ամենափոքր շիւղ անգամ աչքն ընկնելիս սաստիկ ցաւ է պատճառում։

Ճաշակի գործարանն է լեզուն։ Եթէ շօշափենք լեզուի երեսը մատով՝ կտեսնենք որ նա ծածկուած է բազմաթիւ փոքրիկ պտուկներով, որոնք շատ դրդռական են. այս պտուկներովն է ահա ճաշակ զգում մարդս, որի համար էլ նորանց անուանում են ճաշակի ջիղեր։ Հիւանդ ժամանակը ամեն բան դառն է թւում մեզ, զզուանք ենք զգում ամենալաւ կերակուրներից, սորա պատճառն այն է որ մեր բերանի մէջ կերակրի հետ խառնվում է տպականուած ու վատ հիւթ, որի համը ի հարկէ դառն է լինում։ Ճաշակը օգնում է մեզ որոշել լաւ ու թարմ կերակուրը փչացած անպիտան կերակրից, զգուշացնում է մեզ վնասակար ուտելիքների գործադրութիւնից։

Ճաշակի հաւատարիմ ընկերն է Հոտառութեան զգայարանը։ Շատ իմաստուն կարգադրութիւն է, որ քիթը—հոտառութեանդործարանը գտնվում է բերանի վերայ. այսպիսով մարդս կարող է միայն հոտառութեամբ էլ հեռու կենալ վնասակար բաներից մինչև նոցա բերան հասնելը. պատճառ, ըստ մեծի մասին այն բանը որ մնասակար է մարդու կեանքին նորա ստամոքսի մէջ՝ վատ հոտ էլ ունի։ Բոլոր զգացողութիւններից հոտառութիւնն է ամենասաստիկ տպաւորութիւններ անում. օրինակի համար՝ մի քանի տեսակ հոտաւէտ նիւթերից յառաջանում է սրտի նուազումն, մի քանիսները կարող են զուարթացնել թուլացած սիրտը։ Ով որ քնած ժամանակը ներս շնչի մի քանի տեսակ ծաղիկների չափազանց սաստիկ հոտը, նորան կարող է կաթուած պատահել և մինչև անգամ մահ։ Հոտոտելով զգում ենք, որ սենեկի մէջ վատ շոգիներ կան, երբ այդ տեղ կիսավառ ածուխներ են լինում, կամ երբ վառարանների ծխահանը փակած են լինում փայտը վառվել պրծնելուց առաջ։ Ով որ քուն մտնի մի այդպիսի շոգելից

սենեկում, նորան այնպիսի թմրութիւն կպատէ, որ կտանէ դէպի մահ։ Հոտը յառաջանում է այն ժամանակ, երբ հոտաւէտ առարկաների ամենամանր մասնիկները բաժանվում և օդի հետ միասին մեր քթին են հասնում։

Ամենքիս յայտնի է, որ Լսողութեան զգայարանն ականջներն են։ Դրսից երևացող ականջը, այսինքն այն լայն ու ոլորաձոյ աճառը, մեր ականջի պատիկ մասն է։ Մի երկար գլանաձև խողովակ դրսի ականջից տանում է դէպի ներսինը. դա գնալով գնալով աւելի նեղանում է։ Այդ խողովակը անուանվում է լսողական անցք։ Դորա մէջը գտնվում է մի պեղլին կպչուն հիւթ, որին ասում են ականջի կեղտ, դա շատ դառն է և գորանով կթունաւորուի այն պստիկ սողունը, որ կուզենայ ներս մտնել ականջի մէջ։ Այդ կեղտը պաշտպանում է ականջն օդի երեսից էլ, որը սաստկի զրգռելով լսողական անցքը կարող էր ականջացաւ պատճառել։

Տեսութեան զգայարանը աչքերն են։ Դորա գտնվում են երեսի վերին մասում, պաշտպանուած ամուր ոսկրակապ փոսերի մէջ, որոնք անուանում են աչքի փոսեր կամ ակնակապիճներ։ Իմաստնապէս է տնօրինել Արարիչը, քանի՞ որ աչքերն այդպիսի ամուր փոսերի մէջ գնելով, ուր որ նորա բաւականին ապահով կարող են լինել հարուածներից։ Աչքերը պահպանվում են կոպերով ևս։ Իւրաքանչիւր աչքը փակվում է վերին և ստորին կոպերով։ Սոցա եղերքում մօտ-մօտ բուսած են փոքրիկ մազեր—թերթերուկները։ Սոցա օգուտն այն է, որ թոյլ չեն տալիս լոյսի շառաւիղների բազմութեամբը միասին աչքերի հասնելու, այլ պաշտպանում են նորանց թոյից։ Աչքերից վերև կիսակամարաձև ձգվում են ունքերը։ Դոքա չնորհք են տալիս մարդուս դէմքին, այլ և յետ են պահում ճակատի կծու քրտինքը, որ նա չթափուի աչքերի մէջ և վնասէ նորանց։—Աչքն ինքը, կամ ինչպէս ասում ենք—աչքի խնձորը, գնդաձև է։ Երեք հատ իրար երեսից դասաւորած պատեաններ ունի աչքը, որոնցից ամեն մինը առանձին նշանակութիւն ունի։ Դրսից մենք նկատում ենք աչքի մէջ երեք գլխաւոր մասեր՝ սպիտակուց, ծիածան և բիբ։ Զանազան աշխարհների մարդկանց աչքի ծիածանը ուս նենում է այլ և այլ գոյն. գլխաւորապէս սև, բաց-կապոյտ և արմատապոյն։

ՄԱՐԴՈՒ ՍՆՆԴԱՌՈՒԹԻՒՆԸ

Քանի՞ ձեռք հագուստ է փոխում մարդս իւր կեանքի մէջ, այն ինչ եօթանասուն-ութսուն տարեկան մի ծերունի կրում է իւր վերայ մի և նոյն մարմինը, և սա չի մաշվում։ Քանի՞-քանի հազար վերստ ճանապարհ է անցած լինում մարդս մինչ իւր կեանքի վերջը. քանի՞ զոյգ կօշիկներ պատռուած, այն ինչ նորա ոտքի կաշին բոլորովին չի մաշվում, թէև դա շատ ու շատ բարակ է լինում կօշկի կաշուց։ Ձեռնոցները մի քիչ հագնում ես թէ չէ՝ պատռվում են, իսկ մեր ձեռքի բարակ կաշին հագած ունինք մինչև մեր մահը, բայց դա չի մաշվում։ Եթէ մարդս շինուած լինէր ոչ փայտից, այլ երկաթից անգամ, այն ժամանակն էլ այդքան երկար միջոցում անդադար շարժուելուց նա պէտք է քլքուէր, մաշուէր, և նորա բոլոր յօդուածները խախտուէին և ջլատուէին, բայց ոչ. մարդուս փափուկ մարմինը ապրում ու ապրում է, ծերանում է, կնճռոտվում է, սակայն մնում է անխախտ (չի աւերվում)։

Կենդանի և անկենդան առարկաների մէջ եղած այսպիսի տարբերութիւնը իմանալու համար, հարկաւոր է առաջ-առաջ իմանալ, թէ ինչու կեանք չունեցող առարկաները մաշվում են գործադրութենից, փոքրանում է նոցա ծաւալն ու կշիռը և վերջապէս նոքա մասնատվում են։ Քսեցէք խարտոցը փայտին կամ երկաթին—և դուք կնկատէք, որ նոցանից քերվում—թափվում են փոքրիկ մասնիկներ։ Մասնիկը պակ է դալիս մնա-

նիկի յետևից, փոսը աւելի ու աւելի մեծանում է, և այսպէս եթէ մենք շարունակենք խարտոցով քսել՝ ամբողջ առարկան կարող ենք մանրել իբրև փոշի: Մի և նոյնն է պատահում և ամեն մի գործածուող առարկայի հետ, միայն թէ ոչ այսպէս արագութեամբ և ոչ այնքան նկատելի կերպով: Անդադար տրորուելուցն ամեն մի բան մաշվում է: Ինչքան որ կակուղ լինի բանը և տրորումը սաստիկ, այնքան շուտով աւերվում (կործանվում) է նա: Մինչև անգամ արծաթի գդալը, երբ նորանով շատ ուտում են՝ բարականում է, եզերքը քսվում են և վերջապէս էլ պէտք չի գալիս գործադրելու համար: Բայց ի՞նչ կլինէր, եթէ որ տրորմունքից մաշուած ամեն մի մասնիկին փոխարիներ նորը: Այն ժամանակ էլ կմաշուէր իրը:

Մեր մարմնից նորա անդադար շարժողութիւնների միջոցին բաժանվում են (անջատվում են) հազիւ նկատելի կամ բոլորովին անկատելի մասնիկներ և առաւել շատ, քան թէ փայտից ու երկաթից, որովհետև մարմինը կակուղ է փայտից էլ երկաթից էլ: Բայց բանն այն է, որ մեր մարմնի մէջ անպիտանացած ու անջատուած մասնիկների տեղը բռնում են նորերը և այսպիսով նա միշտ ու միշտ վերանորոգվում է: Այս բանն է, որ չի կատարվում կեանքից զուրկ մարմինների մէջ: Իրերը չեն սնանում, ուստի և մաշուելուց յետոյ չեն նորոգվում, բայց մեր մարմինը անդադար նորոգվում է այն կերակրոմն ու այն խմելիքոմն, որ ներս է ընդունում մարդս բերանով:

Կերակուրը բերանի մէջ ծամուիլ—պրծնելուց յետոյ, խառնուելով լորձունքի հետ կուլ է տրվում և կերակրանցքի միջով ընկնում է ստամոքսը: Այստեղ առանձին հիւթերի օգնութեամբ, (որ թորում են ստամոքսի կողքերից, ենթաստամոքսեայ գեղձից և լեարդից), ուտելիքը փոխարկվում է կերակրախիւսի: Այս խիւսից սննդարարութիւնը պիտանացու հեղուկ մասերն առաջ-առաջ դառնում են կաթն և յետոյ ներս

ծծուելով առանձին բարակիկ խողովակների մէջ դառնում են արիւն, որ հոսում է մեր երակների միջով. իսկ ամուր և անպիտան մասերը դուրս են թափվում մարմնից:

Արիւնն այն կարմիր հեղանիւթն է, որ ներկում է մեր շրթունքը, լեզուն, թշերն և մեր բոլոր մարմնին տալիս է կարմրաւուն գոյն: Ով որ մատը կտրած լինի, նա լաւ կիմանայ, թէ ինչ ասելէ արիւն: Նա հոսում է մեր ամբողջ մարմնի մէջ անթիւ կակուղ խողովակների միջով, որոնք անուանվում են երակներ: Եթէ մեր մարմնի նայենք, մենք կարող ենք նկատել մորթի տակ թէ ինչպիսի ճղներով են տարածուած մեր մարմնի մէջ երակները, բայց մենք կտեսնենք միմիայն հաստ ճղները, իսկ փոքրիկներին մորթի երեսից անկարելի է նկատել: Բայց հաւաստիանալու համար, թէ արդարև անթիւ են այն երակները, որոնց միջով հոսում է մեր արիւնը՝ մի հեշտ հնար կայ—ծակիր կամ կտրիր որ տեղի մորթը կամիս՝ և իսկոյն արիւն դուրս կգայ: Մսի կարմիր գոյնը յառաջանում է նորանից, որ նորա մէջ անթիւ արիւնալից երակներ կան: Ահա այս իսկ արիւնն է, որ սնուցանում է, այսինքն վերանորոգում է բոլոր մարմինը, ոսկրներն էլ, մկանունքն, մորթն էլ. նոցանից են բուսնում և՛ մազերը, և՛ եղունգներն, որոնք միշտ ու միշտ երկայնանում են: Բայց ինչպէս է որ մի և նոյն արիւնից այդպիսի տարբեր իրեր են գոյանում,—այս բանը ձեզ անհնար է բացատրել: Աստուած այնքան խորիմաստ կերպով է կարգադրել մարդուն, որ մինչև անգամ շատ ուսում առած ժամանակն էլ չի՛ կարելի հասկանալ մարդուս մէջը կատարուող բոլոր բաները: Բայց պարզայայտ է, որ արիւնը վերանորոգելով մարմնի այս կամ այն մասը, և անպիտանացածը փոխարինելով նոր մասնիկներով՝ լաւ գործաւորի պէս առնում դուրս է գցում անպիտանը, կամ ստամոքսից, կամ արտաշնչութեամբ, կամ քրտինքի միջոցով, կամ կերպարանագործելով նորոգում է նորան:

Փոքրիկ արիւնատար երակները այդպէս փոքրիկ չեն մնում ամեն տեղ, այլ միմեանց հետ միաւորուելով աւելի և աւելի հաստանում են և մեծ խողովակների պէս հասնում են սրտին և արիւնը թափում այնտեղ:

Սիրտը հենց նորա համար է զարկում (բաբախում), որ սաստիկ արեանը չարժի: Նա մի մսալի պարկ է (մկնակ), մէջը դատարկ, և բաղկացած է միջնապատով բաժանված երկու կիսերից, այսինքն աջ ու ձախ խոռոչներից: Սիրտը սեղմուելիս (դուռ գալիս) արիւնը դուրս է մղվում նորանից և թափում երակների մէջ, իսկ պարզվելիս (ընդլայնուելիս) ներս է հեղվում կրկին սրտի մէջ: Այն երակները, որոնց միջով արիւնը հոսում է դէպի սիրտը, ասվում են լոկ երակներ (վենաներ). իսկ այն երակները, որոնք արիւնը սրտից դուրս առած տարածում են ամբողջ մարմնի մէջ, անուանում են զարկերակներ (արտերիաներ):

Երակների միջի արիւնը լինում է մոյդ-կարմիր և անպիտան անդարարութեան համար: Երակներից նա երկու մեծ խողովակներով թափվում է սրտի աջակողմեան խոռոչը. իսկ այստեղից սիրտը դուռ գալով դուրս է մղում դէպի թոքերը: Թոքերը բռնած ունին ամբողջ կրծափոսը և մարդս օդ է ներաշնչում սոցա մէջ շնչափողի միջնորդութեամբ: Շնչափողը թոքերին հասնելիս բաժանվում է երկու ճղների. իսկ սոքա նոյնպէս բաժանվում են անթիւ մանր ճղնիկների, որոնք իրանց ծայրերումն ունին ամենապստիկ փամփուշտներ (փուչիկներ): Ահա այս փամփուշտների մէջն են գալիս սրտից—երակային արիւնը, իսկ շնչափողից,—օդը: Արիւնը օդին դիպչելիս բնալուծաբար (քիմիաբար) միաւորվում է թթուածնի հետ. մոյդ-կարմիր գոյնը դառնում է պայծառ—կարմիր (ալ) և առաջ որ անպիտան էր, այժմ պիտանացու է դառնում: Ահա ինչու համար են մարդիկ շնչում անդադար. հենց որ մարդս

դադարեց շնչելուց՝ արիւնն էլ չի միաւորուիլ քիմիաբար օդի թթուածնի հետ, մարմինը չի կարող սնունդ առնուլ և մարդս կմեռնի: Արեան անպէտք մասնիկները մենք արտաշնչում ենք թոքերի միջոցով, իսկ սնունդարարութեան համար պէտքական արիւնը նորանից դառնում է սիրտը, միայն թէ ոչ աջակողմի, այլ ձախակողմի խոռոչը: Սրտոր սիրտն ընդունում է զարկերակային արիւնը՝ ընդլայնվում է և ապա դուրս է քշում նորան առաջ-առաջ մէկ մեծ զարկերակի միջով, իսկ յետոյ անթիւ առաւել և առաւել բարակների միջով, որոնք ծառի ճղների պէս զատվում—հեռանում են իրարից և տարածվում մեր բոլոր մարմնի մէջ: Այդ ժամանակ արիւնը սկսում է արդէն վերանորոգել մեր մարմնի մասնիկները:

Այսպիսի կերպով կատարվում է մեր մէջ արեան շրջանառութիւնն և արիւնը անդադար պտտելով կամ դէպի սիրտը, կամ սրտից դէպի թոքերը, կամ թոքերից կրկին դէպի սիրտը, և կամ սրտից նորէն բոլոր մարմնի մէջ՝ անդադար անցուցանում է, այսինքն վերանորոգում է մեր մարմինը: Ահա ինչու չէ մաշվում մեր մարմինը:

Անդադար սնուցանելով մարմինը՝ արիւնն ինքն էլ է սպառվում: պէտք է լինում վերջապէս նորան էլ նորոգել, նիւթ տալ: Այս պարտականութիւնը կատարում է ստամոքս: Նա, ինչպէս մեզ արդէն յայտնի է, բոլոր մեր կերած ու խմածից նիւթ է պատրաստում արիւնի համար, առանց այս բանի արիւնը շատ շուտով կսպառուէր, մարմնի համար սնուցիչ ու վերանորոգիչ բան չէր մնալ, նա ուժահատ կլինէր, կոկորանար, իսկ յետոյ վերջապէս կմեռնէր.—ահա թէ ինչու ուտելիքն ու խմելիքն այնքան կարևոր են մեզ համար. ահա ինչու ուտելիք չեղած ժամանակ մարմինը նիհարանում է, նորա ոյժերը թուլանում են, և եթէ սնունդը պրծած է խապառ՝ նա մեռնում է:

Սատանքը, սիրտը և թոքերը գործում են մի և նոյն գործը։ Դոքա երեքն էլ աշխատում են, որ կերակրից ու խմելիքից արիւն պատրաստեն, պետանի շնչեն նորան սննդարարութեան համար օդի հետ հաղորդակցելով և ցրուեն ամբողջ մարմնի մէջ։ Արիւնն ինչպէս մի բարի գործաւոր, նորոգում է ամենը, ինչ որ հարկաւոր է, և դուրս է տանում անպէտք եղածները։

Այն գործը, որի կատարութիւնովը վերանորոգվում է միշտ մեր մարմինը ասվում է սնունդ։ Սա կատարվում է մարդուս մէջ երեք զանազան գործողութիւնքով,— մարսողութեամբ, արեն աշրջութեամբ, և շնչառութեամբ։ Եթէ սոցանից որ և իցէ մէկը դադարի, իսկոյն կդադարեն և միւսերը միմեանց յետևից. ապա կկարձուի և նոյն իսկ կեանքը։ Այս գործողութիւններից իւրաքանչիւրը կատարվում է մի քանի գործարաններով, որոնցից շատերի անունը մենք ասացինք. ամեն մի գործարան իւր գործն է անում, իսկ ամենքը միասին կատարում են միայն մի գործ—պահպանում են մարդուս կեանքը։ Մենք ծանօթացանք միմիայն ամենախոշոր գործերին որ կատարվում են մեր մէջ, բայց դեռ ևս չենք ծանօթ հազարաւոր մանր գործերի, որոնցից ամեն մինն անշուշտ կարևոր է մեր կեանքի համար։ Ուսանինք միայն, և շատ բան կսովորենք։ բայց ամենայն բան չգիտեն ամենագիտուն մարդիկն էլ։ Շատ իմաստուն և հրաշալի կերպով է շինել Աստուած մարդուն, այնքան հրաշալի, որ մինչև հիմայ ինչքան էլ շատ ուսանում են մարդիկ, էլի դեռ չեն կարողանում կատարելապէս հասկանալ այդ շինուածքի բոլոր գաղտնիքը։

Դաս. Ընթերց.

ՀՈԳՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մինչև այժմ քննեցինք մարդու մարմինը և տեսանք նորա հրաշալի ճարտարապետական կազմուածը, բայց մարմինը առանց հոգու մեռած է, նորան կենդանութիւն տուողը հոգին է։ Հոգին չենք կարող շօշափել մեր որ և իցէ արտաքին զգայարանով. նորան ոչ կարելի է տեսնել, ոչ հոտոտել, ոչ լսել, ոչ ճաշակել և ոչ շօշափել որովհետև հոգին անմարմին է։ Բայց թէև մենք չենք կարողանում ըմբռնել նորան մեր ոչ մի արտաքին զգայարանով, սակայն նա է, որ մեր մէջ և տեսնում է, և լսում, և շօշափում, վերջապէս նա է մեր մարմնի շարժարանը։

Աստուած պարգևել է անմարմին հոգուն շատ կարողութիւններ։

„Հոգին կարող է զգացել այն, ինչ որ անգրաստանում է աչքերի մէջ հնչվում է ականջների մէջ դիպչում է մարմնին Առանց հոգու մարմինը կարող է ունենալ այդ զգացողութիւնների համար կարևոր գործարանները, բայց սինչ չէ կարող զգալ։ Այդ բանը հոգու գործն է։ Ուրեմն հոգին ունի զգացմանն կամ զգայարանի ընդունակութիւն կամ կարողութիւն։

Եթէ մենք տեսնենք մի որ և է առարկայ, նորան մէկ։ տեսնելիս կըմտարերենք, որ արդէն միանգամ տեսել ենք նորան Մինչև անգամ եթէ չտեսնենք էլ միւս անգամ էլի կարող ենք միտք բերել նորան, եթէ մենք միտներս գցի, կամ թէ կուզ ոչ ոք էլ չյիշե նորան։ Ուրեմն, հոգին ոչ թէ միայն կարող է զգացել որ և իցէ առարկայ, այլ, և մտաբերել իւր զգացողութիւնը։ Այս ընդունակութիւնն անվանվում է յիշողութիւն կամ մտաբերութիւն։

Եթէ մենք տեսած լինինք մէկ առարկայ, կարող ենք այնպէս ներկայացնել մեզ ծանօթ մարդկանց, որ տեսել թէ նոքա մեր առաջը կանգնած լինին, թէ և նոքա հեռու լի-

նէին մեզանից։ Հոգու այսպիսի կարողութիւնն ասվում է ներկայացման կամ ուշաբերական ընդունակութիւն։

Տեսնելով մի քանի առարկաներ, մենք կարող ենք նոցանից մի նոր այնպիսի առարկայ ստեղծել մեր մտքում, որ իրօք չլինի։ Օրինակի համար մէկ տեղ տեսած լինելով մի առուն, միւս տեղ—մի դեռ, ուրիշ տեղ—մի ծառ—մի ճանապարհ, մի սար—մի ջրաղաց, կարելի է այս բոլոր առարկաներից գոյացնել մի այնպիսի տեսարանացոյց պատկեր (լանդշաֆտ), որպիսին տեսած չլինինք, կամ որպիսին գուցէ չկայ անդամ։ Այս կարողութիւնը, որով մեր մտաբերած և ներկայացրած զգացութիւններից յօրինում ենք որպիսի և իցէ պատկերներ թղթի վերա, կամ միայն մեր գլխում—անուանվում է երևակայական ընդունակութիւն, կամ միայն երևակայութիւն։ Ապա ուրեմն, մեր հոգին ընդունակ է զգացել, մտաբերել իւր զգացութիւնները, ներկայացնել իրան և կազմել նոցանից իւր երևակայութեան մէջ նորանոր—պատկերներ։

Երբ որ մենք քնած ժամանակ երազներ ենք տեսնում, այն ժամանակ մեր հոգու մէջ ամենից շատ գործում է երևակայութիւնը։ Արթուն ժամանակը մեր տեսած ու լսածից երևակայութիւնները այնպիսի պատկերներ է ստեղծում, որպիսիքն ամենևին չենք տեսած և որոնք անում են մեզ վերայ երբեմն տխուր, երբեմն հաճոյական տպաւորութիւն։ Սեռականները կամ, ինչպէս ասում են, անուրջքը (երազական ցնորքները) մեր երևակայութեան պտուղներն են։ Ոչ միայն քնած, այլ և արթուն ժամանակներս շատ անդամ յափշտակուած ենք լինում երևակայութեամբ։ Նայեցէք թէ ինչպէս է վազում փոքրիկ տղան, հեծած իւր մահակի վերայ. նա երևակայում է, թէ ձիու վերայ է նստած։ Մանուկները շատ անդամ երևակայում են թէ մեծամեծ հերոսներ են, քաջ տղամարդիկ են որովհետև նոքա շատ լսած են լինում այդպիսիների մասին

Մի քանի առարկաներ տեսնելիս կամ թէ ներկայացնելով նորանց մեջ՝ համեմատում ենք նորանց մէկ մէկի հետ.—գտնում ենք նոցա միջի նմանութիւններն ու զանազանութիւնները և անում մեր եզրակացութիւնը։ Օրինակի համար, տեսնելով երկու խնձոր մենք կարող ենք եզրակացնել, թէ նոցանից որն էր մեծ կամ փոքր, կարմիր կամ դեղին, լաւ կամ վատ. մենք նայում ենք, օրինակ, երկու բոյսի վերայ, համեմատում ենք նորանց և եզրակացնում, որ թէ և այդ երկու բոյսերն էլ ծաղիկ են, բայց նոցանից մինը վարդ է, իսկ միւսը մանուշակ. մենք տեսնում ենք երկու անասուն և համեմատելով նորանց եզրակացնում ենք, որ նոցանից մէկը թռչուն է, իսկ միւսը ձի, որ ձին թևեր չունի, որ թռչունը երկու ոտ ունի և այլն։

Համեմատել որպիսի և իցէ առարկաներ իրար հետ, գտնել նոցա նմանութիւններն ու տարբերութիւնները և անել իւր եզրակացութիւնը,—կնշանակէ դատել, իսկ հոգու այդ կարողութիւնը—դատողութիւն։

Մենք ոչ թէ միայն զգում ենք ցուրտ, տաք, ցաւ։ ճաշակ, հոտ այլ և զգում ենք, որ այդ տպաւորութիւններից մի քանիսը հաճոյական, իսկ մի քանիսը անհաճելի են։ Մենք մեր հոգու մէջ զգում ենք ցակութիւն հեռու կենալ անհաճոյ բաներից և ստանալ հաճոյականը, այդպէս էլ շատ ուրիշ տեսակ ներքին զգացումներ վիշտ, ուրախութիւն, բարկութիւն, շնորհակալութիւն, յոյս, յուսահատութիւն, բարեացակամութիւն և այլն։—Հոգին ունի հինգ արտաքին և շատ ներքին զգացումներ։

Մենք արդէն գիտենք, որ մարմնի շարժողութիւններին հոգին է կառավարում և որ մարմինն իւր բոլոր շարժական գործարաններովը մնում է անշարժ առանց հոգու մասնակցու-

թեանը։ Հոգու այն ընդունակութիւնը, որով նա կառավարում է մարմնի շարժողութիւնները, ասվում է կամք։

Այժմ յիշենք հոգու այն ընդունակութիւնները կամ կարողութիւնները, որ սովորեցինք մենք։

1, Հինգ արտաքին զգայումներ. 2, Յիշողութիւն. 3, Ներկայացման կամ ուշաբերական ընդունակութիւն. 4, Երևակայութիւն. 5, Դատողութիւն. 6 Մի քանի ներքին հոգեկան զգայումներ և 7, Կամք։

ՄԱՐԳԱՐԷ

Սկսեալ այն օրից երբ Հայրն երկնքում
Ինձ տուեց շնորհ մարգարէական,
Ընթեռնում եմ ես մարդերի աչքում
Նոցա շար հոգին ամբարշտութեան։
Ես այնուհետև սկսայ քարոզել
Սուրբ ուսմունք սիրոյ և ճշմարտութեան,
Ընկերքս բոլոր ինձ քարկոծ առնել
Վեկայան, իբրև կատաղած դազան։
Յանեցի մոխիր ես գլխիս վերայ,
Քաղաքներից դուրս փախայ չքաւոր,
Անապատի մէջ ապրում եմ ահա
Առտծոյ սեղանից, իբրև թռչուն։
Այն տեղ խորհրդով տեսչութեան վերին
Հնազանդ է ինձ հոգեղէն ստեղծուած.
Ունկնդիր են ինձ աստեղք երկնային,
Շողշողուն փայլով ուրախագգեստուած։
Բայց երբ դէպ քաղաք այն աղմկային
Լինում է ուղղել իմ շտապ քայլեր,
Այն տեղ ալևորք ժպտմամբ անձնասէր

Ասում են այսպէս երեխաներին՝
Նայեցէք ահա, օրինակ դա ձեզ,
Իւր հպարտութեամբ անհաւան էր մեզ,
Մեզ հաւատացնել տխմարը կամէր,
Թէ նորա շրթամբք Աստուած խօսում էր։
Նայեցէք, տղայք, այդ մարդու վերայ
Խոժոռ ու նիհար գունատ տեսութեամբ.
Տեսէք ինչպէս մերկ և աղքատ է դա։
Դորանից փախչում են արհամարհութեամբ։

ԻՆՉՈՔՎ Է ՆՄԱՆ ՄԱՐԴՍ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ

Մի քանի անասունների և մարդու մէջ մենք շատ նմանութիւններ ենք գտնում։

1, Մարդս ծնում է ուրիշ մարդկանցից, անասունը ծնում է ուրիշ անասուններից։ 2, Մարդս երեխայութեան ժամանակ սնանում է մօր կաթով, բոլոր կաթնասուն անասունները—նոյնպէս։ 3, Մարդս աճում ու մեծանում է. անասունը նոյնպէս մեծանում է։ 4, Մարդուն, ինչպէս ամէն մի անասնի էլ, կեանքի համար կարևոր են՝ կերակուր, ըմպելիք և օդ։ 5, Մարդս ունի հինգ արտաքին զգայարաններ. անասունների մեծմասն էլ տեսնում են, լսում են, շօշափում են և զգում են համ ու հոտ։ 6, Մարդս ունի յիշողութեան ընդունակութիւն. մեղուն էլ գտնում է իւր փեթակի ճանապարհը և ճանաչում է նորան ուրիշ շատ փեթակների մէջ։ 7, Մարդս կարող է երևակայել, անասունները—նոյնպէս։ Մենք գիտենք որ երազներն ու անուրջը յառաջանում են երևակայութենից, կասկածկայ, որ անասուններն էլ երազներ են տեսնում, թէև չեն կարողանում պատմել տեսածը. շունը երբեմն քնած տեղը ոռնում ու կնճկնճում է. ուրեմն նորան երևում է որ և իցէ

տեսիլք. էշերը շատ անգամ քնած ժամանակը զբում ու քացի են տալիս. թէ որ այդ անասունները երևակայութիւն չունենային, և հարկէ չէին կարող երազներ տեսնել: 8, Մարդս ընդունակ է առարկաները համեմատել և ընտրել նոցանից աւելի լաւն ու օգտակարը. անասունները նոյնպէս ընդունակ են համեմատել առարկաներն և ջոկել նոցանից իրանց հաւանածը. շունը նապաստակի յետևն ընկած ժամանակ՝ քանի մի ճանապարհներից ամենակարճն է ընտրում. միջիւնները բուները շինելիս շատ յարդերի ու ծղնօտների միջից այն են ջոկում, որին իրանց ուժը յաղթում է: Ապա ուրեմն անասուններն էլ հասկացողութիւն ունին, թէ և շատ քիչ, քան թէ մարդը: 9, Մարդս զգում է բաւականութիւն ու տհաճութիւն և ազատ կամքով կարող է շարժել իւր մարմինը. անասունները նոյնպէս զգում են բաւականութիւն կամ տհաճութիւն և մարդու պէս աշխատում են վայելել առաջինը և մերժել երկրորդը, այլ և ազատ կամքով շարժողութիւններ անել—անասունն էլ մարդու պէս կամք ունի: 10, Մարդս ունի բաղմութիւն հոգեկան գործողութիւններ, անանի մէջ էլ մենք կարող ենք գտնել նոցանից մի քանիսը— նա բարկանում է, վշտանում է, վախենում է, սիրում է, ատում է, ուրախանում է, զայրանում է,—միայն թէ այս բոլորը չի կարողանում արտայայտել խօսքով, այլ աղաղակներով, մարմնի շարժուածներով և գործողութիւններով: Բայց ունի մարդս մի այնպիսի բան, որ չունի ոչ մի անասուն և որը միայն մարդուն է սեպհական:

ԻՆՉՈ՞Վ Է ԳԵՐԱԶԱՆՑ ՄԱՐԴՍ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՑ

Ա.

Մենք արդէն ճանաչեցինք մարդու նմանութիւնները անասունների հետ. այժմ հարկաւոր է ցոյց տալ նորա տարբերութիւնը անասուններից:—

Մարդս ունի երկու ոտք և երկու ձեռք, ոչ մի անասուն չունի երկու ոտք ու երկու ձեռք,—թռչունն երկու ոտք և երկու թև ունի, սարդը վեց ոտք և ոչ մի ձեռք, ձին չորս ոտք և ոչ մի ձեռք, կապիկը չորս ձեռք և ոչ մի ոտք. միմիայն մարդն է, որ ոտքերի վերայ մնն գալիս՝ ազատ կերպով կարողանում է գործածել իւր ձեռքերն էլ: Այս է ահա այն ակնառոր տարբերութիւնը, որ կայ մարդու և անասունների մարմնի կազմութեան մէջ: Ուրիշ մի երևելի աչքի ընկնող տարբերութիւն չկայ: Բայց ինչպիսի՞ մեծ զանազանութիւն է երևում նոցա գործողութիւնների մէջ:

Երբ որ մեզ մօտ խօսում են մի օտար մեզ անհասկանալի լեզուով, մենք լսում ենք միայն խօսողի հնչիւնները, բայց չենք հասկանում դոցա միտքը: Կարդալ չիմացողը թէև մտիկ է տալիս գրքին, բայց չի հասկանում նորա միջի գրածը: Մենք զգում ենք որ ներսում բարբաջում է սիրտներս, բայց մինչև որ մեզ չեն բացատրում, չենք հասկանում, թէ ինչպէս և ինչու է լինում այդ: Մենք լսում ենք հողմի ձայնը, տեսնում ենք որ նա կոտրտում է ծառի ճղնիկները, սուլելով հնչում է խողովակների մէջ, շոշափում ենք նորան մեր մարմնով. բայց ինչի՞ց ենք իմանում որ այդ օդի շարժողութիւն է, և ինչպէս ենք գտնում նորա շարժողութեան պատճառը: Բաւական չէ մենակ տեսնել, լսել, շոշափել, հարկաւոր է հասկանալ էլ մեր տեսած, լսածն ու շոշափածը, հարկաւոր է իմանալ նորա նպատակն ու պատճառը:

Անասունն էլ մեզ պէս տեսնում, լսում ու շոշափում է, յիշում, երևակայում ու դատում է. բայց չի հասկանում, չի իմանում ոչ մէկ բանի նպատակն ու պատճառը, չի կարողանում ինքն իրան մի բան սովորել, թէև կան մի քանի անասուններ, որոնց մարդս կարող է զանազան գործողութիւններ սովորեցնել: Բոլոր տեսած ու լսածն հասկանալ, մեր շուրջն և մեր մէջ կատարուող գործերի պատճառն ու նպատակն իմա-

նալ աւելի և աւելի բան սովորելու կարողութիւն ունենալ— միմիայն մարդուն է սեպհական, այդպիսի ընդունակութիւնն անուանվում է բանականութիւն, որից զուրկ են անասունները:

Մի վատ բան անելուց յետոյ, թէև անելիս հաճելի եղած լինէր մեզ, զգում ենք որ այն չենք արել, ինչ որ հարկաւորն էր. իսկ լաւ բան անելու ժամանակ, թէև անհաճոյ թուէր նա մեզ, զգում ենք որ այն արինք ինչ որ պէտք էր: Մենք ունինք մի այնպիսի ընդունակութիւն, որ շատ լաւ որոշում է բարին չարից. դա մեր խիղճն է: Անասունների մէջ խիղճ չի երևում:

Մենք շատ անգամ, ստիպում ենք մեզ, ոչ թէ այն բանն անել, որ դուրեկան ու ցանկանալի է, այլ այն որ պէտք է անել: Անասուններն այսպիսի կարողութիւն չունին. նոքա միշտ այն են անում, ինչ որ իրանց ախորժելի է: Այն ընդունակութիւնը, որով կարող են մարդիքն ստիպել իրանց միայն պէտքականն անել, սովում է կամք. Անասունը կամայականութիւն ունի բայց ազատ կամք չունի:

Անասունը ոչ մի ժամանակ չի զուարճանում ոչ գեղեցիկ ծաղկով. ոչ լաւ տեսարանով, ոչ սիրուն պատկերով. նա բաւականութիւն է զգում միայն այն բանից, որ օգուտ է տալի նորան, և որ հաճալի է նորա մարմնական զգաձութեանը: Նա զգում է առարկաներից նրան հասցրած զուարճութիւնը կամ օգուտը: Կատուն պատառոտում է խեխտ քնարիկն, առանց մի զուարճութիւն զգալու նորա սիրունիկ փետուրներից. մի և նոյն է անում նա սոխակի հետ էլ ամենևին ուշք չդարձնելով նորա հրաշալի երգին: Էշը սիրում է վարդ ուտել, բայց ամենևին ընդունակ չէ վայելել այդ սիրուն ծաղկի անոյշ հոտը: Մարդն է միայն, որ անընդհատ վայելութիւն է զգում Աստուծոյ գեղեցիկ արարածներից և այլ մարդկանց գեղեցիկ շինուածներից: Նորա հոգին ցնծում է աստղերին մտիկ տալիս.

թէպէտ և նոցանից չէ ստանում ոչ մի նիւթական օգուտ. նա զուարճանում է մի ճարտարաշէն արձան տեսնելիս, թէև մի կտոր պաղ մարմարիոնից նա ոչինչ օգուտ չի ստանում: Այս ընդունակութիւնը, որով վայելում է մարդս Աստուծոյ արարածների գեղեցկութիւնը, անուանվում է գեղասիրական զգացումն: Գեղասիրական զգացումն չունին անասունները, նա միմիայն մարդուն է տուած:

Միմիայն մարդն է, որ հասկացողութիւն ունի Աստուծոյ մասին թէ և չի տեսնում նորան. միմիայն մարդն է ընդունակ հաւատալ աշխարհի անտեսանելի Արարչին, սիրել նորան, աղօթել նորան, յուսալ նորա դթութիւնը և աշխատել կատարելու նորա կամքը: Այս ընդունակութիւնը շատ մեծ ու զգալի գերազանցութիւն է տալիս մարդուն անասուններից: Այն մարդը, որ մոռանում է Աստուծոյն, որ քան էլ խելք լինէր նա, աւելի է նման անասնի, քան թէ որ և եցէ մի վայրենի մարդ, որ չէ կարողանում հագուստ ու խրճիթ շինել իւր համար, բայց կանչում է աշխարհիս անտեսանելի Արարչի անունը:

Բ.

Այդ բոլոր ընդունակութիւնները—բանականութիւնը, խիղճը, կամքը, գեղասիրական զգայումը, Աստուծոյն հաւատալը նորան սիրելը և նորա վերայ յոյս կապելը՝ պատկանում են մի աներևոյթ էութեան: Այդ էութիւնը հոգին է, անմահ և բնական հոգին: Աստուած մարդուն ստեղծել է հողից, բայց ներշնչել է նորա մէջ այդ անմահ և բնական հոգին: Մեր մարմինը կփտի (կնեխի) և կդառնայ այնպիսի նիւթեր, որպիսիներից կազմուած էր նա, բայց մեր հոգին անմահ է և պիտի դառնայ նորա մօտ, ով որ տուել է նորան մեզ:

Այդ Աստուածային անմահ հոգին կարողութիւն է տալիս

մարդուն շատ բաներ անելու, որ ոչ մի անասուն չէ կարող անել։—

Մեր մէջ բնակուող հոգուն ենք պարտական, որ խօսքի ձիրքն ունինք։ Անասունն էլ մարդու նման արտայայտում է ձայնի զանազան հնչիւններով իւր ցանկութիւնները, իւր արտաքին ու ներքին զգածութիւնները։ Նոյն հաչելուց կարելի է ճանաչել, ուրախանում է նա թէ զայրանում. նորա կնձկնձալուց կարելի է ճանաչել, ցաւ է զգում նա թէ զուարճութիւն. նա մռմռում է, ոռնում է և սորանով է արտայայտում զանազան զգածութիւններ։ Բայց միմիայն մարդն է կարողացել բառեր հնարել իւր մտքերը, իւր դատողութիւններն առարկաների մասին արտայայտելու համար և այդ բառերը կապակցել իրարև մի կանոնաւոր ու իմաստալի խօսք (ճառ)։ Կապիկը թէպէտ ունի էլ այնպիսի լեզու ինչպիսին մարդը, բայց նա չի կարողանում խօսել, պատճառ՝ նա բանականութիւն չունի։ Թութակին մարդս սովորեցնում է մի քանի բառեր անգամ արտահնչելու. ուրեմն թութակի հասա լեզուն պէտք է կարենար արտահնչել բառեր, բայց ոչ թէ միայն լեզու, ոչ թէ միայն ձայնի գործարան է հարկաւոր խօսելու համար, այլ և բանականութիւն, որից զուրկ է թութակը։

Անասունն ինչ ընդունակութիւններով որ ծնում է, նոյն ընդունակութիւններովն էլ մեռնում է. բայց մարդս կարող է անդադար զօրացնել իւր ընդունակութիւնները, որովհետև նա խոհականութիւն ու կամք ունի։ Մարդս ի բնէ ունենալով աւելի նուազատես աչքեր քան թէ շատ անասուններ, յայտնագործել է հեռադիտակը, որով նշմարում է նա լուսնի վերայի սարերն ու ձորերը. ուսանում է մեզանից միլիոնաւոր վերստերով հեռու աստղերի ընթացքը։ Հնարել է նա մանրադիտակը (միկրոսկոպ), որով տեսնվում են այն ամենամանր անասունները, որոնց ոչ մի աչք կարող չէր տեսնել։ Մարդս կա-

ղող է իւր յիշողութիւնը զօրացնելով մոռահան չանել առարկաների անթիւ քանակութիւն. նա կարող է անհամեմատ բարձր, քան թէ անասունները զօրացնել իւր երևակայութիւնն և իւր խելքը. նա կրթում ու ազնուացնում է իրան միշտ և անդադար։

Մենք տեսնում ենք թէ ինչպիսի ճարտարութեամբ թռչունը հիւսում է իւր բունը, մեղուն շինում է իւր հացերը (շանները), սարդը գործում է իւր ոստայնը, այնպէս որ մարդս հազիւ թէ կարող էր այդպիսի ճարտարութիւն գործ դնել։ Եւ յիրաւի, շատ զարմանալի է, որ մեղուն ծնում է թէ չէ, հազիւ թողում է իւր բջիջը թէ չէ, իսկոյն գործի է կենում։ Նորան ոչ ոք բան չի սովորցնում, բայց ինքն հէնց որ ծնում է ճանաչում է իւր անելիքը։ Այդպիսի ընդունակութիւնն, որ ոչ թէ սովորում է անասունը այլ ունենում է ծնուելիս, ասվում է բնազդութիւն (ինստինկտ)։ Սա անասնի հոգեկան ընդունակութիւններից մէկն է, որի մասին մինչև հիմայ բան չենք ասել։ Աստուած իմանալով որ անասունները կարող չեն մարդու պէս իմացութիւններ սովորել և ստանալ, և որ կեանքի մէջ նորանց հարկաւոր էր սակայն ողքան և իցէ իմացութիւններ ունենալ, տուել է ամեն մի անասնի նորա կարևոր բնազդեցութիւնը։

Արարիչը մարդուն քիչ է տուել բնազդեցութիւն, անասնին, բայց դորա փոխանակ նա պարգևատրել է մարդուն բանականութեամբ, այսինքն այնպիսի ընդունակութեամբ, որով նա ուսանում է և իմանում է իրան հարկաւոր անթիւ բաներ։

Մեղուն աշխարհի սկզբից մինչև հիմայ շինում է իւր մեղրահացերը մի և նոյն կերպով. սարդերը հիւսում են իրանց ոստայններն այնպէս, ինչպէս հազարաւոր տարիներ յառաջ։ Բայց վերցրէք մի վայրենի մարդ, որ հազիւ կարողանում է մի գեանափոր բնակարան շինել անձը պաշտպանելու համար, և

համեմատեցէք նորան կրթեալ լուսաւորեալ մարդու հետ, որ ծածկել է երկրի երեսը գեղեցիկ քաղաքներով, հրաշալի ճարտարապետական շէնքերով, երկաթեայ ճանապարհներով, էլեքտրական հեռագրաթելերով, պարտէզներով, բուրաստաններով, մշակած անդերով. համեմատեցէք այն կրթված մարդու հետ, որ յայտնագործել է հազար տեսակ յարմար հագուստներ և իւր բնակարանը զարդարել է բազմաթիւ արհեստական առարկաներով,—և դուք կարող էք հասկանալ, թէ ինչքան մեծ տարբերութիւն կայ մարդու բնակութեան և անանի բնազդեցութեան մէջ:

Պէտք է ճշմարիտ ասել, որ մարդս իւր բանականութեամբ է միայն, որ կարողանում է իշխել երկրին և թագաւորել բոլոր անասունների վերայ, որոնցից շատերը չափազանց ուժեղ են նորանից: Փղի համար այնքան էլ հեշտ է ջարդել մարդուն, ինչքան որ մեզ համար հեշտ է ջարդել մկանը, բայց մարդս իւր բանականութեամբը ստիպում է նորան հնազանդիլ: Վագրն ու առիւծը քանի՞ պատիկ զօրեղ են մարդուց, բայց մարդս հնարել է վառօդը, որ գլորում է թէ փիղ, թէ վագր, թէ առիւծ:

Այդպէս աստուաձեռնօրէն է պարգևատրել Արարիչը մարդուն, իւր սիրելի արարածին: Անմահ, խոհական և աղատ հոգի, բանականութիւն, խելք, կամք, գեղասիրական զգացումն, հաւատ և սէր առ Աստուած,—այս բոլորը ամենաթանգագին աստուածային պարգևներ են:

ՀՐԱՇԱԼԻ ՏՆԱԿ

Մի հրաշալի տնակ եմ ճանաչում ես իւր բոլոր սարք ու կարգով: Նորա մէջ կայ աղօրիք, կայ և խոհանոց, որտեղ որ գիշեր ու ցերեկ տաք կերակուր է պատրաստվում: Այդ տան

մէջ անթիւ անցքեր ու ճանապարհներ կան, որոնցով ժիր ծառաները տանում—բաժանում են տաք կերակուրը տան բոլոր անկիւններում: Այդ տան մէջ կայ մի տեսակ որ անդադար գործում է գիշեր ու ցերեկ. ոչ մի րոպէ նորա աչքին քուն չէ գալիս և թրթռալով քշում է ժիր ծառաներին դէպի տան բոլոր անկիւնները, ուր որ հարկավորէ լինում կերակուր,—ըմպելիք կամ ջերմութիւն: Այդ տան մէջ մի մեծ դահլիճ կայ, որտեղ աղատաբար ներս է թափանցում մաքուր օդ: Երկու հատ լուսաւոր պատուհաններ էլ կան իրանց դռներով, որոնք գիշերը փակվում՝ ցերեկը բացվում են: Կենում է այդ տան մէջ նորա անտեսանելի տանուտէր: Այդ տանուտէրը թէև չէ երևում, բայց նա է միայն տան բոլոր կարգադրութիւնները անողը, նորա համար է շարժվում տնտեսը, նորա համար են գործում փոքրիկ ծառաները, նա է պատուհաններից դուրս նայողը, նորանց բաց անողը ու խփողը: Հէնց որ տանուտէրը դուրս գայ տանից, ամէն բան դադար կառնու—տնտեսն էլ չի թխթխկացնիլ, ծառաները կթողուն իրանց գործերը, և ամբողջ տան մէջ լռութիւն դատարկութիւն ու պաղութիւն կտիրէ, իսկ պատուհանները կփակվին իրանց դռներովը:

Բայց ուր կերթայ տանուտէրն ինքը.—Այնտեղ, որտեղից որ եկել է—երկինք: Աշխարհիս վերայ նա հիւր է միայն, իսկ առանց նորան տունը փուլ է գալիս:

ՄԻ ԲՈՒՐԴ ՀՈՂ

Մի բուռն հող ինձ կը ծածկէ միանգամ,
Երբ վաստակած դէպի հանգիստ ես կերթամ.
Այնուհետև ցաւից, վշտից ազատուած՝
Մահու քնով կընջեմ ես մեղմ հանգարտ,
Մինչև կանչէ գերեզմանից Եհովան:

Մի բուռն հող ինձ կլինի պատուական
Աւելի քան մի փառահեղ ծանրութիւն—
Ճարտարարուեստ ձեռքից չինած քարանիւթ.
Արդէն ցաւեր շատ օրերի ճնշեցին
Կեանքս, հոգիս, ծանրը ծանրը բեռներով։

Մի բուռն հող ինձ հերիք է բաւական.
Գիտեմ, ահա լինելու եմ ես անշուշտ
Որդների սև ճճիների կերակուր.
Բայց խաղաղ է գերեզմանի խորքումը,
Ցաւն ու վիշտը այն տեղ լուռ է և հանգիստ,
Քունը քաղցր և անխռով հանապազ.

Մի բուռն հող գուցէ ձգէ իմ վերայ
Բարեկամս տրտում դէմքով ու լացով
Եթէ միայն ունի ես մի անձրն,
Որ գալու էր գերեզմանիս տեսութիւն։
Այնուհետև կթեթևանար իմ վերայ
Ասուածու հողը գերեզմանիս միջումը։

---

* * 8 * *

Իմաստուն Սոկրատէսը շատ անգամ ասում էր. ես մենակ մի բան գիտեմ, այն է, որ ոչինչ չգիտեմ, բայց շատ ուրիշներ այդ էլ չգիտեն.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная библиотека
7/XI-1922
Именная Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2013

3935

<< Ազգային գրադարան

NL0061163